

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՆԺԵԼԱ ԱԼՅՈՇԱՅԻ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԼՂՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի համար

Գիտական
դեկան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Անահիտ Սերգեյի Մելքոնյան

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	12
1.1 ՈՒՍԿԵՐԻ ՄՆՄԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱՆԿՈՐՄԱՆ Առանձնահատկությունները շինարարության ոլորտում.....	12
1.2 ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ հայեցակարգային մոտեցումներն ու փուլերը	27
1.3 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ առանձնահատկությունները շինարարության ոլորտում	37
ԳԼՈՒԽ 2: ԼՂՀ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ	53
2.1 ԼՂՀ շինարարության ոլորտի զարգացման արդի միտումները.....	53
2.2 ԼՂՀ շինարարության ոլորտի ներդրումային ուսկերի համակարգային վերլուծություն	71
2.3 ԼՂՀ շինարարության ոլորտի ֆինանսավորման աղբյուրներն ու արդյունավետության գնահատումն էկոնոմետրիկ մոդելով	86
ԳԼՈՒԽ 3: ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆՈՒՂԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱԱՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	94
3.1 Շինարարության ոլորտում ներդրումային ուսկերի կարավարման պետական քաղաքականության կատարելագործման ուղղությունները ԼՂՀ-ում	94
3.2 Ներդրումային ուսկերի կարավարման կառուցակարգերի կատարելագործման ուղիները ԼՂՀ շինարարական կազմակերպություններում.....	106
3.3 Ներդրումային ուսկերի կատարելագործված կառուցակարգերի կիրառումը ԼՂՀ շինարարության ոլորտում	115
(«Պանտ» ՍՊԸ-ի օրինակով)	115
Եզրակացություններ և առաջարկություններ.....	135
Օգտագործված գրականության ցանկ.....	156

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին Արցախի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային վերափոխումները նշանակալի ազդեցություն են ունեցել հասարակական հարաբերությունների ողջ համակարգի վրա՝ տնտեսական որոշումների կայացման մեխանիզմների վերանայման անհրաժեշտությունը դարձնելով առաջնահերթ խնդիր: Կապված ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՂՀ-ում տնտեսական միջավայրի անորոշության մակարդակի բարձրացման և տնտեսական իրավիճակի փոփոխականության աճի հետ՝ ֆիրմաները, ներառյալ շինարարության ոլորտում տնտեսական գործունեություն ծավալողները, գործում են բարձր ռիսկայնությամբ աչքի ընկնող միջավայրում: Շատ կազմակերպություններ կրում են կորուստներ՝ կանգնելով սնանկացման վտանգի առջև:

ՀՂՀ-ի ձևավորումը համընկավ ԽՍՀՄ-ի փլուզման և դրանով պայմանավորված տնտեսական հարաբերությունների համակարգի արմատական կերպափոխումների հետ: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունները պարտադրված էին վարչական ամական տնտեսական համակարգից անցում կատարել ազատ շուկայական հարաբերությունների, ինչը պահանջում էր մշակել տնտեսության կառավարման սկզբունքորեն նոր մոտեցումներ և մեխանիզմներ: Առաջնային էր դարձել առկա տնտեսական իրավիճակին համահունչ ռիսկերի կառավարման համակարգի ձևավորումն ու կիրառման հնարավորությունների բացահայտումը, ինչին այդքան էլ մեծ ուշադրություն չէր դարձվել ԽՍՀՄ-ի տարիներին՝ պայմանավորված պլանային տնտեսության գործողության մեխանիզմի առանձնահատկություններով:

Օրենքութիվության համար պետք է նշել, որ այս բնագավառում կատարված մեծ թվով գիտագործնական հետազոտությունների արդյունքում կուտակված փորձը հնարավորություն է տալիս իրականացնել ժամանակի պահանջներից բխող նոր հետազոտություններ՝ բացահայտելու արդի պայմաններում արդեն իսկ գոյություն ունեցող մոտեցումների կիրառման հնարավորություններն ու մշակելու նորերը: Այս ոլորտում առկա հետազոտությունների և ՀՂՀ տնտեսության զարգացման

առանձնահատկությունների վերլուծության արդյունքում հնարավոր է բացահայտել ոիսկերի կառավարման առավել արդյունավետ մեխանիզմ ու այն ադապտացնել ԼՂՀ-ի շինարարության ոլորտի զարգացման պահանջներին:

ԼՂՀ-ի ծևավորման պահից սկսած՝ տեղի իշխանությունները որդեգրել են ներդրումների խրախուսման միջոցով շինարարության ոլորտի զարգացման ռազմավարություն, ինչը ենթադրում է բարենպաստ ներդրումային միջավայրի ծևավորում և համապատասխան ենթակառուցվածքների զարգացում: Վերջինները հանդիսանում են ներդրումների ներգրավման հիմնական պայմանները՝ հիմք նախապատրաստելով երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման համար: Պետք է նկատել, որ ներդրումային քաղաքականությունը բարենպաստ ներդրումային միջավայրի ծևավորման հիմքն է և այն պետք է միտված լինի արդյունավետ ներդրումային ծրագրերի խրախուսմանն ու դրա շնորհիվ տնտեսական զարգացման բարձր տեմպերի ապահովմանը: Շինարարության ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայրի ծևավորումը կիսթանի մասնավոր ներդրումները՝ բազմարկչային Էֆեկտով տարածվելով ողջ տնտեսական համակարգի վրա: Արդյունքում՝ կաճի զբաղվածության մակարդակն ու կրճատվի աղքատությունը՝ հիմք ծևավորելով կայուն տնտեսական զարգացման համար:

Չնայած այն հանգամանքին, որ ԼՂՀ-ի շինարարության ոլորտը ներդրումային գրավչության մեծ ներուժ ունի, այդուհանդերձ բավականին ցածր է այս ոլորտում օտարերկրյա ներդրողների ակտիվության մակարդակը: Հիմնական պատճառը, թերևս, ոիսկայնության բարձր մակարդակն է, ինչը պայմանավորված է թե տարածաշրջանի քաղաքական անկայունությամբ, թե ԼՂՀ-ի աշխարհագրական դիրքով ու դրանով պայմանավորված տնտեսական մեկուսացվածությամբ, ոչ կատարյալ իրավական դաշտը, ինչպես նաև ֆինանսական ու շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը:

Պետք է նկատել, որ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական ոիսկերի շրջանակը բավականին լայն է, ինչն իր ուղղակի ազդեցությունն է ունենում ներդրումային նախագծերի մշակման և իրականացման գործընթացների վրա: Այդ ոիսկերն ընդգծված դրսնորվում են հատկապես շինարարության ոլորտում, որտեղ առավել ցայտուն է տնտեսական համակարգի զարգացման ընդհանուր

օրինաչափությունների ազդեցությունը: Շուկայական տնտեսության պայմաններում գործնականում անհնար է բացարձակ ճշգրտությամբ կանխատեսել, թե շինարարության ոլորտում հատկապես ինչ ռիսկերի կարող է բախվել ներդրողը, առավել ևս ինչպիսի ազդեցություն կունենան դրանք: Այդ խնդիրներն առավել սուր դրսնորում ունեն **ԼՂՀ-ում՝** պայմանավորված աշխարհաքաղաքական պայմաններով: Արդյունքում՝ շատ ներդրումային ծրագրեր, այդ թվում այնպիսինները, որոնք տնտեսապես հիմնավորված են և արդյունավետ, կյանքի չեն կոչվում:

Վերջին տարիներին **ԼՂՀ-ի** շինարարության ոլորտում իրականացվել են լայնամասշտաբ բարեփոխումներ: Սկզբունքորեն վերափոխվել են պետական կառավարման մեխանիզմներ՝ վարչական կառավարման համակարգից անցում է կատարվել ներդրումային գործունեության պետական կարգավորման համակարգի, սակայն ոլորտի զարգացման տեսանկյունից նշանակալի տեղաշարժեր տեղի չեն ունեցել:

Պետք է նկատել, որ վերջին տարիներին շինարարության ոլորտում ներդրումային ակտիվության նվազում նկատվում է ոչ միայն **ԼՂՀ-ում**, այլ ողջ աշխարհում՝ կապված 2007-09 ֆինանսատնտեսական ճգնաժամի ձևավորման ու զարգացման գործընթացների առանձնահատկությունների հետ: ԱՄՆ-ի հիպոթեքային շուկայից սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամն իր անմիջական բացասական ազդեցությունն ունեցավ շինարարության ոլորտի վրա՝ նոր, ավելի խիստ պահանջներ առաջադրելով ներդրողներին: Շինարտադրության ոլորտի արդյունքների նկատմամբ պահանջարկի դինամիկ անկումը սրում է մրցակցությունը՝ պահանջելով ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիական լուծումներ: Այս ամենի հետևանքով աճում է շինարարության ոլորտում ներդրումային նախագծերի իրականացման ռիսկայնության աստիճանը՝ պայմանավորելով ռիսկերի կառավարման նոր սկզբունքների և մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

Շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման համակարգը կարող է արդյուանվետ լինել միայն համալիր մոտեցման դեպքում: Դրա համար անհրաժեշտ է հանգամանալից վերլուծել այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են

շինարարության ոլորտում ներդրումային ակտիվության դինամիկան, ներդրումային հոսքերի կառավարման մեխանիզմները, զարգացման ժամանակակից միտումներն ու մարտահրավերները:

Վերջին տարիներին ՀՂՀ-ի շինարարության ոլորտի զարգացման տեմպերը դինամիկ նվազում են՝ հիմնականում պայմանավորված ներդրումների ոչ բավարար մակարդակով: Արդյունքում՝ խորանում է ՀՂՀ-ի տնտեսության զարգացման անհամաչափությունն ի վնաս շինարարության ոլորտի՝ իր հերթին նպաստելով ոլորտում կատարվող ներդրումների նվազմանը: Այս գործընթացի տրամաբանական շարունակությունն անցանակալի հետևանքներ կարող է ունենալ ՀՂՀ-ի տնտեսության համար՝ հանգեցնելով գործազրկության աճի և տնտեսական զարգացման տեմպերի նվազման: Իրավիճակը շտկելու առաջնահերթ քայլերից է շինարարության ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը, ինչն անհնար է առանց ոիսկերի կառավարման արդյուանավետ համակարգի մշակման և ներդրման: Ըստ էության, արդի պայմաններում առաջացել է ՀՂՀ-ի շինարարության ոլորտում ներդրումային ոիսկերի կառավարման նոր համակարգի մշակման անհրաժեշտություն, ինչն էլ պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության գլխավոր նպատակը ՀՂՀ-ի շինարարության ոլորտի հիմնական ոիսկերի առանձնահատկությունների հետազոտության հիման վրա ներդրումային ոիսկերի վերլուծության ու քանակական գնահատման նոր մոտեցումների ու կառավարման մեխանիզմների մշակումն է՝ ուղղված դրանց նվազեցմանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Նշված նպատակին համապատասխան աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Շինարարական կազմակերպությունների ներդրումային ոիսկերի կառավարման արդի մեթոդների և առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- Ոիսկերի դասակարգում և շինարարության ոլորտում ներդրումային նախագծերի ոիսկերի նվազեցման մեխանիզմների բացահայտում,

- ԼՂՀ-ի շինարարության ոլորտի ներդրումային գրավչության գնահատում և հիմնական խնդիրների բացահայտում,
- Շինարարական կազմակերպությունների ներդրումային ոիսկերի կառավարման համատեքստում համակարգային և ծրագրանպատակային մեթոդաբանության կիրառման հնարավորությունների հետազոտություն,
- Տնտեսական զարգացման արդի պայմաններում ներդրումային նախագծերի ակտիվացման գործընթացում պետության դերի վերահմաստավորում,
- Ոիսկի պայմաններում շինարարության ոլորտի և ընդհանրապես տնտեսության զարգացման տեմպերի վրա ներդրումային նախագծերի ազդեցության գնահատում,
- Ներդրումային ոիսկերի հաշվառմամբ որոշումների կայացման գործընթացի առանձնահատկությունների վերլուծություն,
- Շինարարության ոլորտում ներդրումային ոիսկերի գնահատման մեթոդաբանության վերլուծություն և կատարելագործում,
- Շինարարության ոլորտում ներդրումային ոիսկերի կառավարման գործընթացի պարզեցման մեխանիզմների բացահայտում,
- Շինարարության ոլորտում ներդրումային ոիսկերի կառավարման արդյունավետության գնահատում,
- Շինարարական կազմակերպություններում ներդրումային ներուժի զարգացման ռազմավարության մշակում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը շինարարության ոլորտում ներդրումային գործընթանցներն ու դրանց հետկապած ոիսկերի բացահայտումն է, իսկ առարկան ԼՂՀ շինարարության ոլորտում ներդրումային ոիսկերի կառավարման գործընթացի հետ կապված հարաբերությունների նոր համակարգի ձևավորումն է:

ԼՂՀ շինարարության ոլորտում առկա ոիսկերի առանձնահատկությունների հետազոտության հիման վրա ներդրումային ոիսկերի կառավարման մեխանիզմների մշակումն՝ ուղղված դրանց նվազեցմանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման մեթոդների, մոտեցումների, սկզբունքների և մեխանիզմների վերլուծությանն են նվիրված մի շարք օտարերկրյա և հայազգի հեղինակների հետազոտություններ: Նրանց շարքում առավել արժեքավոր են հատկապես Վ. Ս. Բարդի, Բ. Ֆ. Զայցևի, Վ. Ի. Կնորինգի, Ն. Ա. Նովիցկու, Ե. Ա. Օլեյնիկովի, Վ. Կ. Սենչագովի, Վ. Մ. Սերովի, Ե. Մ. Չետիրկինի աշխատությունները, ինչպես նաև հայազգի գիտնականներ Ն. Յու. Սիմոնյանցի, Ա. Ա. Գասպարյանի, Մ. Ս. Մելքոնյանի, Ա. Գ. Թամրազյանի, Վ. Ս. Տոնոյանի և այլոց հետազոտությունները:

Հետազոտության թեմային առնչվող գիտական գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ գիտնականների շրջանում չկա միակարծություն այնպիսի առանցքային հարցերի շուրջ, ինչպիսիք են շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման սկզբունքները, մոտեցումները և մեխանիզմները: Ավելին, սկզբունքորեն տարբերվում են շինարարության ոլորտում ռիսկերի գնահատման մոտեցումներն ու մեթոդաբանությունը, ինչն էլ պայմանվորում է երբեմն իրարամերժ կարծիքների գոյությունը:

Այդուհանդերձ, գիտական գրականության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ համակողմանիորեն ուսումնասիրված չեն շինարարության ոլորտում դրսևորվող հիմնական ռիսկերն ու դրանց առանձնահատկությունները, հետևապես բացահայտված չեն շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման հիմնախնդիրների հաղթահարման հիմնությները, ինչն էլ այս ոլորտում կատարվող հետազոտությունները դարձնում է առավել քան պահանջված:

Ասենախոսության նպատակներին համապատասխան, մեր կողմից կիրառվել են գիտական ճանաչողության (արստրակցիայի, վերլուծության և համադրման, արտածման և մակածման, պատմական և տրամաբանական) մեթոդները, որոնք թույլ են տալիս գտնել գիտական դրույթների տրամաբանական կառուցվածքը, ընդգծել դրանց ուժեղ ու թույլ կողմերը: Դրանք հնարավորություն են տվել լուծել մեր կողմից առաջադրված խնդիրները:

Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական տնտեսագետների աշխատությունները:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների, քաղաքաշինության նախարարությունների կողմից հրապարակվող պաշտոնական տեղեկագրերը: Կատարված հետազոտության համար օրենսդրական հիմքեր են հանդիսացել ՀՀ օրենքները և նորմատիվադիրավական ակտերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության ընդհանուր նորույթն այն է, որ մշակվել և հիմնավորվել են շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ, ինչպես նաև բացահայտվել են ներդրումային-շինարարական գործունեության ենթակառուցվածքների զարգացման նոր ձևեր և ուղղություններ:

1. Մշակվել է ներդրումային ռիսկերի համալիր կառավարման կառուցակարգ՝ հիմնվելով շինարարության ոլորտում ներդրումային գործունեության խթանման ներուժի գնահատման հիմնական չափորոշիչների ձևավորման սկզբունքների վրա:

2. Ռիսկ մենեջմենթի յուրաքանչյուր փուլում ռիսկերի կառավարման հետ կապված որոշումների ընդունման ալգորիթմի հիմքի վրա մշակվել է ներդրումային ռիսկերի կառավարման կազմակերպչատնտեսական այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս կոորդինացնել կառավարման տարբեր մակարդակներում ռիսկերի կառավարմանն ուղղվող ջանքերը, ապահովել դրանց գործառնական միասնականությունն ու էականորեն բարձրացնել ռիսկերի ախտորոշման համակարգի ճկունության մակարդակը:

3. Ֆինանսավորման տարբեր ձևերի հաշվառմամբ կառուցվել է ՀՀ շինարարության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության գնահատման տնտեսական մոդել:

Ատենախոսության գործնական և տեսական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ

հետազոտության ընթացքում բացահայտված դրույթները կարող են օգտագործվել ՀՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային ծրագրերի կառավարման մեխանիզմների, ներդրումային ռիսկերի կառավարման մոտեցումների, ինչպես նաև ներդրումային ռեսուրսների ռացիոնալ բաշխման գործընթացների կատարելագործման նպատակով: Արդյունքում՝ ՀՀ շինարարության ոլորտում կրարձրանա ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը՝ նպաստելով տնտեսության մյուս ճյուղերի և ոլորտների զարգացմանը:

Ատենախոսության շրջանակներում կատաված հետազոտությունները կարող են ունենալ նաև ընդգծված գիտական նշանակություն օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականության մշակման համար: Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել ճյուղային տնտեսագիտության, շինարարության էկոնոմիկայի, ռիսկերի կառավարման դասընթացների դասավանդման գործընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության արդյունքներն արդեն իսկ ստացել են գործնական կիրառություն շինարարության ոլորտում տնտեսական գործունեություն ծավալող «ՊԱՆՏ» ՍՊԸ-ում, ինչն իր անմիջական արտացոլումն է գտել 2000-2016թթ. նշված կազմակերպության տնտեսական ցուցանիշներում: Սույն հետազոտության արդյունքների կիրարկումը «ՊԱՆՏ» ՍՊԸ-ին հնարավորություն է տվել

- կատարելագործել ներդրումային ռիսկերի կառավարման մոտեցումները՝ նվազագույնի հասցնելով անցանկալի կորուստները,
- արդյունավետ տեղաբաշխել ներդրումային միջոցները՝ էականորեն բարձրացնելով շահութաբերության մակարդակը,
- միավորել կառավարման տարբեր մակարդակներում ռիսկերի կառավարմանն ուղղված ջանքերը՝ ապահովելով արդյունավետության առավել բարձր մակարդակ:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Արցախի Պետական Համալսարանի Կառավարման ամբիոնի նիստում: Հետազոտության հիմնական արդյունքները ներկայացվել են 2011 թ.-ին ՌԴ-ի Պուշկին և 2012թ.-ին Դուբնա քաղաքներում կազմակերպված միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության

մեջ ներկայացված հիմնական մոտեցումները և հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված գիտական վեց հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն շարադրված է 158 էջ ծավալով, պարունակում է 16 աղյուսակ, 26 գծապատկեր:

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 ՈՒՍԿԵՐԻ ՄՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵՅՈՒՆԸ և ԴՐԱՆԿՈՐՄԱՆ Առանձնահատկությունները շինարարության ոլորտում

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած առևտրային կազմակերպության գլխավոր նպատակն առավելագույն շահույթ ստանալն է: Դինամիկ զարգացող տնտեսական հարաբերությունների համակարգում յուրաքանչյուր ձեռներեց պարտադրված է գործել սուր մրցակցության պայմաններում, ինչն էլ ենթադրում է ռիսկայնության բարձր մակարդակ: Դա է պատճառը, որ ժամանակակից պայմաններում որևէ առևտրային կազմակերպություն ապահովագրված չէ կորուստներ կրելու կամ ցանկալի արդյունքի չհասնելու հավանականությունից: Ըստ էության, ցանկացած տնտեսական գործունեություն իր բնույթով ռիսկային է, ինչից էլ հետևում է, որ ռիսկը տնտեսական գործունեության մշտական ուղեկիցն է:

Ի տարբերություն վարչական տնտեսական համակարգի՝ շուկայական տնտեսության պայմաններում ռիսկի գործոնն էլ ավելի է կարևորվում: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ եթե վարչական տնտեսական համակարգում ներդրումների հիմնական ֆունկցիան հիմնական ֆոնդերի «գործարկումն» էր, ապա այժմ ներդրումների դերն ու նշանակությունն առավել առանցքային են և համընդգրկուն: Ներդրումներին է վերապահված կայուն տնտեսական զարգացման ապահովման հիմնական շարժիչ ուժի դերը, ինչն իր արտացոլումն է գտնում հիմնական մակրոտնտեսական փոփոխականների համատեքստում: Մասնավորապես, արդյունավետ ներդրումային քաղաքականության շնորհիվ ստեղծվում են նոր աշխատատեղեր՝ հանգեցնելով գործարկության կրճատմանը, օպտիմալացվում է տնտեսության կառուցվածքային

հիմքը՝ հարմարվելով տնտեսական զարգացման օբյեկտիվ պահանջներին, վերջին հաշվով, աճում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը՝ հանգեցնելով բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Պետք է նկատել, որ ներդրումային ակտիվության ցանկալի մակարդակի ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ ներդրումային միջավայր:

«Ներդրումային միջավայր» տնտեսագիտական կատեգորիան տարբեր տնտեսագետների կողմից մեկնաբանվել է տարբեր կերպ, ինչը պայմանավորված է դրա բազմաբովանդակությամբ և դիտարկման տեսանկյունների բազմազանությամբ:


Այսպես, Ա. Ֆոլոմևն ու Վ. Ռեզովը ներդրումային միջավայրը բնութագրում են որպես սոցիալական, տնտեսական, կազմակերպական, իրավական, քաղաքական, կրթական և մշակութային նախապայմանների համակարգ, որոնք պայմանավորում են տվյալ տարածաշրջանի ներդրումային գրավչությունն ու նպատակայնությունը¹:

Ըստ Մ. Մելքոնյանի՝ ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական, կենցաղային, հոգեբանական և այլ այնպիսի գործոնների ամբողջություն է, որը, վերջին հաշվով, կանխորոշում է ներդրումների ռիսկի աստիճանը, դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունները և կենտրոնացնում ներդրողի կոնկրետ շահերն այնպիսի գործարար տարածքում և կոնկրետ ժամանակահատվածում, որտեղ ներդրողից պահանջվում է ունակությունների և ջանքերի խտացում²:

Փաստորեն, ներդրումային միջավայրն, ըստ հիմնական կառուցվածքային բաղադրիչների, կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով /Գծապատկեր1.1.1/.

¹Фоломьев А., Ревазов В. Инвестиционный климат регионов России и пути его улучшения // Вопросы экономики, 1998, № 9, с.46-54

²Մ. Մելքոնյան «Բիզնես էկոնոմիկա», Երևան, 2002, էջ 397



Գծապատկեր 1.1.1. Ներտրումային միջավայրի կառուցվածքն՝ ըստ հիմնական բաղադրիչների

Ներտրումային միջավայրի բարենպաստ կամ անբարենպաստ լինելու հանգամանքը կախված է վերոնշյալ բաղադրիչներից:

Բարենպաստ ներտրումային միջավայրը բնութագրվում է ներտրումային մեծ պոտենցիալով և ցածր ռիսկայնությամբ, ինչը նպաստավոր պայմաններ է ապահովում ներտրումային գործունեության ակտիվության մակարդակի բարձրացման և ներտրումների ներհոսքի համար: Ըստ էության, յուրաքանչյուր ներդրող դիմում է գիտակցված ռիսկի՝ ակնկալելով դրական արդյունք, սակայն չբացառելով կորուստներ կրելու հավանականությունը:

Ռիսկը, որպես տնտեսագիտական կատեգորիա, բազմակողմանիորեն ուսումնասիրվել է միայն 19-րդ դարից սկսած: «Ռիսկ» բառի ծագման վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ հետազոտողներ արտահայտում են այն տեսակետը, որ այդ բառն առաջացել է հունարեն *rīsikōn*, *rīdsa* (ժայռ) բառից: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ այն ունի իսպանական (*rīsco*՝ ժայռ, պատնեշ) կամ

իտալական (risiko-վտանգ, սպառնալիք) ծագում³: Տարածված է նաև այն տեսակետը, որ «ոիսկ» բառն առաջացել է լատինական “risicare” բառից, որը նշանակում է «վճռել» կամ «որոշում ընդունել»: Այդ իմաստով ոիսկը կարելի է նույնացնել ազատ ընտրության, այլ ոչ թե անխուսափելի բացասական ելքի հետ⁴:

Տնտեսագիտական գրականության մեջ որպես ոիսկի հոմանիշ լայնորեն օգտագործվում է «սպառնալիք» (hazard) եզրույթը: Մոտ մեկ հարյուրամյակ այդ հասկացությունները զուգահեռաբար օգտագործվել են, և միայն 20-րդ դարում «ոիսկ» բառը վերջնականապես հաստատվեց որպես մասնագիտական եզր⁵:

Տնտեսագիտության մեջ չկա միակարծություն «ոիսկ» հասկացության մեկնաբանման հարցում: Տարբեր հեղինակներ այն բնորոշում են տարբեր դիտանկյուններով: Դասական տնտեսագիտության հայեցակարգերի հիմքում ընկած է այն հիմնական սկզբունքը, որ ոիսկը ներկայացվում է որպես վտանգի հնարավորություն և կամ կորուստներ կրելու հավանականություն, ընդ որում, վերջինս կարող է դրսևորվել նաև չստացված եկամտի տեսքով: Այսինքն, անտեսվում է ոիսկի, որպես ձեռնարկատիրական գործունեության անբաժանելի ուղեկցի, շահույթի աղբյուրի դերը: Պետք է նկատել, որ առանց ոիսկի դիմելու հնարավոր չէ շահույթ ստանալ, և այս առումով էլ ոիսկը պետք է դիտարկել նաև որպես շահույթի աղբյուր:

Ոիսկերի դասական տեսությունը սուր քննադատության ենթարկվեց, որի արդյունքում ձևավորվեց նոր դասական տեսությունը: Ըստ այդ տեսության՝ անորոշության պայմաններում ներդրողը պետք է առաջնորդվի երկու ենթադրություններով⁶.

1. սպասվող շահույթի մեծություն,
2. դրա տատանման հավանականություն:

Այս պայմաններում ներդրողը պետք է ընտրի այնպիսի ռազմավարություն, որը նվազագույնի է հասցնում շահույթի տատանման լայնույթը /ամպլիտուդը/:

³Валерий Романов УлГУ, Г.Ульяновск, РОССИЯ ° Понятие рисков и их классификация как основной элемент теории рисков. Инвестиции в России. №12 2000г. с. 41-43

⁴ Инвестиционный менеджмент: учебное пособие / кол. Авторов; под ред. В.В. Мищенко. - 2-е изд., перераб. И доп. - М.: КНОРУС, 2008. с. 322

⁵Տես Վалерий Романов նշվաշխ

⁶ Маршалл А. Принципы экономической науки. Том 2 М.: Прогресс, 1993 стр. 89

Ժամանակակից տնտեսագիտության մեջ ոիսկն առավել համակողմանի բնութագրվում է գործառության մոտեցման համատեքստում, որտեղ կարևորությունը տրվում է ոիսկի հիմնական տեսակների տարանջատմանը: Ըստ այդմ, առանձնացվում են ոիսկի հետևյալ հիմնական տեսակները.

1. Ոիսկ, որը դրսենորվում է ցանկալի դրական արդյունքի հասնելու մեջ հավանականություն ունեցող մի քանի այլընտրանքային տարբերակների առկայության պայմաններում: Այս դեպքում ցանկալի ելքային արդյունքի հասնելու հավանականությունը կախված է ոչ այնքան կոնկրետ ներդրողի վարքագծից, որքան արտաքին միջավայրի այնպիսի փոփոխականներից, ինչպիսիք են ինֆյացիան, մրցակցությունը, տնտեսական ցնցումները և այլն:

2. Ոիսկ, երբ ցանկալի վերջնական արդյունքի կարելի է հասնել միայն գիտականորեն հիմնավորված անհատականացված գործողությունների շնորհիվ, այսինքն ցանկալի արդյունքի հասնելու հավանակություն թեև կա, սակայն, այն բավականին փոքր է և հիմնականում կախված է ներդրողի ճշգրիտ տնտեսական որոշումներից: Այս դեպքում կոնկրետ կազմակերպությունը պետք է հստակ գնահատի թե՛ իր արտադրական, թե՛ ֆինասական ներուժները, կարողանա օպտիմալ օգտագործել տեխնիկական և մարդկային ռեսուրսները, որպեսզի հասն ցանկալի արդյունքի:

3. Ոիսկ, երբ տնտեսավարող սուբյեկտը այլընտրանքային տարբերակներից որևէ մեկին առաջնայնություն տալու և այն իրականացնելու գործընթացներում կարող է առաջնորդվել թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ ընկալումներով: Այս դեպքում գործունեությունը բնութագրվում է միջին ոիսկայնությամբ:

Շնորհիվ ոիսկի այս տեսակների տարանջատման՝ տնտեսավարող սուբյեկտները կայացնում են որոշումներ և քայլեր ձեռնարկում դրանք իրացնելու համար: Այդուհանդերձ, յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ իր գործունեության ողջ ընթացքում բախվում է ոիսկերի՝ պարտադրված լինելով կայացնել ոիսկերի կառավարման վերաբերյալ տարաբնույթ որոշումներ: Այս պայմաններում առանցքային նշանակություն է ստանում ոիսկերի տարբեր տեսակների

առանձնացումը՝ ինչը ենթադրում է ռիսկերի դասակարգում ըստ տարրեր հատկանիշների:

Ռիսկերի համակարգված և առավել ընդգրկուն դասակարգման կարելի է հանդիպել Ա. Իվանովի, Ս. Օլեյնիկովի և Ս.Բոչարովի հեղինակած «Ռիսկի կառավարում» աշխատությունում⁷: Ըստ նրանց՝ ռիսկերը կարելի է ներկայացնել երկու մեծ խմբով.

1. **Զուտ ռիսկեր:** Այս դեպքում կազմակերպությունը կարող է միայն կորուստ կրել կամ գրոյական շահույթ ստանալ: Զուտ ռիսկերի շարքին են դասվում բնակլիմայական, էկոլոգիական, քաղաքական, տրանսպորտային ռիսկերն ու ձեռնարկատիրական ռիսկերի մի մասը /գույքային, արտադրական, առևտրային/:

2. **Սպեկուլյատիվ կամ գործառնական ռիսկեր:** որոնք ենթադրում են ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունք ստանալու հավանականություն⁸:

Ռիսկերի դասակարգման համանման մոտեցմամբ է առաջնորդվում նաև Մ. Մաքսիմովը⁹:

Ըստ նրա զուտ ռիսկերի շարքին են դասվում արտադրական, տրանսպորտային, էկոլոգիական, քաղաքական, գույքային և բնակլիմայական ռիսկերը:

Շինարարության ոլորտում արտադրական ռիսկերը կապված են տարաբնույթ գործոնների հետևանքով գործունեության դադարեցման վտանգի հետ: Դա կարող է տեղի ունենալ հումքի ոչ արդյունավետ օգտագործման, աշխատաժամանակի անհարկի կորուստների, նոր, սակայն անարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, հիմնական արտադրական ֆոնդերի ֆիզիկական և բարոյական մաշվածության հետևանքով¹⁰:

Շինարարության ոլորտին բնորոշ են նաև բնակլիմայական ռիսկեր, որոնց խթին են դասվում երկրաշարժերը, սողանքները, ջրհեղեղները և այլն: Պետք է նկատել, որ բնակլիմայական ռիսկերը պայմանավորված են բնության և կլիմայի

⁷ Иванов А.А., Олейников С.Я., Бочаров С.А. РИСК-МЕНЕДЖМЕНТ. Учебно-методический комплекс. – М.: Изд. центр ЕАОИ, 2008. – стр. 27-38

⁸Риск в экономике: Учебное пособие для вузов/Под.Ред.Проф.В. А. Швандара-М.:ЮНИТИ-ДАНА,2002,стр 33.

⁹Максимцов М.М., Игнатьева А.В., Комаров М.А. Менеджмент. М.:Банки и биржи; ЮНИТИ,1998 стр. 213-218

¹⁰ Фомичёв А.Н. Риск-менеджмент. Издательско-торговая корпорация "Дашков и К", 2004. Стр. 26

անկանխատեսելի փոփոխություններով: Դրանք գրեթե անկանխատեսելի են, տեղի են ունենում անականկալ ձևով՝ էական վնասներ հասցնելով տնտեսավարող սուբյեկտներին¹¹:

Շինարարության ոլորտում դրսնորվող քաղաքական ռիսկերը կապված են պետական քաղաքականության հետևանքով առաջացող հնարավոր կորուստների հետ: Քաղաքական ռիսկերի շարքին կարելի է դասել նաև ներքաղաքական ցնցումներն ու պատերազմները¹²:

Շինարարության ոլորտին բնորոշ են նաև գույքային ռիսկերը, որոնք կապված են ձեռներեցի կամքից ու գործողություններից անկախ, գույքի լրիվ կամ մասնակի կորստի հետ: Գույքային ռիսկերի դրսնորման պատճառներից են աղետները, վթարային իրավիճակները, գույքի հափշտակումը, գույքի մասնակի կամ լրիվ կորուստը տեղափոխման ժամանակ, ազգայնացման վտանգը և այլն¹³:

Սպեկուլյատիվ ռիսկերի խումբն իր հերթին բաղկացած է երկու մեծ ենթախմբից՝

1. առևտրային կամ կոմերցիոն ռիսկեր,
2. ֆինանսական ռիսկեր¹⁴:

Պետք է նկատել, որ սպեկուլյատիվ ռիսկերը, անկախ ներազդման մեխանիզմից և աղեցության չափից, էականորեն կարող են մեծացնել պլանավորված եկամտի տատանման ամպլիտուդը: Դա է այն հիմնական պատճառը, որ վերջինները գուգահեռվում են ներդրումային ռիսկերի համակարգում: Ելնելով այս հանգամանքից՝ առավել տարածված է առանձնացնել սպեկուլյատիվ ռիսկերի հետևյալ տեսակները¹⁵:

1. Օգուտների մեծացման ռիսկ,
2. Եկամտաբերության նվազման ռիսկ, որը կապված է տոկոսային և վարկային ռիսկերի հետ,

¹¹Максимцов М.М., Игнатьева А.В., Комаров М.А. Менеджмент. М.:Банки и биржи; ЮНИТИ,1998 стр. 213-218

¹²Root, Franklin R. "US Business Abroad and the Political Risks" \ MSU Business Topics, Winter 1968.


¹³<http://www.univerlib.ru/page/214-imushhestvennye-riski-3172.html>

¹⁴Шапкин А. С., Шапкин В. А Теория риска и моделирование рисковых ситуаций: Учебник – М.; Издательско-торговая корпорация “ДашковиКо”, 2005. Стр. 44

¹⁵Москвин В. Управление рисками при реализации инвестиционных проектов. М.: Изд-во ФиС. 2004 г. С. 190.

3. Ուղղակի ֆինանսական կորուստների ռիսկ, որը կապված է բիրժային և սնանկացման ռիսկերի հետ:

Ենելով վերը կատարված քննարկուներից՝ կարելի է ներկայացնել ռիսկերի հետևյալ ընդհանրական դասակարգումը (գծապատկեր 1.1.2).




Գծապատկեր 1.1.2 Ռիսկերի հիմնական տեսակներն ու դրանց փոխկապվածությունը

Շինարարական կազմակերպության ռիսկերի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև գործընկերների հետ փոխհարաբերությունները, քանի որ կոնկրետ կազմակերպության ռիսկերը սերտորեն փոխկապված են գործընկերների գործունեությանն առնչվող ռիսկերի հետ: Պատճառ այն է, որ որքան ռիսկային է տվյալ շինարարական նախագիծը, այնքան բարձր տոկոսադրույթով են բանկերը վարկ տրամադրում տվյալ նախագծի իրականացման համար: Այսպիսով, շինարարության ոլորտում դրսևորվող ռիսկերի

առանձնահատկությունների ուսումնասիրությունը պետք է իրականացվի շինարարական նախագծի սկզբունքային կողմերի հետազոտության համատեքստում:

Շինարարական նախագիծը որոշակի ելքային տվյալներով և պահանջված արդյունքներով խնդիրների համակարգ է, որտեղ հստակ սահմանված են յուրաքանչյուր խնդրի լուծման հիմնական մոտեցումներն ու ակնկալվող վերջնարդյունքները¹⁶: Ըստ էության, շինարարական նախագծի կառավարումը պահանջում է յուրաքանչյուր փուլում ապահովել խնդիրների լուծման անխափան ընթացքն ու հասնել վերջնական նպատակին: Վերջնական նպատակը պետք է բխի շուկայի պահանջներից, իսկ նախագծի իրականացման ընթացքում պետք է հստակ պահպանվեն շուկայական հարաբերություններին բնորոշ հիմնական սկզբունքներն ու մոտեցումները: Այսպիսով, շինարարական նախագծի կառավարման արդյունավետության վերջնական գնահատականը տալիս է պատվիրատուն:

Շինարարական նախագծի կառավարման ընդհանրական մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 1.1.3):



Գծապատկեր 1.1.3 Շինարարական նախագծի կառավարման տիպային մոդել

¹⁶ Кочетков А. И. [и др.] /Управление проектами. СПб. : ДваТрИ, 1993. С. 15.


Շինարարական նախագծերի իրականացման գործընթացում, երբ ոիսկայնության մակարդակը մոտենում է թույլատրելիության սահմանին, կազմակերպության ղեկավարությունը «գործարկում է» ոիսկերի կառավարման ակտիվ միջոցառումների համակարգը: Դրանք վերաբերում են տեղեկատվական հոսքերի, շփումների, մատակարարումների և մարդկային ռեսուրսների, ինչպես նաև ֆինանսական հոսքերի կառավարման գործընթացներին:

Շինարարական նախագծի ոիսկայնության խիստ բարձր մակարդակի պայմաններում կազմակերպության ղեկավարությունը պետք է բացահայտի այն նվազեցնելու լավագույն տարբերակը՝ կանխելով նախագծի տապալման վտանգը: Նախագծի հաջող ավարտից հետո պետք է իրականացնել մշտադիտարկում՝ բացահայտելու հիմնական թերացումներն ու առավել արդյունավետ միջոցառումները: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ շինարարական նախագիծը միատարր գործընթաց չէ, ինչից էլ հետևում է, որ նախագծի իրականացման յուրաքանչյուր փուլում առավել ինտենսիվ կարող են դրսնորվել ոիսկերի այս կամ այն տեսակները: Առավել համակարգված մոտեցման դեպքում անհրաժեշտ է վերլուծել շինարարական օբյեկտի կենսացիկլը և դրա հիման վրա բացահայտել յուրաքանչյուր փուլին առավել բնորոշ ոիսկերն ու դրանց հակազդման մեխանիզմները:

Շինարարական օբյեկտի մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 1.1.4):

Շինարարական օբյեկտի կենսացիկլի պարզ վերլուծությունը բավարար հիմք է եզրակացնելու, որ դրսնորվող ոիսկերը կարելի է ներկայացնել երկու հիմնական ենթախմբով՝ ներդրումային և ձեռնարկատիրական: Ներդրումային ոիսկերին են վերաբերում շինարարությունն ավարտին չհասցնելու, ծախսերի չնախատեսված աճի, արտադրական, շուկայական, ֆինանսական և նախագծի պահպանման ոիսկերը, իսկ ձեռնարկատիրական ոիսկերի ենթախումբն ընդգրկում է շինարարական նախագծի իրականացման ու շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության հետ կապված ոիսկերը:

Շինարարությանն առավել բնորոշ ոիսկերի այս դասակարգումը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի միջոցով (աղյուսակ 1.1.1):



Գծապատկեր 1.1.4 Շինարարական օբյեկտի կենսացիկլը

Շինարարության ռիսկերի դասակարգումը

Աղյուսակ 1.1.1

Ներդրումային ռիսկ	Զեռնարկատիրական ռիսկ
1.Շինարարությունն ավարտին չհասցնելու ռիսկ	1.Շինարարական նախագծի իրականացման ռիսկ
2.Ծախսերի չնախատեսված աճի ռիսկ	
3.Արտադրական ռիսկ	
4.Շուկայական ռիսկ	2.Շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության հետ կապված ռիսկեր
5.Ֆինանսական ռիսկ	
6.Նախագծի պահպանման ռիսկ	

Հիմք ընդունելով վերոնշյալ հատկանիշները՝ ներդրումային շինարարական նախագծերի իրականացման ռիսկերի դասակարգման առավել ընդգրկուն մոտեցումը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի միջոցով (Աղյուսակ 1.1.2).

**Ներդրումային շինարարական նախագծերի իրականացման ռիսկերի
ընդգրկուն դասակարգումը**

Աղյուսակ 1.1.2.

Դասակարգման չափանիշ	Ռիսկի տարատեսակներն ըստ ընտրված չափորոշիչի
Կատեգորիա	<ul style="list-style-type: none"> շինարարության ձգձգման ռիսկեր շինարարական որոշումներին չհետևելու ռիսկեր շինաշխատանքների ծավալի մեծացման ռիսկեր շինարարության որակի նվազման ռիսկեր շինարարության անվտանգության ապահովման ռիսկեր
Դրսևորման հավանականություն	<ul style="list-style-type: none"> քիչ հավանական չափավոր հավանական հավանական մեծ հավանականություն ունեցող գրեթե անխուսափելի
Կորուստների մեծությունը	<ul style="list-style-type: none"> նվազագույն ցածր միջին բարձր առավելագույն
Ազդեցության աստիճանը	<ul style="list-style-type: none"> անտեսվող ոչ նշանակալի չափավոր նշանակալի կրիտիկական
Մակարդակը	<ul style="list-style-type: none"> ընդունելի արդարացված անթույլատրելի

Ներդրումային շինարարական նախագծերի իրականացման հետ կապված ռիսկերի այսպիսի դասակարգումը նպաստավոր հիմք է նախապատրաստում

ոիսկերի հստակ և հիմնավորված գնահատման համար, ինչն էլ հանդիսանում է ոիսկերի կառավարման գործընթացի արդյունավետության վճռորոշ գործոններից: Խնդիրն այն է, որ ոիսկերի դասակարգման փուլում տեղ գտած բացթողումներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ոիսկերի գնահատման գործընթացի վրա, ինչն էլ կարող է կառավարման ռազմավարության մշակման պատճառ հանդիսանալ: Շինարարության ոլորտում խիստ կարևոր է նաև ոիսկերի սինթեզավորված խմբավորումն ըստ այսպիսի հատկանիշների, ինչպիսիք են վտանգի դինամիկայի վրա ազդեցության ուղղությունը, տեղի ունենալու դեպքում հնարավոր կորուստների մեծությունը, անընդհատությունը: Ընդ որում, այսպիսի դասակարգումն իմաստավորված է միայն հատկանիշների սինթեզավորված համակարգման դեպքում: Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել հետևյալ մոտեցումը(Այլուսակ 1.1.3):

Ներդրումային շինարարական ոիսկերի սինթեզավորված դասկարգումը

Այլուսակ 1.1.3

Ոիսկի տեսակները				
Ոիսկի մակարդակը բարձրացնող (կործանիչ)		Ոիսկի մակարդակը նվազեցնող (կայունացնող)		
Ամբողջական կորստի ոիսկ	Մասնակի կորստի ոիսկ	Ոիսկերի նկատմամբ զգայունության նվազում	Ոիսկերի բացառում	
Անընդհատ (աստիճանական)	Դիսկրետ (պահային)	Խառը (մաս-մաս շարունակվող)		
Ֆինան- սական	Արտա- դրական	Մարքեթին- գային	Ուսուլսային	Որոշումների կառավարում
Բնակչի- մայական և էկոլո- գիական	Արտա- դրական	Տնտեսական	Սոցիալ- ժողովրդագրական	Քաղաքական, աշխարհաքաղաք ական և իրավական

Սակայն, միայն ոիսկերի տարատեսակների առանձանցումը բավարար հիմք չի ծևավորում շինարարական նախագծերի ոիսկերի կառավարման արդյունավետ համակարգի մշակման համար: Պետք է նկատել, որ ոիսկերի կառավարումը ենթադրում է նաև կանխարգելիչ միջոցառումների մշակումն և իրականացումը, որն էլ ոիսկի գործոնների հանգամանալից վերլուծությունն ու խմբավորումը դարձնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Ոիսկի գործոնները, ըստ Էության, ոիսկային իրավիճակների ծևավորման շարժիչ ուժերն են, հետևաբար նաև ոիսկերի առաջացման հիմնական պատճառները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ շինարարության ոլորտում ոիսկային իրավիճակները խիստ բազմազան են, բազմազան են նաև դրանց առաջացման պատճառները, անհրաժեշտ է ոիսկի գործոնները դիտարկել ընդհանրությունների առանձնացման համատեքստում՝ խմբավորելով միասնական մոտեցմամբ: Նկատի ունենալով շինարարության ոլորտում դրսուրվող ոիսկերի տարատեսակները՝ ոիսկի գործոնների համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի միջոցով (**Աղյուսակ 1.1.4**).

Շինարարական կազմակերպության ոիսկի գործոնների դասակարգումը

Աղյուսակ 1.1.4

Միջավայր	Ոիսկի տեսակը	Ոիսկի գործոնները
Արդիական միջավայր	Արտադրական	Շինմեքենաների և մեխանիզմների անսարքություն, գազա-ջրա-էներգամատակարարման ընդհատումներ, ճանապարհների և հաղորդակցման ուղիների խաթարում, շինարարական նախագծերի և նյութերի ցածր որակ, ծրագրային որոշումների փոփոխություն և այլն
	Տեխնոլոգիական	Տեխնոլոգիական շեղումների պատճառով ոչ որակյալ շինարարա-մոնտաժային աշխատանքների վերակառուցում,
	Տնտեսական	Ավելի շահավետ առաջարկություններ, ֆինանսական ռեսուրսների փոխանցման պայմանների փոփոխություն
	Սոցիալական	Կաղրերի հոսունություն, մասնագետների ցածր որակավորում
	Մարքեթինգային	Առաջարկի, լիկվիդայնության, հումքի և նյութերի արժեքների ուսումնասիրության սխալներ
	Ինովացիոն	Խնդիրներ կապված համակարգչային նոր ծրագրերի, նոր տեխնոլոգիաների և շինարարական

		Ժամանակակից հումքի և նյութերի ներդրման ու կիրառության հետ և այլն
	Կազմակերպչական	Հումքի, նյութերի, նախագծերի և սարքավորումների մատակարարման պարտավորությունների խախտում
	Հատուկ	Անհրաժեշտ մասնագիտությամբ և որակավորմամբ աշխատակիցների բացակայություն
Արտաքին միջավայր	Քաղաքական	Ոչ կայուն հարաբերությունները, քաղաքական իրավիճակը
	Ընդհանուր տնտեսական	Շինանյութի գների աճ, տեխնոլոգիական և տեխնիկական զինվածության մակարդակը, շինարարական արտադրանքի պահանջարկը և այլն
	Իրավական	Օրենսդրական ակտերի, հարկային քաղաքականության, հաշվապահական հաշվառման, ամորտիզացիոն մասհանումների մեթոդի և այլնի փոփոխություն
	Սոցիալական	Արտադրական հանձնարարականների տապալում, գործադրության տեխնիկայի և սարքավորումների դիտավորյալ վնաս, նյութերի գորություն և այլն
	Էկոլոգիական և բնակլիմայական	Հորդառատ անձրևներ, ձյան առատ տեղումներ, մերկասառույց, սողանքներ, հաղորդակցության միասնական համակարգերի տեղաբաշխումը մեկ միասնական տեխնոլոգիական համակարգում և այլն

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ շինարարական կազմակերպության գործունեության և ներդրումային նախագծերի իրականացման արդյունավետության բարձրացման պայմանների որոշման, ներդրումային ռեսուրսների օգտագործման դեպքում յուրահատուկ նշանակություն է ձեռք բերում գործոնների դասակարգումը կառավարվող, պայմանականորեն չկառավարվող (դժվար կառավարվող) և չկառավարվող խմբերի: Շինարարական կազմակերպության գործունեության համար արտաքին սահմանափակող պայմաններ հանդիսացող շատ գործոններ պետական կառավարման մարմինների մակարդակում դիտարկվում են որպես կառավարվող գործոններ, օրինակ, հարկային դրույքաչափերը: Որքան երկար է շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության ընթացքում ընդունված որոշման իրագործման տևողությունը, այնքան մեծ է դժվար կառավարվող գործոնների շրջանակը:

Սա իիմք է տալիս պնդելու, որ անորոշության բարձր մակարդակի պայմաններում շինարարական ռիսկերի առավել դետալացված ու հստակ դասակարգումը հնարավորություն է տալիս մշակել և իրականացնել ռիսկերի

կառավարման առավել արդյունավետ քաղաքականություն: Արդյունքում՝ նկատելիորեն նվազում է ինչպես կորուստներ կրելու, այնպես էլ սնանկացման հավանականությունը, էականորեն բարձրանում է կազմակերպության կայունության աստիճանն ու ձևավորվում գործարար համբավը: Սակայն, որքան էլ գիտականորեն հիմնավորված լինեն ոիսկերի դասակարգման մոտեցումներն, վերջնարդյունքը կախված է ոիսկ-մենեջմենթի որակից:

1.2 Ոիսկերի կառավարման հայեցակարգային մոտեցումներն ու փուլերը

Տնտեսական զարգացման առանձնահատկություններով պայմանավորված արդի իրամայականները նկատելիորեն մեծացնում են որոշումներ ընդունելու ոիսկայնության աստիճանը: Ավելի է սրվում ոիսկերի կառավարման խնդիրը՝ դառնալով ցանկացած կազմակերպության ռազմավարության անբաժանելի մասը: Վերջին տասնամյակներում ոիսկերի կառավարման նշանակությունն անընդհատ և արագ տեմպերով աճում է: Ընդհանուր պատկերացմամբ, ոիսկերի կառավարումը, կամ ոիսկ-մենեջմենթը, ձեռներեցի գործունեության այն մասն է, որն ուղղված է ֆիրմայի տնտեսական արդյունավետության պաշտպանությանը ոչ ցանկալի պատահական իրավիճակներից, որոնք վերջին հաշվով, ֆիրմային նյութական վնաս են հասցնում: Պետք է համաձայնել այն դիտարկման հետ, որ ոիսկերի կառավարման համակարգի հիմնական խնդիրն այնպիսի միջոցառումների մշակումն ու իրականացումն է, որոնք կնպաստեն ֆիրմայի գործունեության վերջնական արդյունքների վրա ոիսկի ազդեցության մեղմացմանը¹⁷:

Ոիսկերի տարբեր տեսակները սերտորեն կապված են, փոխայմանավորում են իրար, հետևաբար ոիսկերի կառավարման գործընթացում մոտեցումներն ու սկզբունքները պետք է ընտրվեն այնպես, որ հնարավորություն տան առավելագույն օգտակարություն ստանալ: Պետք է նկատել, որ այս դեպքում օգտակարությունը հանդես է գալիս չկրած կորուստի տեսքով:

¹⁷ԲուլանիկյանԱ. Առիջներ<<Ձեռնարկատիրականոիսկ>> (ձեռնարկ).-Եր.: <<Տնտեսագետ>>, 2000թ.էջ 82-85

Կապված ոիսկերի կառավարման գործընթացում յուրատեսակ հմտությունների և գիտելիքների տիրապետելու անհրաժեշտ որակների հետ՝ մասնագիտական գրականության մեջ առաջ է քաշվում «ոիսկ մենեցեր» հասկացությունը: Այն առաջին անգամ կիրառել է Տեմպալի համալսարանի պրոֆեսոր ՈՒ. Սնայդերը 1955թ.-ին <<Հարվարդի բիզնես անդրադարձ>> ամսագրում¹⁸: Ոիսկ մենեցերի հիմնական խնդիրը շուկայական պայմանների անցակալի փոփոխությունների դեպքում գործողությունների այնպիսի այլընտրանքային տարբերակների բացահայտումն է, որոնք կնվազեցնեն կորուստներ կրելու հավանականությունը: Ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում, հատկապես ԼՂՀ-ում ոիսկ մենեցերի գլխավոր խնդիրը ոիսկերի կառավարման այնպիսի տարբերակների բացահայտումն է, որոնց շնորհիվ կազմակերպությունը կարող է շահույթ ստանալ նոյնիսկ հանգամանքների վատթարագույն փոփոխության պարագայում: Ըստ Էության, ոիսկ-մենեցմենթը ենթադրում է տնտեսական գործունեության ընթացքում առաջացող ոիսկերի բացահայտում, դրանց որակական ու քանակական գնահատում և կառավարում: Դա է պատճառը, որ անրաժեշտ է անընդհատ կատարելագործել ոիսկերի կառավարման մոտեցումներն ու մեխանիզմները:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «ոիսկ-մենեցմենթ» հասկացության տարբեր բնորոշումների: Այսպես, ըստ Հ. Գոլշտեյնի՝ ոիսկի մենեցմենթը որոշումների կայացման և իրականացման գործընթաց է, որն ուղղված է պատահական և, կամ վնասակար ազդեցությունների չեզոքացմանը: Նմանատիպ մեկ այլ սահմանում է տվել Ե. Չետիրկինը, ով ոիսկ-մենեցմենթը բնորոշել է որպես այնպիսի կառավարչական որոշումների ընդունման և իրականացման գործընթաց, որոնք նվազեցնում են ձեռնարկության գործունեության վրա պատահական իրադարձությունների վնասակար ազդեցությունները¹⁹:

Ըստ Ա. Զակիսի ոիսկ-մենեցմենթը գործողությունների և գործընթացների ամբողջություն է, որը ձեռներեցին հնարավորություն է տալիս գնահատել և կառավարել ոիսկերը մինչ հիմնախնդրի վերածվելն ու վերածվելու ընթացքում²⁰:

Սակայն «ոիսկ-մենեցմենթ» տնտեսագիտական կատեգորիայի առավել ընդգրկուն սահմանում է առաջարկվել Օ. Կոդինսկայայի կողմից: Ըստ նրա՝ ոիսկի

¹⁸ Вяткин, В. Н. Риск-менеджмент : учебник / В. Н. Вяткин, В. А. Гамза, Ф. В. Маевский. — М. : Издательство Юрайт, 2015. — стр 157-159.

¹⁹ Четыркин Е.М. Финансовый анализ производственных инвестиций - М., Дело, 1998. С.256.

²⁰ Закис А. Как внедрить управление рисками // Компьютерные технологии, №22, 2003

կառավարումը տնտեսական գործունեության ընթացքում այնպիսի մոտեցումների, գործընթացների, միջոցառումների իրականացման հնարավորությունն է, որոնք թույլ են տալիս որոշակիորեն կանխատեսել ռիսկային իրավիճակները կամ երևույթները և կառավարչական միջամտության շնորհիվ նվազեցնել դրանց ազդեցության աստիճանը²¹:

Վերոնշյալ մեկնաբանությունները հիմք են տալիս պնդելու, որ ռիսկ-մենեջմենթի հիմքում ընկած է նպատակադրված փնտրությը և աշխատանքի այնպիսի կազմակերպումը, որի արդյունքում պետք է կրճատվի ռիսկի աստիճանը և ապահովվի անորոշության պայմաններում շահույթի ցանկալի մակարդակի ստացումը: Ռիսկ-մենեջմենթի նպատակը, այսպիսով, առավելագույն շահույթի ստացումն է՝ ռիսկի և շահույթի օպտիմալ փոխհարաբերություն ստեղծելու պայմանով: Լայն առումով, կարելի է ասել, որ ռիսկի կառավարումը պետք է հանգի նրան, որ շահույթի մակարդակի որոշակի նվազեցման փոխարեն երաշխավորվի շահույթի համեմատաբար կայուն մակարդակի ստացումը: Այդ կայուն մակարդակն էլ կլինի առավելագույնը՝ հաշվի առնելով հնարավոր կորուստներից ապահովագրվածության պայմանը: Ռիսկ-մենեջմենթն ամեն մի իրավիճակի համար պատրաստի դեղատոմսեր չունի, սակայն, հստակեցնում է, որ հաջողությունների կարելի է հասնել տնտեսական խնդիրների լուծման համապատասխան մեթոդների, հնարքների տիրապետելու դեպքում:

Միջազգային փորձը թույլ է տալիս ձևակերպել ռիսկ-մենեջմենթի մի շարք կանոններ²²:

1. Չի կարելի դիմել սեփական կապիտալից ավելի մեծ ռիսկի,
2. Պետք է անպայման նկատի ունենալ ռիսկի հետևանքները,
3. Չի կարելի ռիսկի ենթարկել մեծ արժեքներ՝ փոքրը ստանալու համար,
4. Ռիսկի դիմելու դրական որոշում պետք է կայացնել կասկածների բացակայության պայմաններում,
5. Կասկածի առկայության դեպքում պետք է ընդունել բացասական որոշում,
6. Պետք է կարծել, թե միշտ գոյություն ունի մեկ որոշում, քանի որ հնարավոր են նաև այլ լուծումներ:

²¹ Кадинская О. А. Управление финансовыми рисками. М. - 2000. С.

²²Սիմոնյան Ա. Դ.«Ռիսկ տնտեսական հասկացությունը և դրա դերը բանկային գործում (տեսական ըննարկում)» -Եր.: Հեղինակային իրատարակություն, 2007 թ.էջ 86

Այսպիսով, ոիսկ-մենեցմենթի խնդիրները տարբերվում են՝ պայմանավորված կոնկրետ երկրի տնտեսական իրավիճակի առանաձնահատկություններով: Այսպես, այն երկներում, որտեղ շուկայական տնտեսության ինստիտուտներն անհամեմատ զարգացած են, առավել կարևորվում են շուկայական և ֆինանսական ռիսկերը, քանի որ ֆիրմաները տարաբնույթ գործարքներ են իրականացնում նաև ֆինանսական շուկայում: Մինչդեռ, պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ տնտեսությունը գտնվում է դեռևս ձևավորման փուլում, ոիսկ-մենեցմենթի շրջանակներում առավել կարևորվում են արտադրական և անվտանգության ռիսկերը:

Տնտեսության դինամիկ զարգացման հետևանքով վաղ թե ուշ ՀՀ-ում ներդրումներ իրականացնողները նույնպես բախվելու են ֆինանսական և շուկայական ռիսկերի կառավարման հիմնախնդիրներին: Վերջինների կառավարման համատեքստում միջազգային պրակտիկայում լայնորեն օգտագործվում են մաթեմատիկական մոդելավորման գործիքները, որոնց արդյունավետությունը մեծապես կախված է մուտքային տվյալների հավաստիությունից և լիարժեքությունից: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հանգամանալից ուսումնասիրել ոիսկ-մենեցմենթի միջազգային առաջավոր փորձն ու բացահայտել դրա տեղայնացման հնարավորությունները: Պատճառն այն է, որ ռիսկայնության ցածր մակարդակը ներդրումային միջավայրի գրավչության ապահովման վճռորոշ գործոններից է, իսկ ցանկացած երկրի տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական զարգացման հիմքը ներդրումային ակտիվությունն է, ինչն ուղղակիորեն հանդիսանում է ներդրողների տնտեսական գործունեության արդյունքը²³:

Այսպիսով, ցանկացած ներդրումային գործունեություն կոչված է նպաստելու երկրի տնտեսական զարգացման գլխավոր նպատակի իրականացմանը, մինչդեռ ներդրողին շահադրողը ոչ թե մակրոտնտեսական զարգացումն է, այլ շահույթ ստանալու ակնկալիքը: Այս պարագայում ներդրումային ռիսկերն առանցքային նշանակություն են ստանում թե միկրոմակարդակում, թե մակրոմակարդակում: Ինչպես իրավացիորեն նշում է Ի. Ա. Բլանկը, ներդրումային ռիսկերն

²³Հ. Բ. Ղուշյանի խմբագրությամբ <<Մակրոտնտեսական կարգավորում>>, ուսումնականձեռնարկ, Երևան, Տնտեսագետ, 2002, էջ 210-211; Մելքոնյան Մ. Ա., Հակոբյան Վ. Մ. <<Ձեռնարկատիրությունը <<-ում>>, Երևան, Զանգակ-97, 2008թ. էջ 68

արտահայտվում են տարբեր ակտիվներում կապիտալի տեղաբաշխման արդյունքում վնասներ կրելու կամ սպասվածից քիչ եկամուտ ստանալու հավանականությամբ, ինչն իր անմիջական ազդեցությունն է ունենում ներդրումային ակտիվության, հետևաբար նաև տնտեսական զարգացման տեմպերի վրա²⁴:

Պետք է նկատել, որ ներդրումային ռիսկերն առավել ցայտուն են դրսնորվում հատկապես շինարարության ոլորտում, քանի որ շինարարական ներդրումային նախագծերը հանդիսանում են բարդ սինթեզավորված համակարգեր, որոնց տարրերը, ձևավորվելով սոցիալ-տնտեսական հարաբերությունների տարաբնույթ փոխազդեցությունների հետևանքով, միավորվում են՝ վերածվելով մեկ ամբողջության: Թեև շինարարական ներդրումային նախագծերն իրականացվում են դինամիկ զարգացող համակարգում, որն իր անմիջական ազդեցությունն է ունենում այդ նախագծերի արդյունավետության վրա, այդուհանդերձ այդ ազդեցությունների հետևանքները հնարավոր է կառավարել: Սա վկայում է այն մասին, որ համակարգի յուրաքանչյուր տարրի, ինչպես նաև ողջ համակարգի գործունեությունը ծավալվում է անորոշության պայմաններում, ինչը ամենայն չի բացառում անցակալի փոփոխությունների տեղի ունենալու հավանականությունը²⁵: Սա ևս մեկ անգամ հիմնավորում է այն տեսակետը, որ ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի մշակումը և ներդրումն ուղղակիորեն բխում են տնտեսական զարգացման օբյեկտիվ պահանջներից:

Ռիսկերի կառավարման տեսության շրջանակներում մշակվել են համընդհանուր սկզբունքներ, որոնք պետք է ընկած լինեն ցանկացած ռազմավարության հիմքում: Դրանք են.

1. Մաքսիմալացման սկզբունքը: Ռիսկերի կառավարման համակարգում պետք է դիտարկել հնարավորինս մեծ թվով ռիսկեր, ինչը հնարավորություն կտա համապատասխան միջոցառումներ մշակել և իրագործել համեմատաբար մեծ թվով այլընտրանքների համար,

2. Մինիմալացման սկզբունքը: Ռիսկերի կառավարման մեխանիզմները պետք է նվազագույնի հասցնեն թե հնարավոր ռիսկերի շրջանակը, թե դրանց հավանականությունն ու ազդեցության հետևանքները,

²⁴ Бланк И.А. Инвестиционный менеджмент: учебный курс. Киев: Эльга-Н, Ника-Центр, 2001

²⁵ Абрамов С. И. Проблемы и перспективы привлечения иностранных инвестиций в экономику России,. - М.:Центр экономики и маркетинга, 2008. 440с

3. Համարժեք հակազդեցության սկզբունքը, որը ենթադրում է այնպիսի միջոցառումների ամբողջություն, որոնք հնարավորություն կտան արագ և համարժեք քայլեր ձեռնարկել տարբեր ռիսկային իրավիճակներում,

4. Ռիսկն ընդունելու սկզբունքը, համաձայն որի, պետք է ընդունել միայն հիմնավորված ռիսկը: Ընդ որում, ռիսկի հիմնավորվածության հանգամանքը կարող է պարզվել միայն համակարգված վերլուծության արդյունքում²⁶:

Ռիսկերի կառավարման այս համընդհանուր սկզբունքներն ընկած են նաև շինարարական ներդրումային նախագծերի հետ կապված ռիսկ-մենեզմենթի հիմքում, ինչը պետք է համարել օբյեկտիվ օրինաչափություն: Այս հիմնարար սկզբունքերից ենելով՝ մասնագիտական գրականության մեջ առաջ է քաշվում այն տեսակետը, որ շինարարական կազմակերպություններում ներդրումային ռիսկերի կառավարումը պետք է իրականացվի տրամաբանորեն փոխկապված հաջորդական փուլերով²⁷.

1. նպատակադրում,
2. ռիսկի վերլուծություն,
3. ռիսկերի կառավարման գործիքակազմի և ռազմավարության ընտրություն,
4. վերահսկողություն և ստացված արդյունքների վերլուծություն:

Ինչպես նշում է Ի. Տ. Բալաբանովը ռիսկի հետ կապված յուրաքանչյուր գործողություն, պետք է լինի հստակ նպատակադրված, հակառակ պարագայում այն ուղղակիորեն կլինի անհմաստ²⁸: Պատճառն այն է, որ մի կողմից կազմակերպության կողմից իրականացվող ցանկացած գործողություն հետապնդում է որոշակի նպատակ, իսկ մյուս կողմից այն ուղեկցվում է որոշակի ռիսկերով:

Ռիսկ-մենեզմենթը բաղկացած է գործողությունների լայն շղթայից, որի յուրաքանչյուր նախորդ փուլը հիմք է հաջորդների համար՝ կազմելով ամբողջական համակարգի անբաժան մասը:

Առաջին փուլում իրականացվում է ռիսկերի շրջանակների հստակեցում և դասակարգում, որտեղ առանցքային նշանակություն է տրվում դասակարգման ռացիոնալ մոտեցման ընտրությանը:

²⁶ Черкасов В.В. Проблемы риска в управлеченческой деятельности. — М., 2002. С.320.

²⁷ Хохлов Н. В. Управление риском. М.: Юнити 2001. С.239.

²⁸ Балабанов И.Т. Риск-менеджмент.- М.: Ист-Сервис, 1994

Երկրորդ փուլում իրականացվում է ռիսկերի գնահատումը, որն իր հերթին բաղկացած է երկու ենթափուլերից: Առաջին ենթափուլում բացահայտվում և հստակեցվում են հնարավոր ռիսկերը, իսկ երկրորդ ենթափուլում իրականացվում է դրանց ազդեցության մասշտաբների, ուղղությունների և հետևանքների վերլուծությունն ու գնահատումը: Այս ենթափուլում առաջնային է ռիսկերի որակական և քանակական գնահատումը: Որակական գնահատման ժամանակ սովորաբար կիրառվում է փորձագիտական գնահատման մեթոդը, իսկ քանակական գնահատման մեթոդի ընտրությունը կախված է իրավիճակային գործոններից:

Քանակական գնահատման փուլում որոշվում է նաև ռիսկի ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու հանգամանքը, ինչը ուղղակիորեն կախված է իրավիճակից²⁹: Ռիսկի ընդունելիության մակարդակի գնահատման համար մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է համեմատել կորստի հնարավոր առավելագույն մակարդակն ու սեփական ակտիվների մեծությունը³⁰.

$$K_p = \frac{Y_{\max}}{C_{sep}}$$

որտեղ՝ K_p -ն ռիսկի գործակիցն է, Y_{\max} -ը հնարավոր առավելագույն կորստի մեծությունը, C_{sep} -ն սեփական ակտիվների մեծությունը:

Ռիսկային իրավիճակների հետազոտությունները ցուց են տվել, որ ռիսկի գործակիցի օպտիմալ արժեքը կազմում է 0,3, իսկ սնանկության տանող ռիսկի գործակիցը 0,7 և ավելի³¹:

Ռիսկերի կառավարման երրորդ փուլում ընտրվում է համապատասխան գործիքակազմը, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով.

- ռիսկից խուսափում,
- ռիսկի նվազեցում,
- ռիսկի ընդունում,
- ռիսկի միավորում կամ փոխանցում այլ տնտեսավարող սուբյեկտների:


Պետք է նկատել, որ դեռևս ռիսկի վերլուծության փուլում ռիսկ մենեշերն արդեն իսկ կատարում է ռիսկի կառավարման նախընտրելի մեթոդի մոտավոր ընտրությունը:

²⁹ Шапкин А.С. Экономические и финансовые риски. - М.- 2003

³⁰ Риски в экономике: Учеб. Пособие для вузов/Под. Ред. Проф. В.А. Швандара.- М.; ЮНИТИ-ДАНА, 2002, стр. 294

³¹Տես Ռиски в экономике Под. Ред. Проф. В.А. Швандара էջ 295

Ոիսկերի կառավարման վերջին փուլը ենթադրում է ստացված արդյունքների վերլուծությունն ու ոիսկի վերահմաստավորումը: Այս փուլում է, որ հնարավոր է լինում գնահատել ոիսկերի կառավարման գործողությունների համալիրի արդյունավետությունն ու բացահայտել թերությունները, վերահմաստավորել կազմակերպության ռազմավարությունը՝ նկատի ունենալով, թե որ գործոններն են նշանակալի ազդեցություն ունեցել ոիսկային իրավիճակների առաջացման ժամանակ, և դրա հետ կապված արդյո՞ք կա անհրաժեշտություն փոփոխություններ իրականացնել ոիսկերի կառավարման ռազմավարության մեջ: Ամփոփելով վերոնշյալը՝ ոիսկերի կառավարման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 1.2.1)³².



Գծապատկեր 1.2.1 Ոիսկերի կառավարման գործընթացը

Պետք է նկատել, որ կառավարման միատեսակ մոտեցումներ չի կարելի կիրառել բոլոր ոիսկերի նկատմամբ:

Միանշանակ է, որ շինարարության ոլորտում ոիսկերի կառավարումը մեծ հմտություններ և ունակություններ է պահանջում, որոնց շնորհիվ հնարավոր կլինի

³² Չուշյան Է.Օ., Սիդորով Մ.Ա. Управление риском и устойчивое развитие. Учебное пособие для экономических вузов. - М.: Издательство РЭА имени Г.В.Плеханова, 1999 527с.


ոիսկերի և ակնկնալվող օգուտի միջև ապահովել կայուն հավասարակշռություն: Այս հավասարակշռության ապահովումն էլ հենց հանդիսանում է ոիսկերի կառավարման արվեստի հիմնական առաքելությունը: Այս պարագայում վճռորոշ են դառնում փորձն ու անհարժեշտ տեղեկատվությանը տիրապետելը, որի հիման վրա էլ կայացվում են կառավարչական որոշումները: Եթե հնարավոր է հստակ կանխատեսել կառավարչական որոշումների հետևանքները, ապա հնարավոր է նաև նվազագույնի հասցնել ոիսկը: Դա է պատճառը, որ ոիսկերի կառավարումը ենթադրում է հետևյալ չորս հիմնական տրամաբանորեն փոխկապված գործողությունների իրականացում՝ ոիսկի հավաստանշում, գնահատում, կանխարգելում և ֆինանսավորում:

Ելնելով վերոնշյալից՝ առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել տարաբնույթ վերլուծություններ, որոնք հնարավորություն կտան բացահայտել ոիսկային իրավիճակների հանդես գալու հավանականությունը, գնահատել ոիսկի աստիճանն ու մեծությունը, որի հիման վրա էլ մշակել կորուստները նվազագույնի հասցնելու օպտիմալ ռազմավարությունը: Այսպիսով, ի թիվս այլ միջոցառումների, ոիսկային իրավիճակների հանդես գալու հավանականության բացահայտման տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը, առանց որի հնարավոր չէ մշակել ոիսկերի կառավարման արդյունավետ համակարգ:

Այնուամենայնիվ, տարատեսակ ոիսկի գործոնների ազդեցության պայմաններում կարող են կիրառվել կազմակերպության գործունեության այս կամ այն կողմերի վրա ազդող ոիսկի մակարդակի նվազեցման տարբեր եղանակներ: Ոիսկերի կառավարման պրակտիկայում կիրառվող բազմազան մեթոդները կարելի են բաժանել չորս խմբերի.

- ոիսկերից խուսափելու մեթոդներ,
- ոիսկերի տեղայնացման մեթոդներ,
- ոիսկերի դիսսիպացիայի մեթոդներ,
- ոիսկերի փոխհատուցման մեթոդներ:

Ոիսկերի կառավարման մեթոդների առավել հանգամանալից դասակարգումը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (գծապատկեր. 1.2.2):



Գծապատկեր 1.2.2. Ռիսկերի կառավարման մեթոդների դասակարգում

Ոիսկի դրսնորման մասշտաբների և մակարդակի վրա հնարավոր է ազդել նաև ֆինանսական մեխանիզմների միջոցով, որը կարող է իրականացվել ֆինանսական մենեջմենթի ռազմավարության մեջ օպերատիվ փոփոխություններ իրականացնելու շնորհիվ: Այս յուրահատուկ մոտեցումն էլ արդի պայմաններում հանդիսանում է ոիսկ-մենեջմենթի զարգացման հիմնական ուղղությունը:

Ոիսկերի նվազեցման նշված մեթոդներից յուրաքանչյուրն ունի ինչպես նշանակալի առավելություններ, այնպես էլ թերություններ: Այդ պատճառով, կարծում ենք, որ ոիսկերի կառավարման արդյունավետ մոտեցումը պետք է հիմնված լինի դրանց համակարգման վրա: Այսինքն, ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում ոիսկերի կառավարման գործընթացից առավելագույն օգուտ կարելի է ստանալ միայն տարբեր մեթոդների համադրման շնորհիվ: Տարբեր մեթոդների համակցման հիման վրա կարելի է նվազագույն ծախսերով, հասնել ցանկալի արդյունքի, այսինքն՝ ոիսկերի կառավարման գործընթացը կարող է ծառայել իր բուն նպատակին՝ տնտեսական արդյունավետության ձեռնարկության մակարդակով: Այսպիսով գալիս ենք այն եզրակացության որ, ոիսկերի կառավարման մեթոդների արդյունավետ համակցման համար, ինչպես արդեն նշվեց, դա նախ և առաջ ձեռնարկատիրական ոիսկերը երկու հիմնական խմբերի ստորաբաժանելն է՝ զուտ և սպեկույատիվ: Սա հնարավորություն է տալիս զուտ ոիսկերը ապահովագրել, իսկ սպեկույատիվ ոիսկերը դիվերսիֆիկացնել, որն էլ կարող է ծառայել որպես ոիսկերի կառավարման առավել արդյունավետ մոտեցում:

1.3 Ներդրումային ոիսկերի կառավարման առանձնահատկությունները շինարարության ոլորտում

Յուրաքանչյուր շինարարական նախագիծ ուղեկցվում է տնտեսական ոիսկերով: Բացի շինարարության ոլորտից, որևէ այլ արտադրական գործընթաց չի բախվում այդչափ մեծ թվով վտանգների, որոնք պետք է բացահայտել, գնահատել, կանխատեսել և կանխարգելել: Նախագծի մշակման փուլում ոիսկի մակարդակն ու ակնկալվող շահույթի մեծությունը գտնվում են սերտ փոխկապվածության մեջ: Դա է

պատճառը, որ շինարարական նախագծի ռիսկերի կառավարումը պետք է դիտարկել որպես նախագծի կառավաման գործընթացի հիմնական բաղկացուցիչ:

1990-ական թթ.-ի վերջերից ԼՂՀ-ում նոյնպես լայն տարածում ստացան ներդրումային նախագծերը, հետևաբար սկսեցին կիրառվել նաև նախագծերի մոդելավորման նոր մոտեցումներ, որոնք հիմնվում էին ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների՝ հատկապես համակարգչային տեխնիկայի ընձեռած հնարավորությունների վրա: ԼՂՀ-ի հոչակումն ու տնտեսության վերածնունդը, որի առանցքը շինարարությունն էր, մեծ խթան հանդիսացավ ինչպես տնտեսական գործունեության, այնպես էլ ներդրումային նախագծերի կառավարման գիտագործնական հետազոտությունների իրականացման համար:

Ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդաբանության համար առանցքային էր 1980-ական թթ.-ի սկզբներին Ս. Կապլանի և Բ. Զ. Գարիիկի կողմից իրականացրած ռիսկերի քանակական գնահատումը: Ըստ նրանց՝ ռիսկը բաղկացած է երեք տարրերից՝ վտանգավոր իրավիճակ, այդ իրավիճակի առաջացման հավանականություն և հետևանքներ, որոնք կարող են ունենալ տարբեր դրսևորումներ: Շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման հիմնաքարերը պետք է լինեն ֆինանսական և ժամանակային կորուստների վերլուծությունը, կառավարումն ու նվազեցումը³³:

Շինարարության ծավաների սրընթաց աճը, որակական կատարելագործումը և տեղեկատվության փոխանցման տեխնոլոգիաների զարգացումը նախագծերի կառավարմանը լայն հնարավորություններ ընձեռեցին: Ռիսկերի կառավարման մեթոդների կատարելագործումը և դրանց ինտեգրումը նախագծերի կառավարման ընդհանուր գործընթացին հանդիսանում են ռիսկ-մենեջմենթի զարգացման հիմնական միտումը:

Թեև ռիսկերի կառավարման բնագավառում հետխորհրդային գիտնականների կողմից իրականացվել են մեծ թվով հետազոտություններ, սակայն դրանց ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ վերջինների ճնշող մեծամասնությունը հիմնված է 1990-ական թթ.-ի սկզբներին կատարված գիտագործնական վերլուծությունների վրա: Դա է պատճառը, որ սույն հետազոտության առանցքում

³³34. Kaplan, S., and B.J. Garrick, 1981, On the quantitative definition of risk, Risk Analysis1(1): 11–27. Knabb, R.D., J.R. Rhome, and D.P. Brown, 2005.

շեշտադրված են զարգացած երկրներում կիրառվող շինարարական ներդրումային նախագծերի ռիսկերի կառավարման առավել արդիական մեթոդներն ու մոտեցումները:

Շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման առանձնահատկություններին վերաբերող տեղեկատվական ռեսուրսներից իրենց գիտական հիմնավորվածությամբ և գործնական մեծ նշանակությամբ աչքի են ընկնում հատկապես VTT Building Technology հետազոտական ինստիտուտի մասնագետների կողմից մշակված մոտեցումներն ու մեթոդները³⁴:

Շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդները բազմաբնույթ են, որոնցից մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հետևյալ հիմնականները՝ ռիսկից խուսափում, դիմադրում, փոխանցում և նվազեցում³⁵:

Ռիսկից խուսափել նշանակում է ուղղակիորեն խուսանավել այն միջոցառումներից, որոնք հավանական են դարձնում ռիսկային իրավիճակների առաջացումը: Սակայն ակնհայտ է, որ հնարավոր չէ խուսափել բոլոր ռիսկերից, քանի որ այդպիսի վարքագիծը վերջին հաշվով ենթադրում է իրաժարվել նաև ակնկալվող շահույթից:

Ռիսկին դիմադրելը ենթադրում է, որ ներդրողն ընդունում է ռիսկը, քանի որ ներդրումային նախագծի մշակման փուլում անգամ նա գիտակցել է հնարավոր կորուստներ կրելու հավանականությունը և պատրաստ էր դրան:

Ռիսկի փոխանցումը ենթադրում է որոշակի վճարի դիմաց պատասխանատվության փոխանցում մեկ այլ, օրինակ, ապահովագրական ընկերության:

Առավել ընդգրկուն դրսևորումներ ունի ռիսկերի նվազեցման մեթոդը, ինչն իրականցվում է հետևյալ մեխանիզմներով.

- 1) Դիվերսիֆիկացիա,
- 2) Լրացուցիչ տեղեկատվության ձեռքբերում,
- 3) Լիմիտավորում,
- 4) Ինքնապահովագրություն,

³⁴VTT.Building. Technology,. P.O.Box. 1805,.SF-02044. VTT,. Finland. 2. VTT Building Technology, P.O.Box 1801, SF-02044 VTT, Finland

³⁵Տես նոյն տեղում

5) Ապահովագրություն:

Դիվերսիֆիկացիան լայն առումով ենթադրում է ներդրումային միջոցների բաշխում տարբեր ակտիվներում, որոնք միմյանց հետ փոխկապված չեն³⁶: Այս դեպքում գործունեության ոլորտներից մեկի հետ կապված անհաջողությունները չեն կարող նշանակալի ազդեցություն ունենալ մյուսների վրա³⁷: Այսպես, մի քանի տարբեր նախագծերում ներդրումներ իրականացնելը մեծացնում է միջին շահույթ ստանալու հավանականությունն ու հնարավորությունն է տալիս մի քանի անգամ նվազեցնել ռիսկի աստիճանը³⁸:

Դիվերսիֆիկացիայի մեկ այլ տարատեսակ է իրացման շուկաների դիվերսիֆիկացումը, ինչը ենթադրում է, որ շինարարական կազմակերպությունը չպետք է սահմանափակվի միայն մեկ շուկայում արտադրանքն իրացնելով, եթե կա նաև այլ շուկաներ գրավելու հնարավորություն: Վերջին տարիներին լայն տարածում են ստացել նաև մատակարարների, վարկային պորտֆելի և արժութային զամբյութի դիվերսիֆիկացման մեխանիզմները:

Մատակարարների դիվերսիֆիկացիան հնարավորություն է տալիս նվազեցնել մեկ մատակարարից ունեցած կախվածությունը, հետևաբար նաև մատակարարման խափանումների հետ կապված ռիսկերի բացասական հետևանքները: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան միտված է ֆիրմայի վարկային ռիսկերի նվազեցմանը, իսկ արժույթային զամբյութի դիվերսիֆիկացիան, ուղղված է ազգային արժույթի փոխարժեքի հետ կապված ռիսկերի նվազեցմանը³⁹:

Լիմիտավորումը ենթադրում է կատարվող միանվագ ծախսերի, փոխառությունների, փոխատվությունների, մեկ տնտեսավարող սուբյեկտի հետ կնքվող մատակարարման կամ վաճառքի ծավալների և այլնի լիմիտավորում, որն էականորեն նվազեցնում է ռիսկերը:

Ինքնաապահովագրությունը ենթադրում է, որ ծախսերի տնտեսման նպատակով շինարարական կազմակերպությունը խուսափում է որոշ ռիսկեր ապահովագրական

³⁶ Зайцев А.А., Кирпичева Л.Ф., Сергеев В.А. и др. Методические рекомендации по анализу и прогнозированию товарных рынков. М.: Издательский Дом «НОВЫЙ ВЕК», 2001

³⁷ Шапкин А. С., Шапкин В. А Теория риска имоделирование рисковых ситуаций: Учебник – М.; Издательско-торговая корпорация “ДашковиКо”, 2005. стр. 684

³⁸ Балабанов И. Т. Риск-менеджмент. – М.: Финансы и статистика, 1996, стр. 64

³⁹ Шапкин А. С., Шапкин В. А Теория риска имоделирование рисковых ситуаций: Учебник – М.; Издательско-торговая корпорация “ДашковиКо”, 2005. стр. 695

ընկերություններում ապահովագրելուց և, ձևավորելով ապահովագրական պահուատային ֆոնդերը, դրանց հաշվին փոխհատուցում է չնախատեսված դեպքերում առաջացող վնասները⁴⁰:

Ապահովագրությունն իրենից ներկայացնում է ֆիզիկական ու իրավաբանական անձանց գույքային շահերի պաշտպանության տնտեսական հարաբերությունների ոլորտ, որտեղ որոշակի իրադարձությունների (ապահովագրական դեպքեր) տեղի ունենալու պարագայում, նրանց իսկ կողմից կատարված վճարումների հաշվին ձևավորված նպատակային ֆոնդից տրվում է վնասի ապահովագրական փոխհատուցում⁴¹: Ըստ Էռլեյան, շինարարական կազմակերպությունը, ապահովագրական ընկերության հետ կնքելով ապահովագրական պայմանագիր, նվազեցնում է ռիսկը, սակայն ապահովագրական ընկերությանն է փոխանցում իր եկամտի որոշակի մասը:

Այդուհանդերձ, շինարարության ոլորտում ռիսկերի նվազեցման մեթոդներից որևէ մեկին նախընտրություն տալու հիմքը ռիսկի գնահատման արդյունքում ստացված տեղեկատվությունն է: Ավանդաբար շինարարության ոլորտում ռիսկերի գնահատումն ուղղված է տարաբնույթ հիպոթետիկ անցանկայի իրավիճակների առաջացման պայմանների մոդելավորման միջոցով ռիսկի այս կամ այն գործոնի ազդեցությամբ աշխատանքի տևողության և արժեքի փոփոխության գնահատմանը: Սակայն, այլ է VTT Building Technology ընկերության մասնագետների մոտեցումը: Վերջինները գնահատում են նախագծի իրականացումից ակնկալվող եկամտի վրա բացասական իրավիճակների ազդեցության աստիճանը՝ հիմնվելով այդ իրավիճակների առաջացման հավանականության սուբյեկտիվ գնահատականների և դրանց հետևանքով հնարավոր կուրստների հաշվարկման մեխանիզմների վրա⁴²: Այս մոտեցումը բավականին առաջադիմական է, քանի որ ցանկացած ներդրողի առաջին հերթին հետաքրքրում է վերջանական շահույթի մեծությունը:

Այս համատեքստում շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման ժամանակակից հայեցակարգերում մշակվել են մի շարք մոտեցումներ և

⁴⁰ Ս. Բոլանիկյան և ուրիշներ« Ձեռնարկատիրական ռիսկ (ձեռնարկ).-Եր.:«Տնտեսագետ», 2000թ. էջ 86

⁴¹ Ֆինանսներ և վարկ ուսումնական ձեռնարկ, Լ.Հ Բաղանյանի խմբագրությամբ և դեկավարությամբ, Երևան, Տնտեսագետ», 2003, էջ 333

⁴² VTT Building Technology, P.O.Box. 1805, SF-02044. VTT, Finland. 2. VTT Building Technology, P.O.Box 1801, SF-02044 VTT, Finland

մեխանիզմներ, որոնք հետապնդում են շինարարական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակը: Դրանք օգնում են շինարարական կազմակերպություններին մշակել և իրականացնել ռիսկերին հակազդելու օպտիմալ ռազմավարություն թե՛ նախապատրաստական, թե՛ շինմուտնաժային աշխատանքների ընթացքում, ինչը հնարավորություն է տալիս նվազագույն կորուստներով ավարտել շինարարությունը: Նկատի ունենալով, որ շինարարական աշխատանքները մշտապես առնչվում են ներդրումային որոշումների հետ, առանձնակի կարևորություն է տրվում հատկապես ներդրումային ռիսկերին:

Սկզբնական շրջանում **ԼՂՀ** շինարարության ոլորտում ռիսկային իրավիճակներն առաջանում էին հիմնականում նախագծի մշակման հետազոտական փուլի սխալների հետևանքով: Շատ դեպքերում նախագծի իրականացման իրական արժեքը զգայի գերազանցում էր նախահաշվային ցուցանիշները, ինչը բացասական հետևանքներ էր ունենում թե՛ ներդրողների և թե՛ շինարարական կազմակերպության և հասարակության համար: **ՀՀ-ի** և **ԼՂՀ-ի** սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակներին բնորոշ տարաբնույթ ռիսկերը և դրանց հակազդելու հրամայականը պահանջում են առաջին հերթին նախագծահաշվային փուլի բացթողումներից բխող ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ:

Ենելով վերոնշյալից՝ անհրաժեշտ է առանձնացնել օբյեկտիվ և սուբյեկտիվ ռիսկ հասկացությունները⁴³:

Օբյեկտիվ ռիսկերը կապված են շինարարական կազմակերպության արտաքին միջավայրից բխող անցանկալի փոփոխությունների հետ: Առավել կարևորվում են միջազգային շուկայի փոփոխությունները, տարածաշրջանային կամ համաշխարհային ճգնաժամերը, ազգային արժույթի փոխարժեքի տատանումները և այլն: Հաճախ օբյեկտիվ ռիսկերը պայմանավորվում են նաև տնտեսության կառուցվածքային հիմքի փոփոխություններով, բյուջեի դեֆիցիտով, գնաճի բարձր տեմպերով: Անցումային տնտեսության պայմաններում այս դրսերումները պետք է համարել ոչ թե մասնավոր դեպքեր, այլ օրինաչափություններ, ինչով էլ բացատրվում է **ԼՂՀ** շինարարության ոլորտում օբյեկտիվ ռիսկերի նշանակալիությունը:

Սուբյեկտիվ ռիսկերը բխում են որոշում կայացնողի անհատական որակներից: Կախված ռիսկի դիմելու հակվածությունից՝ առանձնացվում են տնտեսավարող

⁴³<http://www.znay.ru/guide/gdv/01-05-1.shtml>

սուբյեկտների երեք հիմնական տիպեր՝ ռիսկային, ովքեր պատրաստ են ընդունելու ռիսկը, չեզոք և ռիսկից խուսափող: Շինարարարկան կազմակրպության ռազմավարությունն էլ մշակվում է՝ կախված այն հանգամանքից, թե ինչպիսինն են ղեկավարները: Փորձը ցուց է տալիս, որ հաջողության են հասնում այն շինարարական կազմակերպությունները, որոնց ղեկավարները պատրաստ են և ունակ կայացնելու ռիսկային, սակայն արդարացված, համարձակ որոշումներ: Սակայն, պետք է նկատել, որ ՀՀ-ում, պայմանավորված շուկայական տնտեսության զարգացմանը միտված պարբերաբար իրականացվող ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխություններով, աճում է անորոշության մակարդակն ու անընդհատ փոփոխվում է տնտեսական իրավիճակը: Սրա հետևանքով աճում է ռիսկայնության մակարդակը, հետևաբար նաև ծևավորվում է ակնկալվող մեծությամբ եկամուտ ստանալու հետ կապված մտավախություն:

Շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման մեկ այլ առանձնահատկություն է ռիսկերի գնահատման օպտիմալ մեթոդաբանության ընտրությունը: Ինչպես արդեն նշվել է, ռիսկերի գնահատման հստակությունից է մեծապես կախված ռիսկ-մենեջմենթի արդյունավետությունը, իսկ ռիսկերի գնահատման արդյունավետությունն էլ իր հերթին պայմանավորված է տեղեկատվության հավաստիությունից և լիարժեքությունից: Շինարարության ոլորտում ռիսկերի վերլուծության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսանում.

- 1) Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնք արտացոլվում են պարբերաբար իրապարակվող հաշվապահական հաշվեկշիռներում,
- 2) Կազմակերպությունների կազմակերպական կառուցվաքների վերաբերյալ տեղեկությունները,
- 3) Տեխնոլոգիական հոսքերի քարտեզները,
- 4) Պայմանավորվածություններն ու պայմանագրերը,
- 5) Ֆինանսարտադրական պլանները:

Անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը թեև ծախսատար ու ժամանակատար է, սակայն այն անհրաժեշտ է շինարարական կազմակերպությունների ռիսկերի որակական ու քանակական գնահատման համար:

Շինարարության ոլորտում ոիսկերի որակական գնահատումը հետապնդում է ոիսկի աղբյուրների և պատճառների բացահայտման հիմնական նպատակը, ինչը ենթադրում է.

- Ոիսկի պոտենցիալ գոտիների բացահայտում,
- Շինարարական կազմակերպության գործունեությանը նպաստող ոիսկերի բացահայտում,
- Հնարավոր օգուտների և կորուստների կանխատեսում:

Շինարարական կազմակերպությունների ոիսկերի որակական գնահատման փուլում իրականացվում է ոիսկերի դասակարգում՝ հիմքում ընդունելով այն չափանիշները, որոնք տվյալ պայմաններում բխում են ֆիրմայի շահերից: Ըստ էության, այս փուլում ծնավորվում է այն խնդիրների շղանակը, որոնց կարող է բախվել ձեռներեցը: Ոիսկերի դասակարգումը հնարավորություն է տալիս խմբավորել հնարավոր սպառնալիքները՝ պայմաններ ստեղծելով համայիր մոտեցումների և խմբային հակաքայերի մշակման համար: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ ոիսկերի որակական գնահատումը, հանդիսանալով շինարարական կազմակերպության ոիսկերի կառավարման գործընթացի կարևորագույն փուլերից, չի կարող լիարժեքություն ապահովել կառավարման ողջ գործընթացի տեսանկյունից: Դա է պատճառը, որ ոիսկերի քանակական գնահատումը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն:

Քանակական գնահատման փուլում հաշվարկվում են կոնկրետ ոիսկերի տեղի ունենալու հավանականությունն ու դրանց հետևանքով հնարավոր կորուստների մեծությունը:

Շինարարական կազմակերպությունների ոիսկերի քանակական գնահատման համար գործնականում կիրառվում են տարբեր մեթոդներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով⁴⁴.

1. Վիճակագրական մեթոդ,
2. Փորձագիտական գնահատումների մեթոդ,
3. Նմանօրինակների օգտագործման մեթոդ,
4. Կոմբինացված մեթոդ,

⁴⁴Ս. Բուլանիկյան և ուրիշներ «Զեռնարկատիրական ռիսկ» (ձեռնարկ).-Եր.:«Տնտեսագետ»,2000թ.էջ70

5. ձեռնարկության ֆինանսական արդյունքներով ռիսկի համեմատական գնահատման մեթոդ:

Վիճակագրական մեթոդի հիմքում ընկած են մաթեմատիկական վիճակագրության եղանակները: Ռիսկի գնահատման համար հաշվարկվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են դիսպերսիան, ստանդարտ շեղումը, վարիացիայի գործակիցը և այլն:

Արդյունքի միջին սպասվելիք մեծությունը կապված է իրավիճակի անորոշության հետ և որոշվում է բոլոր հնարավոր ելքերի միջին կշռված թվաբանականով.

$$E(x) = A_1X_1+A_2X_2 + \dots + A_nX_n$$

որտեղ՝ $E(x)$ -ը միջին կշռված թվաբանականն է, A -ն պատահարի տեղի ունենալու հավանականությունն է, X -ը պատահարի արժեքն է⁴⁵:

Շինարարական կազմակերպությունների ռիսկերի քանակական գնահատման փորձագիտական մեթոդի էությունն այն է, որ փորձագետներից յուրաքանչյուրը շարադրում է իր կարծիքը ձեռնարկատիրական ռիսկի այս կամ այն մակարդակի վերաբերյալ, այնուհետև ընդհանրացվում են փորձագետների կարծիքները, և արդյունքում ստացվում է ռիսկի հավանական մակարդակի բավականին հավաստի գնահատկան⁴⁶:

Նման օրինակների մեթոդի էությունն այն է, որ նման օրինակ երևույթի վերաբերյալ եղած գիտելիքները տարածվում են տվյալ երևույթի վրա, իսկ կոմբինացված մեթոդը ենթադրում է, որ միաժամանակ կիրառվում են նշված մեթոդները, կամ դրանց առանձին տարրերը⁴⁷:

Ըստ էության, ռիսկերի որակական և քանակական գնահատման արդյունքները հանդիսանում են շինարարական ներդրումային նախագծեր իրականացնելու առանցքային կողմնորոշիչները: Սակայն, պետությունը նույնպես կարող է որոշակի ազդեցություն ունենալ այդ որոշումների կայացման ընթացքի վրա՝ ձևավորելով ներդրումների իրականացման համար բարենպաստ օրեսնդրահրավական և ինստիտուցիոնալ միջավայր: Վերջինս կարող է խթանել շինարարության ոլորտում

⁴⁵Риски в экономике: Учеб. Пособие для вузов/Под. Ред. Проф. В.А.Швандара.-М.:ЮНИТИ-ДАНА,2002, стр. 313


⁴⁶Ս. Բոլանիկյան և ուրիշներ «Ձեռնարկատիրական ռիսկ» (ձեռնարկ).-Եր.:«Տնտեսագետ», 2000թ.էջ 74-75

⁴⁷Տե՛ս նույն տեղում

Ներդրումները՝ նվազեցնելով օբյեկտիվ ռիսկերի դրսնորման հավանականությունը: Այսինքն, շինարարական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը, ոլորտի ներուժը և ներդրումային գործունեության արդյունքներն ուղղակիորեն կախված են ներդրումային քաղաքականության բարենպաստությունից:

Կարծում ենք, որ այսպիսի պայմաններում շինարարական կազմակերպությունների ներդրումային միջոցների նոր աղբյուրների որոնմանը և ներդրումային գործունեության արդյունավետության բարձացմանն ուղղված քաղաքականությունը պետք է իրականացվի Վ. Վյատնիկի, Յու. Եկատիրինոսլավսկու և Զ. Հեմփթոնի կողմից մատնանշվող ուղղություններով⁴⁸ (Գծապատկեր 1.3.1).

Շինարարական կազմակերպությունների գործունեության քաղաքականություն



Գծապատկեր 1.3.1 Շինարարական կազմակերպության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները

⁴⁸ Вяткин В.Н., Екатеринодарский Ю.Ю., Хэмптон Дж.Дж., Основы управления рисками. М., изд.ГАСИС, 2002, с.45-56.

Շուկայական տնտեսության պայմաններում տարբեր երկրներում ներդրումային գործունեության կարգավորման մոտեցումները տարբեր են: Ցավով պետք է նշել, որ լայն առումով ՀՀ-ում ներդրումային գործունեության պետական կարգավորման նպատակառուղված քաղաքականություն գործնականում չի իրականացվում, այն դեպքում, երբ վերջինս առանձնակի պահանջված է՝ ենելով առնվազն հետևյալ երկու նկատառումներից:

- Մասնավոր հատվածը թույլ է զարգացած, իսկ տեղական արժեթղթերի շուկան դեռևս կայացած չէ, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում կոորդինացնել ներքին փոշիացած ֆինանսական միջոցները:
- Արդյունաբերական ենթակառուցվածքներն արդիականացման խիստ կարիք ունեն, ինչը նույնպես մեծ ծավալների ներդրումներ է պահանջում:

Շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեության խթանման գոեթե բոլոր խնդիրները սերտորեն կապված են տնտեսության մյուս ոլորտներում կատարվող կապիտալ ներդրումների հետ: Ներկայումս ԱՀ-ում իրականացվող դրամավարկային և ֆիսկալ քաղաքականությունների միջոցով հնարավոր չէ ապահովել շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերի վերարտադրության և ներդրումային գործունեության ակտիվացման բարենպաստ պայմաններ: Սպեկուլյատիվ գործարքների չափազանց բարձր եկամտաբերությունն այն հիմնական պատճառներից է, որի հետևանքով ներդրումային ռեսուրսները տնտեսության իրական հատվածից հոսում են դեպի ֆինանսական հատված:

Ներդրումային գործունեության միջազգային փորձի վերլուծությունը վկայում է այն մասին, որ զարգացած արդյունաբերական երկրներում ներդրումների հիմնական աղբյուրը ներքին ռեսուրսներն են (շահույթը և ամորտիզացիան), որոնց մասնաբաժինը կարող է հասնել մինչև 70 տոկոս, իսկ միջինը տատանվում է 55-60 տոկոսի սահմաններում: Վարկային միջոցների հաշվին կատարվող ներդրումների մասնաբաժինը տատանվում է 35-40 տոկոսի սահմաններում այն դեպքում, երբ զարգացող երկրներում այն անհամեմատ ավելի բարձր է: Մասնավորապես՝ Հնդկաստանում գերազանցում է 60 տոկոսը, Ռուսաստանում՝ 91 տոկոսը, ՀՀ-ում՝ 93 տոկոսը: ՀՀ-ում միջին և խոշոր շինարարական կազմակերպություններում անցկացված հարցումները վկայում են այն մասին, որ ներքին աղբյուրների հաշվին ներդրումային նախագծերի ֆինանսավորումը կազմում է մոտ 97 տոկոս:

Շինարարական նախագծերի ֆինանսավորման այսպիսի կառուցվածքը շինարարության ոլորտի զարգացումը դարձնում է բավականին խոցելի, քանի որ այն մեծ կախվածություն ունի հարկաբյուջետային քաղաքականությունից, և ազգային տնտեսության ցանկացած անկայունություն իր անմիջական ազդեցությունն է ունենում ներքին ֆինանսական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացի վրա: ՀՂՀ-ում պետության ներդրումային քաղաքականության հիմքում պետք է դրվի այնպիսի համապարփակ միջոցառումների համալիրի մշակումն ու իրականացումը, որը միտված կլինի բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է համակարգված գործողություններ իրականացնել՝ կատարելագործելու հակամենաշնորհային քաղաքականության մոտեցումներն ու մեխանիզմները, միջոցառումներ ձեռնարկել փոքր ու միջին բիզնեսի զարգացումը խթանելու համար, վարել առավել մեղմ ամորտիզացիոն և հարկային քաղաքականություն, ինչպես նաև կատարելագործել սնանկության մասին օրենսդրությունն ու սնանկության գործընթացի կառավարման ընթացակարգերը:

Շինարարության ոլորտում ներդրումների խթանման տեսանկյունից առավել կարևորվում է այն հանգամանքը, որ շինարարական արտադրանքն իրենից ներկայացնում է աշխատանքի միջոցների, առարկաների և ռեսուրսների ամբողջականություն, ընդ որում աշխատանքի միջոցներն ու առարկաները, որպես մեկ ամբողջություն, կազմում են շինարարական կազմակերպության արտադրական ֆոնդերը, որոնք ել իրենց հերթին բաժանվում են հիմնական և շրջանառու մասերի: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջնարդյունքի ձևավորմանը մասնակցում են միայն շինարարական կազմակերպության արտադրական նշանակության հիմնական ֆոնդերը, պետք է շեշտադրումը կատարել հատկապես այդ քաղադրիչում կատարվող ներդրումների վրա:

Շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեության մեկ այլ առանձնահատկություն է այն, որ վերջինները շարժական արտադրության միջոցների (վերամբարձ կոռունկներ, բուլղոգերներ, էքսկավատորներ և այլն) կարիք ունեն: Հիմնական ֆոնդերի այս քաղադրիչն ընդունված է անվանել ակտիվ մաս, քանի որ այն տեղաշարժվում է կախված շինարարության օբյեկտի գտնվելու վայրից: Արտադրական ֆոնդերի մյուս քաղադրիչը արտադրական նշանակության շենքերն ու շինություններն են, որոնք ապահովում են շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար

անհրաժեշտ պայմաններն ու շինանյութերի արտադրությունը, եթե վերջիններն արտադրվում են տվյալ շինարարական կազմակերպությունում: Հարկ է նկատել նաև այն հանգամանքը, որ առանձին շինարարական կազմակերպություններ իրենց չեն կարող թույլ տալ ձեռք բերել ողջ շինտեխնիկան, բացի այդ, շատ դեպքերում նաև տնտեսապես անարդյունավետ է: Օրինակ՝ էքսկավատորն անհրաժեշտ է միայն շինարարական օբյեկտի հիմքերը փորելու համար, ինչը ժամանակային առումով կազմում է շինմոնտաժային աշխատանքների 1-2 տոկոսը, ինչն էլ հիմնավորում է այն հանգամանքը, որ փոքր ու միջին շինարարական կազմակերպությունների կողմից միջոցների ներդրումը էքսկավատոր ձեռք բերելու համար տնտեսապես անարդյունավետ է, ուստի նրանք տեխնիկայի մի մասը կարող են վարձակալել խոշորներից: Միայն խոշոր շինարարական կազմակերպությունների համար է տնտեսապես արդարացված անհրաժեշտ ողջ տեխնիկայի ձեռքբերումը:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ շատ հաճախ կնքվում են նաև ենթակապալային պայմանագրեր, որոնք փոխահավետ են գործարքի բոլոր կողմերի համար: Այսպիսով, նկատելի է, որ ի տարբերություն արդյունաբերության մյուս ճյուղերի շինարարության ոլորտի հիմնական ֆոնդերի կազմում առավել մեծ տեսակարար կշիռ պետք է ունենա ակտիվ մասը: Ասվածը հիմնավորվում է նաև **ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված պաշտոնական տվյալներով** (աղյուսակ 1.3.1):

Հիմնական ֆոնդերի կառուցվածքն ըստ ոլորտների

Աղյուսակ 1.3.1

Հիմնական ֆոնդերի կառուցվածք	Շինարարություն	Արդյունաբերություն
Ակտիվ մաս	65%	43%
Շենքեր և շինություններ	25%	54.2%
Այլ	10%	2.8%

Այսպիսով, ի տարբերություն արդյունաբերության մյուս ոլորտների, որտեղ հիմնական ֆոնդերի գերակշռող մասը կազմում են շենքերն ու շինությունները, շինարարական կազմակերպությունները, պայմանավորված գործունեության


առանձնահատկություններով, պարտադրված են առավել մեծ ծավալով ռեսուրսներ ուղղել արտադրության շարժական միջոցների ձեռքբերման նպատակով:

Մյուս կողմից՝ շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերը բնութագրվում են բազմազանությամբ և վերջնարդյունքի ձևավորման գործում ունեցած ոչ միատեսակ դերով: Դա առաջին հերթին պայմանավորված է շինարարական արտադրանքի տեխնիկատնտեսական առանձնահատկություններով և հատկապես այն հանգամանքով, որ ոլորտի արտադրանքը անշարժ է, շարժական են միայն արտադրության միջոցները: Պետք է նկատել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային երկրներում խնդիրներ առաջացան կապված հիմնական ֆոնդերի արժեքի գնահատման հետ: Վերագնահատումների արդյունքում շատ հաճախ կիրառվում էին տարբեր գործակիցներ, ինչն էլ պայմանավորում էր գների նշանակալի տարբերությունները: Այս պայմաններում, երբ բացակայում է միասնական մոտեցումը հստակ չէ հիմնական ֆոնդերի իրական արժեքը, իսկ շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերում կատարվող ներդրումները դառնում են առավել քան ռիսկային⁴⁹:

Գործնական մեթոդների մշակման միջոցով շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման համար անհրաշետ է մանրակրկիտ վերլուծել շինարարության տեխնոլոգիական շղթայի բոլոր փուլերը: Վերջինը ներառում է նախագծումը, ինժիներա-երկրաբանական հետազոտությունները, հողային, փորման, պայթեցման, քարային, մեկուսացման, բետոնային և երկաթբետոնային մոնտաժման, տանիքային ու բաժանարար աշխատանքները: Վերոնշյալներն էլ պայմանավորում են շինարարության ոլորտում ըստ փուլերի ներդրումային ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը:

Հիմնվելով կատարված վերլուծությունների վրա՝ շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման փուլերը և ռիսկերի կառավարման տարբեր մակարդակների նպատակների փոխազդեցությունները, բոլոր ռիսկերի ազդեցության գնահատումը և դրանց նվազեցման մոտեցումները կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (գծապատկեր 1.3.2).

⁴⁹ Воробьев С.Н. Управление рисками в предпринимательстве. М.: Изд-во «Дашков и Ко». 2006 г.с. 210



Գծապատկեր 1.3.2 Ներդրումային ռիսկերի կառավարման համակարգային մոտեցումը

Այս գծապատկերում մանրամասն ներկայացված են շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի համակարգային կառավարման փուլերը: Ընդ որում, շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերը կարող են բխել թե՛ ներքին, և թե՛ արտաքին միջավայրի անցանկայի փոփոխություններից: Դրանք վերջին հաշվով ներդրումային նախագծի արդյունավետության հստակեցման անհրաժեշտություն են առաջացնում, այսինքն՝ պետք է վերագնահատել ներդրումային նախագծի արժեքը: Այսպիսով, մեր կողմից առաջարկված մեթոդաբանությունը ենթադրում է շինարարական նախագծի արժեքի և տևողության փոփոխության մոդելավորում՝ կախված ռիսկի գործոններից: Ըստ էության, այն հնարավորություն է տալիս ռիսկային

իրավիճակներում առավել ճշգրիտ պատկերացում ստանալ շինարարական նախագծի տևողության և արժեքի վերաբերյալ, ինչպես նաև մշակել վնասները նվազագույնի հասցնելու օպտիմալ ռազմավարություն: Նախագծի ռիսկը պետք է հաշվի առնվի կապալային պայմանագրի կնքման ժամանակ և պետք է հստակեցվեն պայմանագրային ռիսկի հետ կապված բոլոր կողմերի պատասխանատվություններն ու պարտավորությունները: Ռիսկի գործոններով պայմանավորված փոփոխությունները հանգեցնում են այնպիսի համակարգային փոխագդեցությունների, որոնք դժվար է քանակապես գնահատել, սակայն շատ դեպքերում, շնորհիվ համակարգային բնույթի, դրանք առավել մասշտաբային են, քան կարելի է պատկերացնել: Վերը նշված մեթոդաբանությունը կարող է օգտագործվել ռիսկերի մոդելավորման համար, ռիսկի վերլուծության փոփում կանխատեսումներ կատարելիս, ինչպես նաև այն հնարավորություն է տալիս ճշգրտել նախագծի վերջնարդյունքները բնութագրող ցուցանիշները:

Այսպիսով, շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեությանն առնչվող ռիսկի առաջացումը կախված է որոշակի հանգամանքներից, ինչով էլ պայմանավորված է վերջնական արդյունքի անորոշությունը: Այդպիսի պատճառներից են շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության բացթողումները, ինչպես նաև արտաքին և ներքին միջավայրների մասին տեղեկացվածության ոչ բավարար մակարդակը⁵⁰:

Շինարարության պայմաններում մեծ է անորոշության մակարդակը, այդ իսկ պատճառով էլ ռիսկի կանխատեսման ժամանակ պետք է հաշվի առնվեն ինչպես ռիսկի արտաքին, այնպես էլ ներքին գործոնների ազդեցությունները: Սակայն, պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ վերոհիշյալ գործոնները կարող են ռիսկի մեծության վրա ունենալ ինչպես բացասական (ռիսկայնության ավելացում), այնպես էլ դրական (հակագդող գործոններ) ազդեցություն:

⁵⁰Доронкина Л.Н., Формирование системы управления рисками в инвестиционно-строительном бизнесе, Издательство "Палеотип"- 2005, 138 стр.

ԳԼՈՒԽ 2: ԼՂՀ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԼՂՀ շինարարության ոլորտի զարգացման արդի միտումները

Շինարարությունը ԼՂՀ տնտեսության դինամիկ զարգացող և առավել շահութաբեր ոլորտներից է: Հանրապետության տարբեր շրջաններում իրականացվում են լայնամասշտաբ շինարարական ծրագրեր, որոնք ուղեկցվում են նորարարական տեխնոլոգիական լուծումների մշակման, նյութատեխնիկական բազայի նորացման, բարձր որակավորմամբ կարուերի պատրաստման գործընթացներով: Այս ամենին զուգահեռ՝ ԼՂՀ շինարարության ոլորտը բնութագրվում է նաև ռիսկայնության բարձր մակարդակով:

Ըստ պաշտոնական տվյալների՝ ԼՂՀ շինարարության ոլորտը կազմում է տնտեսության մոտ 65 %-ը, ինչն օբյեկտիվ օրինաչափություն է, քանի որ անհրաժեշտ է վերականգնել արցախյան ազատամարտի տարիներին վնասված շենքերն ու շինությունները, կառուցել նորերը, առավել ևս իրականացնել պաշտպանական նշանակության կառուցների հիմնանորոգում և արդիականացում⁵¹:


2003թ.-ից սկսած՝ ԼՂՀ-ի տարբեր շրջաններում իրականացվում են պետության կողմից մշակված, պլանավորված քաղաքաշինական ծրագրեր: Ռիսկերի առավել հանգանալից հետազոտության անհրաժեշտությունից ելնելով՝ հարկ է վերլուծել ԼՂՀ շինարարության ոլորտի զարգացման դինամիկան բնութագրող առանցքային ցուցանիշները:

Այսպես, 2000-2010թթ.-ին քաղաքացիական նշանակության օբյեկտների շինարարության ծավալը կազմել է ընդհանուրի 60%-ը, արդյունաբերական նշանակության օբյեկտներինը՝ 8%-ը, իսկ վարչատնտեսական նշանակության օբյեկտներինը՝ 22%-ը: 2014թ.-ին այդ նույն ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 80%, 12% և 8%:

⁵¹ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Զեկույց, <http://www.stat-nkr.am>

Շինարարական աշխատանքների 58%-ն իրականացվել է ոչ պետական ներդրումների հաշվին, 30%-ը պետական միջոցների հաշվին, իսկ 12%-ը համատեղ ֆինանսավորմամբ: Այս ցուցանիշները բացարձակ մեծությամբ թեև տարեցտարի փոփոխվում են, սակայն տոկոսային արտահայտությամբ դրանց հարաբերակցությունը գրեթե կայուն է:

Ներկայում ԼՂՀ-ում շինմոնտաժային աշխատանքների մոտ 70%-ը բաժին է ընկնում հումք-նյութերի ձեռքբերման հետ կապված ծախսերին, իսկ 10-15%-ը շինտեխնիկայի շահագործմանը: Ծախսերի կառուցվածքում դինամիկ նվազում են ամրտիզացիոն հատկացումները (Գծապատկեր 2.1.1):



Գծապատկեր 2.1.1 Ամորտիզացիոն հատկացումների տեսակարար կշիռը ԼՂՀ շինարարական կազմակերպությունների ծախսերի կառուցվածքում 2011-2016թթ⁵².

Ինչպես երևում է գծապատկերից, 2016թ.-ին 2011թ.-ի համեմատությամբ ամորտիզացիոն հատկացումների տեսակարար կշիռը նվազել է շուրջ 1.6 անգամ՝ 6.5%-ից հասնելով 3.8%-ի:

⁵²ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Զեկույց, <http://www.stat-nkr.am>

Վերը նշված բացասական երևոյթներին զուգահեռ առկա են նաև ընդգծված դրական տեղաշարժեր: Առաջին հերթին ներդրումները հոսում են դեպի տնտեսության իրական հատված՝ բնակարանաշինություն:


2016թ.-ին ՀՀ շինարարական կազմակերպությունները կառուցել են 9%-ով ավելի շատ բնակարներ, քան 2010թ.-ին, ընդ որում աճն ապահովվել է ոչ միայն նոր կառուցվող բնակարանների, այլև կիսակառուցներն ավարտին հասցնելու շնորհիվ:

Վերջին տարիներին ՀՀ-ում զարգացել է նաև շինանյութերի արտադրությունը, ինչը նպաստել է ժամանակային կորուստների նվազմանը: Միայն 2016թ.-ին շինանյութերի արտադրության ծավալն աճել է մոտ 11%-ով: Սա իր անմիջական դրական ազդեցությունն է ունեցել շինարարական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման վրա: Պետք է նկատել, որ ՀՀ-ի ընդերքը հնարավորություն է տալիս զարգացնել շինանյութերի արտադրությունը:

Շինարարության ոլորտի զարգացմանը նպաստող մեկ այլ հանգամանք է այն, որ 2001թ.-ից գործարկվել են նաև շինանյութերի երկրորդային վերամշակման նոր տեխնոլոգիաներ, որոնց շնորհիվ արտադրական թափոնները վերամշակվում են և օգտագործվում ճանապարհաշինության մեջ:

2015թ.-ից սկսած աճել են նաև երկաթբետոնե և մետաղական կոնստրուկցիաների, բնական քարերից շինվածքների և փայտանյութի արտադրության ծավալները, իսկ 2017թ. 9 ամսվա տվյալներով՝ աճել են 1.5 անգամ: Այս ոլորտներում մշտապես իրականացվում են բարեփոխումներ, ինչն ուղեկցվում է կիրառվող տեխնիկայի և տեխնոլոգիաների արդիականացման բարձր տեմպերով: Արդյունքում՝ նկատելիորեն նվազել է ներմուծվող շինանյութերի պահանջարկը, քանի որ տեղական արտադրողներն առաջարկում են որակապես ու գնային առումներով բավականին մրցունակ արտադրանք:

Այնուամենայնիվ, ՀՀ վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն, 2016թ.-ին շինարարության ոլորտի զարգացման տեմպերը բնութագրող ցուցանիշներն այնքան էլ գոհացուցիչ չեն, ինչն էլ պայմանավորում է շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի դասակարգման և կառավարման համակարգային մոտեցման ներդրման անհրաժեշտությունը: Առանձնակի կարևորություն ունեցող ցուցանիշների դինամիկան կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 2.1.2):



Գծապատկեր 2.1.2 2016թ.-ի ԼՂՀ շինարարական կազմակերպությունների զարգացման դինամիկան բնութագրող հիմնական ցուցանիշների փոփոխությունը

Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ շինմոնտաժային աշխատանքների ծավալն ու կնքված պայմանագրերի քանակը կրճատվել են 36%-ով, աշխատողների թվաքանակը՝ 34%-ով, կապալառուների շահույթը՝ 21%-ով և սեփական ֆինանսական ռեսուրսները՝ 32%-ով: Այն դեպքում, եթե շինմոնտաժային աշխատանքների արժեքը աճել է 56%-ով, իսկ պատվիրատուների պարտքերը՝ 19%-ով:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ԼՂՀ-ում շինարարության ոլորտը բնութագրվում է արտադրական ցիկլի մեջ տևողությամբ և ոիսկայնության բարձր մակարդակով: Ընդ որում, պայմանավորված շինարարության առանձնահատկություններով, անհրաժեշտ է պարբերաբար ներգրավել ֆինանսական ռեսուրսներ: Սակայն, ներկայումս ԼՂՀ շինարարական կազմակերպությունները չունեն ֆինանսական ինստիտուտներից անհրաժեշտ ծավալով ռեսուրսներ ներգրավելու

հնարավորություններ, քանի որ վերջինները գերադասում են բարձր տոկոսադրույքներով վարկավորել այն հաճախորդներին, ովքեր կարող են կարճ ժամանակահատվածում ապահովել միջոցների շրջապտույտն ու տոկոսներով հանդերձ հետ վերադարձնել փոխառված միջոցները:

Այս միտումը խորացավ հատկապես 2007-09թթ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ և պահպանվում է մինչ օրս: Ըստ Էության, ՀՀ շինարարական կազմակերպությունները բախվում են ֆինանսվորման աղբյուրների սահմանափակության հիմնախնդրին: Վերջին տվյալներով շինարարական կազմակերպություններին տրամադրվող վարկերի ընդհանուր մեծությունը նվազել է մինչև 2 մլրդ.դրամ: Նվազման միտումներն առավել ինտենսիվ են եղել հատկապես 2008-2010թթ.-ին՝ ընդհանուր ներդրումների կառուցվածքում 2008թ.-ի 10.3%-ից նվազելով մինչև 7.6%: Միջին հաշվով 250.000 դրամ 1 քմ.-ի արժեքի պայմաններում ավարտին չի հասցել 1.4 մլն. քմ. բնակչութիւն շինարարություն, որը 18քմ/մարդ նորմայի պարագայում ենթադրում է, որ 5000 մարդ չի ապահովվել բնակարանով, ինչը հանգեցրել է սոցիալական լարվածության աճի⁵³:

ՀՀ կառավարությունը մեծ կարևորություն է տալիս շինարարության ոլորտին: Այն ճանաչվել է որպես զարգացման գերակա ուղղություն: Սակայն, ժամանակի ընթացքում գերատեսչական մարմինների առջև դրված սկզբնական խնդիրներն ու նպատակներն էապես փոխվել են: Եթե սկզբնական շրջանում կառավարության հիմնական խնդիրները պատերազմի հետևանքով ավերված քաղաքաների և գյուղերի բնակչութիւն վերականգնումն ու բնակչությանը կենցաղային նվազագույն պայմաններով ապահովելն էին, ապա այժմ իրավիճակն այլ է: Անհրաժեշտ է լուծել մի շարք մեծ կարևորություն ունեցող սոցիալ-տնտեսական խնդիրներ՝ կապված զոհված ազատամարտիկների ընտանիքներին, փախստականներին և վերաբնակեցվածներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանով ապահովելու հարցերի հետ: Կան ծրագրեր, որոնք վերաբերում են մարզամշակութային օջախների, դպրոցների և մանկապարտեզների վերանորոգմանն ու նորերի կառուցմանը: Իրականացվում են նաև ջրամատակարաման և տրանսպորտային ցանցի հիմնանորոգման երկարաժամկետ ծրագրեր: 2014թ.-ի կապիտալ

⁵³ Нагорно-Карабахская Республика: Становление государственности на рубеже веков. Институт политических исследований, ГНКО, Ереван, 2009, -37стр.

շինարարության ծրագրով վերոնշյալ օբյեկտների շինարարությանն ուղղվող ծախսերը կազմել են ընդհանուրի մոտ 75%-ը: Հիմնական պատճառն այն է, որ կապիտալ ներդրումների պետական պատվերներն իրականացվել են 2013թ.-ի պետքութեի միջոցների հաշվին, որոնք որոշակիորեն կրճատվել են: Պետական միջոցների անբավարությունը չպետք է խիստ բացասաբար անդրադառնա առաջնահերթ քաղաքաշինական ծրագրերի իրականացման գործընթացի վրա, քանի որ դրանց մի մասն իրականացվում է արտաբյուջետային ֆոնդերի միջոցներով:

Սկսած 2008թ.-ից՝ Արցախի ներդրումային ֆոնդը որոշ պետական ծրագրերի շրջանակներում բնակարաններ կառուցելու և բնակարանների առաջնային շուկայի ձևավորման հարցերում աջակցում է ազգաբնակչությանը: Այս ֆոնդի կողմից կյանքի է կոչվել Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության ծրագիրը⁵⁴: Այդ ծրագրի շնորհիվ Ստեփանակերտում և ԼՂՀ այլ շրջաններում կառուցվել են նոր բնակելի տներ, ինչպես նաև վերանորոգվել են պատերազմի հետևանքով վնասված բազմաթիվ բնակարաններ:

2010թ.-ին Ստեփանակերտում տրվել է «Արցախ թաղամասի» հիմնադրման մեկնարկը, որտեղ կառուցվել և շարունակվում են կառուցվել նոր բազմաբնակարան շենքեր: Այդ ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 7.2 մլրդ.դրամի ծախսեր: Արդյունքում՝ 566 ընտանիք ապահովվել են բնակարանով (ընդհանուր առմամբ շահագործման է հանձնվել մոտ 60400 քմ. բնակֆոնդ), իսկ Արցախի Ներդրումային ֆոնդի կողմից հինգ տարիների ընթացքում իրականացվել է շուրջ 924.8 մլրդ.դրամի սուբսիդավորում⁵⁵:

Մակրոտնտեսական արդյունքային ցուցանիշներից ավելի շատ կիրառելի են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ), ազգային եկամուտի (ԱԵ), զուտ ազգային արդյունքի (ԶԱԱ), անձնական և տնօրինվող անձնական եկամտի ցուցանիշները: Համակարգի առանցքային ցուցանիշը համարվում է համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), որը բնութագրում է երկրում՝ տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար,

⁵⁴<http://www.aif.am/hy/pages/20>

⁵⁵<http://www.artsakhtert.com/arm/economy/item/2208>

անկախ այն հանգամանքից, թե որ երկրի գործակալի գործունեության արդյունքն է: Սկսած 1993 թվականից՝ աշխարհի բոլոր երկրներում ազգային արդյունքը հաշվարկվում է ՀՆԱ-ի միջոցով: Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) տվյալ երկրի գործակալների կողմից արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների շուկայական արժեքների գումարն է, անկախ այն հանգամանքից, թե որ երկրում է գործունեությունն իրականացվել: Այսպիսով, ՀՆԱ-ն և ՀԱԱ-ն հաշվարկվում են նույն կարգով, սակայն իրարից քանակապես տարբերվում են:

$ՀԱԱ = ՀՆԱ + \text{տվյալ երկրի գործակալների կողմից այլ երկրներում սկրեղծած արդյունք} - \text{այլ երկրի գործակալների կողմից տվյալ երկրում սկրեղծած արդյունք}^*$:

Պարզ է, որ ՀՆԱ-ն ավելի ճիշտ է բնութագրում տվյալ երկրի տնտեսական իրավիճակը, ուստի բերենք մի քանի տվյալներ սկսած 2010 թվից:

2011թ. ՀՆԱ-ի գերակշռող մասը, մոտ 62.8 տոկոսը, ստեղծվել է մասնավոր հատվածում 2010թ. 63.0 տոկոսի դիմաց: ՀՆԱ-ի մասնավոր հատվածի 11.0 տոկոսը կազմել է շինարարությունը: 2012թվին՝ 63.1 տոկոս, որում 8.7 տոկոսը կազմում է շինարարությունը: 2014թվին՝ ՀՆԱ-ի 64.1 տոկոսի 9.5 տոկոսը, ստեղծվել է շինարարությունը:

2012 թ.-ին ԼՂՀ-ում իրականացվել է 37890.3 մլն.դրամի շինարարություն, որը 12.6 տոկոսով ավելի քիչ է 2011 թ.-ի համեմատությամբ: Ընդ որում, շինմոնտաժային աշխատանքների ծավալը բացարձակ արժեքով կազմել է 35931.6 մլն. դրամ կամ ընդհանուր ծախսերի 94.8 տոկոսը:

Պետք է նկատել նաև, որ վերջին տարիներին ԼՂՀ-ում տպավորիչ են սոցիալ-տնտեսական դինամիկ զարգացման տեմպերը: 2005-2010 թթ.-ին ՀՆԱ-ի աճի միջին տարեկան տեմպերը կազմել են 6.1 տոկոս, բնակչության իրական տնօրինվող եկամուտներինը 10.8 տոկոս, մանրածախ առևտրինը 10.7 տոկոս, իսկ հիմնական կապիտալում ներդրումներինը 9.3 տոկոս (տես հավելված 1-ում աղյուսակ 2.1.1 և աղյուսակ 2.1.2)⁵⁶:

2014թ. հանրապետությունում իրականացվել է 50.5 մլրդ. դրամի շինարարական աշխատանքներ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11.7 տոկոսով:

⁵⁶ ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2014թ.

Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են ընդհանուրի 93.3 տոկոսը:

Շինարարության 29.1%-ը կատարվել է պետական բյուջեի, 27.4%-ը՝ կազմակերպությունների, 13.5%-ը մարդասիրական օգնության, 13.4%-ը՝ օտարերկրյա ներդրողների, 5.5%-ը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին: 2015թ. ՀՆԱ-ի մասնավոր հատվածի բաժինը 65.2 տոկոս է, որի 17.4 տոկոսը բաժին է ընկնում շինարարությանը: 2016թ. հանրապետությունում իրականացվել է 45.7 մլրդ. դրամի շինարարություն, ինչը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 9.0 տոկոսով: Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են ընդհանուրի 88.1 տոկոսը:

Շինարարության 30.4%-ը կատարվել է պետական բյուջեի, 27.9%-ը՝ կազմակերպությունների, 17.6%-ը՝ այլ միջոցների, 11.4%-ը՝ մարդասիրական օգնության, 9.3%-ը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին:

2015թ. հանրապետությունում իրականացվել է 50.1 մլրդ. դրամի շինարարություն, ինչը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1.0 տոկոսով: Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են ընդհանուրի 93.3 տոկոսը:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը զիջում է Արցախի ներդրումային հիմնադրամի 57.4%-ով, բնակչության 46.6%-ով, այլ միջոցների 19.6%-ով, պետական բյուջեի՝ 16.3%-ով հաշվին իրականացված շինարարությունը և հակառակը, 8.7 անգամ աճել է օտարերկրյա ներդրողների միջոցների, 31.6%-ով՝ կազմակերպությունների միջոցների, 28.8%-ով՝ այլ մարդասիրական միջոցների, 2%-ով՝ արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված շինարարությունը:

Շինարարության 36.4%-ը կատարվել է կազմակերպությունների, 24.1%-ը՝ պետական բյուջեի, 15.5%-ը՝ այլ միջոցների, 11.3%-ը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների, 2.6%-ը՝ մարդասիրական օգնության միջոցների հաշվին: Համրապետությունում իրականացված շինարարության 25.1%-ը բաժին է ընկել հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման, 19.3%-ը՝ փոխադրումներ և պահեստային տնտեսության, 13.7%-ը՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղերին: Իրականացված շինարարության

60.7%-ն է արտադրական նշանակության: Տարածքային առումով հաշվետու ժամանակաշրջանում իրականացված շինարարության 42.8%-ը բաժին է ընկել Մարտակերտին, 29.4%-ը՝ մայրաքաղաքին, 10.2%-ը՝ Քաշաթաղի շրջանին:

2016թ. հանրապետությունում իրականացվել է 45.7 մլրդ. դրամի շինարարություն, ինչը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 9.0 տոկոսով: Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են ընդհանուրի 88.1 տոկոսը:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը զիջում է մարդասիրական 25.3%-ով, բնակչության 28.3%-ով, կազմակերպությունների՝ 30.2%-ով, համայնքների՝ 38.3%-ով, օտարերկրյա ներդրողների՝ 62.5%-ով միջոցների հաշվին իրականացված շինարարությունը և հակառակը, 82.6%-ով, աճել է արտաքյուղետային, 61.8%-ով՝ Արցախի ներդրումային հիմնադրամի, 14.8%-ով՝ պետական բյուջեի և 2.7%-ով՝ այլ միջոցների հաշվին կատարված շինարարությունը:

Շինարարության 30.4%-ը կատարվել է պետական բյուջեի, 27.9%-ը՝ այլ միջոցների, 11.4%-ը՝ մարդասիրական օգնության, 9.3%-ը՝ արտաքյուղետային միջոցների հաշվին: Հանրապետությունում իրականացված շինարարության 24.3%-ը բաժին է ընկել փոխադրումներ և պահեստային տնտեսության, 20.1%-ը՝ անշարժ գույքի հետ կապված գործունեության, 16.0%-ը՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղերին: Ըստածքային առումով հաշվետու շամանակաշրջանում իրականացված շինարարության 35.2%-ը բաժին է ընկել Մարտակերտին, 32.4%-ը՝ մայրաքաղաքին, 9.8%-ը՝ Քաշաթաղի շրջանին:

2017թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել է 33.2 մլրդ. դրամի շինարարություն, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 25.7 տոկոսով: Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 27.4 մլրդ. դրամ կամ ընդհանուր շինարարության 82.7 տոկոսը:

Ներդրումային շինարարական համայիրի զարգացման միտումները կախված են տնտեսության զարգացման ընդհանուր վիճակից: Տնտեսության զարգացման վիճակի հիմնական բնութագրիներից են հիմնական կապիտալում կատարվող ներդրումների ծավալն ու կառուցվածքը, ներդրումների հետգնման ժամկետը, տնտեսության

ճյուղային կառուցվածքը, բնակչության իրական եկամուտների դինամիկան, գնաճի տեմպերը և այլն:

ՀՂՀ պետական վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ հիմնական կապիտալում կատարվող ներդրումները 2006թ.-ին կազմել են 17602 հազար դրամ՝ 2005թ.-ի համեմատությամբ աճելով 13.7 տոկոսով (տես հավելված 1-ում աղյուսակ 2.1.1 և աղյուսակ 2.1.2): Նոյն ժամանակահատվածում «Շինարարություն» հոդվածով կատարված աշխատանքների ծավալն աճել է 15.7 տոկոսով, իսկ բնակարանշինության ծավալը 15.2 տոկոսով:

ՀՂՀ շինարարության ոլորտը ներկայումս ընդգրկում է մոտ 100 կապալառու ընկերություններ, տասնյակ շինարդյունաբերությամբ և շինանյութերի արտադրությամբ գրաղվող, նախագծային և գիտահետազոտական, տրանսպորտային կազմակերպություններ: ՀՂՀ շինարարության ոլորտի հիմքը կազմում են դինամիկ զարգացող ընկերությունները կառուցում են ոչ միայն բնակարաններ և հասարակական նշանակության օբյեկտներ (բազմաբնակարան շենքեր, դպրոցներ, սպորտային, մշակութային կենտրոններ և այլն), այլ նաև հիդրոէլեկտրակայաններ, բետոնե և արագ հավաքվող կոնստրուկցիաներ:

Վերջին տարիներին շինանյութերի հիմնական տեսակների թողարկման ծավալները դինամիկ աճում են: Բնաիրային արտահայտությամբ այդ աճը տատանվում է 7-30 տոկոսի սահմաններում: Պետք է նկատել, որ թողարկվող հայրենական արտադրության շինանյութերը բավարարում են ժամանակակից պահանջներին:

2005թ.-ին շինանյութերի արտադրության ծավալը կազմել է ՀՆԱ-ի մոտ 3 տոկոսը, իսկ հիմնական ֆոնդերի արժեքը կազմել է հանրապետության հիմնական ֆոնդերի արժեքի 2.8 տոկոսը⁵⁷:

Կապիտալ շինարարությանն են վերաբերում շինարարության բոլոր ձևերի գծով կատարված աշխատանքների հետ կապված ծախսերը՝ ներառյալ սարքավորումների ձեռքբերման և մոնտաժման, արտադրական նշանակության գործիքների ձեռքբերման, բնակելի ու օժանդակ տարածքների կառուցման և այլ ծախսերը:

⁵⁷ ՀՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Տեղեկագիր, <http://www.stat-nkr.am>

2010թ.-ից սկսած ՀՂՀ պետական գնումների գործակալությանը կից ստեղծվել է տենդերային հանձնաժողով: Արդյունքում ձևավորվել է նորմատիվա-իրավական այնպիսի համակարգ, որը գործնականում հնարավորություն է տալիս անցկացնել անհրաժեշտ որակի մրցույթներ: Կապալային աճուրդների հիմնական դրույթներն ամրագրված են գնումների մասին <<օրենքով⁵⁸: Ի հավելում օրենքում ամրագրված դրույթների մշակվել է նաև մեթոդական ցուցումների փաթեթ, որը հնարավորություն է տալիս իրականացնել մրցույթի մասնակիցների նախնական դասակարգում, մշակել տենդերային փաստաթղթերը և արդյունքում ընտրել վերջնական հաղթողին: Այդ նպատակով թողարկվել է նաև կապալային աճուրդների կազմակերպման և անցկացման ձեռնարկ:

ՀՂՀ-ում իրականացվում են նպատակաուղղված գործողություններ՝ կատարելագործելու կապալային աճուրդների կազմակերպման և իրականացման ընթացակարգերը: Ընդ որում, իրականացվում են թե բաց, թե փակ աճուրդներ: Առաջին դեպքում աճուրդի անցկացման մասին հայտարարությունը հրապարակվում է պաշտոնաթերթերում, այդ պատճառով էլ դրանք հաճախ անվանվում են հանրային: Որպես կանոն, բաց աճուրդներ կազմակերպվում են համեմատաբար պարզ և հասանելի աշխատանքների կազմակերպման համար, որոնք կարող են իրականացնել բազմաթիվ ֆիրմաներ:

Կապալային աճուրդների կազմակերպման օրենսդրահրավական հիմքերն ու ենթակառուցվածքները կոչված են նպաստելու ոլորտում ազատ մրցակցային հարաբերությունների ձևավորմանը և յուրատեսակ լծակ են շինարարության ոլորտում արդյունավետության բարձրացման ու ներդրումների խթանման համար: Պատճառն այն է, որ շուկայական հարաբերությունների համակարգում կապալային աճուրդներում կարող է հաղթել միայն ու միայն այն մասնակիցը, ում կողմից ներկայացված առաջարկը կառուցված է գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ և որտեղ հաշվի են առնված գիտության, տեխնիկայի ու պրակտիկ գործունեության նորագույն նվաճումները:

Կապալային աճուրդների բուռն զարգացումը նշանակալի դրական ազդեցություն ունեցավ շինարարության ոլորտում պետության ներդրումային քաղաքականության կատարելագործման տեսանկյունից:

⁵⁸ «Գնումների մասին» <Օ-21-Ն<< օրենք ընդունված 16.12.2016թ.


Այդուհանդերձ վերջին տարիներին ԼՂՀ-ում նվազել են գործող կազմակերպությունների վերակառուցման և ընդլայնման տեմպերը, որի հետևանքով նկատելիորեն դանդաղում է նաև տեխնիկական վերազինումը, մինչդեռ ի հակադրումը սրա, աճում է բնակչոնդի վերակառուցման և ընդլայնման անհրաժշտությունը, միջազգային պրակտիկայում կիրառվում են շինարարական աշխատանքների կատարման որակապես նոր տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են տալիս նվազեցնել արտադրության ծախսերը և թողարկել որակապես անհրաժեշտ պահանջներին բավարարող արդյունք: Այս պայմաններում տարեցտարի աճում է այն ռիսկային իրավիճակների թիվը և ռիսկայնության աստիճանը, որոնց լուծման համար կազմակերպության ղեկավարությունը պարտադրված է ձեռնարկելու արտառոց միջոցառումներ: Պետք է նկատել, որ կապիտալ ներդրումներն ընդհանուր ներդրումների հիմնական, սակայն ոչ միակ բաղկացուցիչն է: Շինարարական կազմակերպության լիարժեք գործունեության համար անհրաժեշտ է նաև հումք, կոմպլեկտավորող շինվածքներ, էներգոուսուրսներ և այլն, ըստ էռթյան, շրջանառու միջոցներ: Այսպիսով, շինարարության ոլորտի ներդրումները կապիտալ ներդրումների և շրջանառու միջոցների ամբողջությունն են, որոնք անհրաժեշտ են ներդրումային նախագծերի իրականացման համար:

Ներդրումները կարող են իրականացվել տարբեր աղբյուրներից: ԼՂՀ-ում ըստ ֆինանսավորման աղբյուրների ներդրումների ծավալն ու կառուցվածքը կարելի է ներկայացնել աղյուսակի միջոցով (տես հավելված 2-ում Աղյուսակ 2.1.3):

Տվյալները վկայում են այն մասին, որ դիտարկվող ժամանակահատվածում, բացառությամբ 2001-2002 և 2012թթ.-երի, շինարարության ոլորտում կատարվող ներդրումները դինամիկ աճել են: Այդ աճն ապահովվել է ֆինանսավորման բոլոր աղբյուրներից ներդրումային հոսքերի ակտիվացման շնորհիվ: Այդուհանդերձ, մտահոգիչ է այն հանգամանքը, որ 2014թ.-ին նկատելիորեն նվազել է օտարերկրյա ներդրումների ծավալը: Թեև 2015թ.-ին այն որոշակի աճ է արձանագրել, սակայն մոտ չորս անագամ ավելի քիչ է, քան 2013թ.-ին:


Ցուցանիշները վկայում են այն մասին, որ պետության մասնաբաժինն ընդհանուր ներդրումների մեջ բավականին նվազել է՝ 2000թ.-ի 44.9 տոկոսից հասնելով 24.2 տոկոսի: Նկատելիորեն նվազել է նաև հումանիտար օգնության միջոցներով իրականացվող շինարարության տեսակարար կշիռը՝ դիտարկվող

Ժամանակահատվածում 37.2 տոկոսից հասնելով 13.9 տոկոսի: Սակայն ոլորտի հիմնական ձեռքբերումներից է այն, որ նկատելի աճել է կազմակերպության սեփական միջոցների հաշվին իրականացվող ներդրումների տեսակարար կշիռ՝ 2.5 տոկոսից հասնելով 36.4 տոկոսի: Սա վկայում է այն մասին, որ ՀՀ տնտեսությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, իսկ կազմակերպությունները կապիտալի նախասկզբնական կուտակման փուլից աստիճանաբար անցում են կատարել կուտակման փուլին: ՀՀ շինարարության ոլորտի զարգացման դինամիկան և տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները 2005-2016 թթ. կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերիների միջոցով (Գծապատկեր 2.1.3 և 2.1.4):



Գծապատկեր 2.1.3 ՀՀ շինարարության ծավալները (ընթացիկ գներով 2005թ.-ից 2016թ-ի համեմատությամբ, տոկոսներով)⁵⁹

⁵⁹ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2016թ. <https://hy.wikipedia.org/>



Գծապատկեր 2.1.4 ԼՂՀ շինարարության ոլորտի ներդրումների կառուցվածքային փոփոխությունները 2004-2014թթ-ին.

ԼՂՀ շինարարության ոլորտում առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ: Առաջին հերթին դրանք կապված են մակրոտնտեսական վիճակի առանձնահատկությունների հետ՝ ուղղահայաց կորդինացման անարդյունավետություն, բյուրոկրատական մեխանիզմների առկայություն, տարիֆների և շինարարության ինքնարժեքի մասին միասնական տեղեկատվական համակարգի բացակայություն, արդյունքի էկոլոգիականության ցածր մակարդակ և, վերջապես, շինարարական ներդրումային նախագծերի մասնակիցների և ներդրումային շինարարական համակարգի գարգացման մեխանիզմների միջև համակարգված փոխհարաբերությունների բացակայություն:

Ի հավելումն այս մակրոտնտեսական խնդիրների՝ առկա են նաև մի շարք միկրոտնտեսական խնդիրներ: Թեև հայրենական արտադրության որոշ շինանյութեր բավականին մրցունակ են, սակայն իր ընդհանուրության մեջ շինարարության ոլորտում կիրառվող հոմք-նյութերը շատ դեպքերում աչքի չեն ընկնում որակական բարձր հատկանիշներով: Միաժամանակ բավականին ցածր է որոշ շինարարական կազմակերպությունների տեխնիկական գարգացման մակարդակը՝ գրեթե բոլոր

կազմակերպություններն ունեն ֆինանսական միջոցների սուր պահանջ, բավականին դանդաղ է ընթանում հիմնական կապիտալի նորացման գործընթացը և այլ յուրահատուկ խնդիրներ՝ բնորոշ կազմակերպություններից յուրաքանչյուրին:

Այս խնդիրների համակարգում հատկանշական է, որ բացակայում է շինարարության ոլորտում ներդրումային գործունեության ռիսկերի կառավարման ռացիոնալ համակարգը: Շինարարության ոլորտում ներդրումային գործունեության կառավարման ժամանակակից մոտեցումները օրախնդիր են դարձնում շինարարական կազմակերպությունների զարգացման և նրանց կողմից իրականացվող ներդրումային գործունեության կարգավորման հանգամանալից ուսումնասիրությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է հանգամանալից ուսումնասիրել ՀՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեության արդյունավետությունը, գնահատել դրա բաղադրիչներից յուրաքանչյուրի ազդեցությունը վերջնական արդյունքի վրա և հստակեցնել ներդրումների իրականացման հիմնական ռիսկերը: Միայն այդպես է հնարավոր բացահայտել շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման ռացիոնալ ուղիները, ինչպես նաև նախագծել և հիմնել նոր, առավել առաջադիմական ու ներդրումային նախագծերի կառավարման առավել զարգացած համակարգով կազմակերպություններ:

Շինարարական կազմակերպության զարգացման մակարդակը բնութագրվում է այնպիսի որակական բաղադրիչներով, ինչպիսիք են աշխատողների մասնագիտական հմտությունները, արտադրության ավտոմատացման մակարդակը, կոմբինացված արտադրության, աշխատանքի բաժանման և մասնագիտացման աստիճանները և այլն: Այսպիսով, ինչպես ցանկացած, այնպես էլ շինարարական կազմակերպության արտադրատնտեսական վիճակը կարելի է բնութագրել ցուցանիշների երկու խմբի միջոցով՝ քանակական՝ աճի ցուցանիշներ, և որակական՝ զարգացման ցուցանիշներ: Սակայն, ելնելով սույն հետազոտության նպատակից և մեթոդաբանական առանձնահատկություններից, աշխատանքում շինարարական կազմակերպության վիճակի բնութագրման համար կվերլուծվեն միայն որակական՝ զարգացման ցուցանիշները, քանի որ, ինչպես նշում է Ա. Մ. Ալիսը, դրանք ներդրումային

գործունեության արդյունավետության վրա առավել անմիջական և մեծ ազդեցություն են ունենում⁶⁰:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ առաջ է քաշվում այն տեսակետը, որ շինարարական աշխատանքների ծավալը հնարավոր է մեծացնել երկու ճանապարհով՝ էքստենսիվ և ինտենսիվ: Առաջին դեպքում աճն ապահովում է կիրառվող ռեսուրսների ծավալների ավելացման շնորհիվ, իսկ երկրորդ դեպքում աճն ապահովում է շնորհիվ նոր, առավել առաջադիմական տեխնոլոգիաների կիրառման, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ օգտագործել սահմանափակ ռեսուրսները, այդ թվում՝ ժամանակը:

Այսպիսով, ԱՀ տնտեսությունում ռեսուրսների սահմանափակության խնդրի սուր դրվագքով պայմանավորված՝ պետք է հիմնական շեշտադրումը կատարվի ինտենսիվ աճի ապահովման մեխանիզմների վրա, ինչը ենթադրում է կիրառվող տեխնիկայի և տեխնոլոգիայի անընդհատ արդիականացում, գիտություն-արտադրություն կապի ինտենսիվացում:

Ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում ստեղծվում են բնական ռեսուրսներ իրենց որակական հատկանիշներով գրեթե չզիջող արհեստական փոխարինչներին: Այսպես՝ օգտագործվող կարծր մետաղներն փոխարինվում են այլ համաձուլվածքներով: Այժմ տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական, այլ նաև մտավոր աշխատանքի մեքենայացում: Շինարարության ոլորտի ինտենսիվ զարգացումն իր հիմնական բովանդակությամբ կարելի է վերագրել աշխատանքի մեքենայացմանը:

Պետք է նկատել, որ շինարարական աշխատանքների ծավալը կախված է ոչ միայն շինարարական կազմակերպության արտադրական հզորություններից, այլ նաև ներքին շուկայում պահանջարկի մեծությունից և շինարարության ոլորտի մյուս սուլքեկտների հետ ծավալվող փոխարաբերությունների արդյունավետությունից: Փաստացի այս ցուցանիշները կանխորոշում են շինարարական կազմակերպության ներդրումային գործությունը: Դրանով իսկ կարելի է համակարծիք լինել այն տեսակետի հետ, որ կապալային աշխատանքների ծավալը կանխորոշում է շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքն ու

⁶⁰ Алиев А.М., Методические вопросы повышения эффективности производства строительных предприятий в условиях рыночных отношений; Автореф. дис. канд. эк. наук. - Махачкала -1996. -19 с

հստակեցնում ներդրումային շահերի շրջանակը⁶¹: Շինարարական կազմակերպության արտադրական հզորությունը բնութագրվում է որոշակի ժամանակահատվածում, սովորաբար մեկ տարում, սեփական ուժերով շինարարական աշխատանքներ իրականացնելու հնարավոր առավելագույն ծավալով: Պետք է նկատի ունենալ նաև շինարարական կազմակերպության արտադրական պոտենցիալը, որը թողարկման առավելագույն ծավալն է՝ ներդրումային միջոցների անհրաժեշտ ծավալով ապահովածության, աշխատանքի բացարձակ արդյունավետության և հնարավոր ներդրումային բոլոր ռիսկերի չեզոքացման պայմաններում:

Ինչ վերաբերում է շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության զարգացման մակարդակին, ապա այն կարելի է բնութագրել անհրաժեշտ ներդրումային ռեսուրսների ներգրավման և բոլոր ներդրումային ռիսկերի չեզոքացման բազային պայմաններով:

Ելնելով նշված հասկացությունների վերը տրված բնորոշումներից՝ կարելի է պնդել հետևյալ տրամաբանական շղթան:

$$\text{ԿԱ} < \text{ԱՀ} < \text{ԱՊ} \quad (1)$$

որտեղ՝ ԿԱ-ն կապալային աշխատանքների ծավալն է, ԱՀ-ն արտադրական հզորությունները, ԱՊ-ն արտադրական պոտենցիալը:

Սույն հետազոտության մեջ հիմնական խնդիրներից է շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության ինչպես որակական, այնպես էլ քանակական բնութագրիչների բարելավումը, որոնք հետագա շարադրանքում դիտարկվում են որպես ներդրումային ռիսկերի կառավարման մեթոդներից ու ձևերից ուղղակիորեն ածանցվող գործընթացներ, ինչպես նաև առանձնակի կարևորություն է տրվում շինարարական կազմակերպության կառավարման կառուցվածքի կատարելագործման խնդիրներին (Գլուխ 3):

Թեև գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ) ցանկացած արտադրատնտեսական համակարգի զարգացման շարժիչ ուժն է, այդուհանդերձ նորագույն տեխնիկայի ու տեխնոլոգիայի ոչ բոլոր նվաճումներն են ստանում գործնական կիրառություն: Դա է պատճառը, որ ԳՏԱ-ի որոշ ձեռքբերումներ չեն կիրառվում շինարարության ոլորտում, հետևապես նաև ներդրումային գործունեության

⁶¹ Экономика строительства: Учебник/Под общ. ред. Э40 И.С.Степанова.-2-е изд.доп.перенаб.-М.:Юрайт-Издат.2002-591с.ISBN 5-94879-014-2.

արդյունքերը ցածր են ներուժային մակարդակից և հետ են մնում հասարակական արտադրության զարգացման ընդհանուր միտումներից: Այսպիսով, կարելի է համաձայնել Վ.Ն.Գլազունովի այն տեսակետի հետ, որ շինարարության ոլորտում ներդրումային գործունեության զարգացման պոտենցիալը հասարակական արտադրության և կոնկրետ շինարարական կազմակերպության զարգացման մակարդակների միջև եղած տարբերությունն է⁶²: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակեցնել շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման գործոններն ու ռեզերվները: Գործոնները որոշում են բոլոր այն պայմանները, որոնք ապահովում են ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացում՝ անկախ այն հանգամանքից՝ տվյալ կազմակերպությունում դրանք առկա են, թե՞ ոչ: Այսպիսով, կարելի է առանձնացնել գործոնների երկու խումբ՝ գործոններ, որոնք առկա են տվյալ կազմակերպությունում և գործոններ, որոնք բացակայում են: Այս ամենի հիման վրա էլ կարելի է առանձնացնել ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման ռեզերվների երկու հիմնական խումբ՝ ներքին և պոտենցիալ ռեզերվներ: Ներքին ռեզերվների մեծությունը կարելի է հաշվարկել որպես արտադրական հզորությունների և փաստացի իրականացված կապալային աշխատանքների տարբերություն, իսկ պոտենցիալ ռեզերվների ընդհանուր մեծությունը՝ որպես շինարարական կազմակերպության արտադրական պոտենցիալի և արտադրական հզորությունների տարբերություն:

$$\Delta_{\text{Ա}} = \text{ԱՀ} - \text{ԿԱ} \quad (2)$$

$$\Delta_{\text{Պ}} = \text{ԱՊ} - \text{ԱՀ}$$

որտեղ՝ ՆՌ-ն և ՊՌ-ն համապատասխանաբար ներքին և պոտենցիալ ռեզերվներն են:

Այսպիսով, վերոնշյալ հասկացությունների միջև գործում է հետևյալ տրամաբանական փոխկապվածությունը. ճգնաժամի պայմաններում շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման գլխավոր ուղղությունը հիմնական ֆոնդերում ներդրումների խթանումն է, ինչը բնութագրվում է որակական զարգացման պարամետրերով: Այդ պարամետրերի հնարավոր առավելագույն և փաստացի արժեքների տարբերությունն էլ հանդիսանում

⁶² Глазунов В. Н., «Финансовый анализ и оценка риска реальных инвестиций». -М.: Финстатинформ, 1997

Է ներդրումային գործունեության ակտիվացման ռեզերվը, որի վերջնարդյունքը պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ պոտենցիալ ռեզերվների գումարային մեծություններով:

2.2 ԼՂՀ շինարարության ոլորտի ներդրումային ռիսկերի համակարգային վերլուծություն

Տնտեսական գործունեության խոշորագույն ոլորտ հանդիսացող շինարարությունը մեքենաշինության հետ մեկտեղ հիմնական ֆոնդեր է արտադրում տնտեսության ցանկացած ոլորտի կազմակերպությունների համար՝ ապահովելով արտադրական հզորությունների և հիմնական ֆոնդերի ընդլայնված վերարտադրությունը: Դա է պատճառը, որ շինարարության ոլորտի զարգացումը սերտորեն առնչվում է տնտեսության մյուս հատվածների հետ:

Ինչպես նշում են վերլուծաբանները, շինարարությունը դասվում է հարաբերականորեն անկայուն ոլորտների շարքին⁶³: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ շինարարական արտադրանքը չի դասվում առաջին անհրաժեշտության ապրանքների շարքին, և ամբողջական պահանջարկի կրճատումը մեծապես նվազեցնում է շինարարական աշխատանքների նկատմամբ պահանջարկը:

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների կերպափոխման անցումային փուլում անկայուն են դառնում կազմակերպության զարգացման պայմանները: Այդ պայմաններն առավել առանցքային են հատկապես ԼՂՀ շինարարության ոլորտում: Պատճառն այն է, որ շինարարական կազմակերպության կառավարման գործընթացում որոշումներ ընդունելիս պետք է նկատի ունենալ ռիսկային իրավիճակների առաջացման մեծ հավանականությունը: Ընդ որում, ռիսկային իրավիճակների առաջացման գործոնները կարող են լինել ինչպես կայուն, այնպես էլ փոփոխական: Այդ գործոնների ազդեցության օբյեկտիվ վերլուծությունն անհնար է առանց ռիսկերի կառավարման և վերլուծության յուրահատուկ մեթոդների կիրառման⁶⁴:

⁶³Клейнер Г.Б. Предприятие в нестабильной экономической среде: риски, стратегии, безопасность.-М.,Экономика,1997, стр.6

⁶⁴ Баканов М.И., Шеремет А.Д., Теория экономического анализа. М., Финансы и статистика, 1999

Ոիսկային իրավիճակների առաջացման միտումները բնորոշ են ոչ միայն ՀՀ-ին: Դրանք համաշխարհային բնույթ ունեն, որոնք մի կողմից կապված են ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու պայմանների խստացման հետ, իսկ մյուս կողմից դրանց վրա մեծ ազդեցություն է ունենում տեխնոլոգիական համակարգերի դինամիկ զարգացման ու բարդության աստիճանի աճի հանգամանքը:

Ոիսկայնության աճի հիմնական պատճառներից կարելի է համարել շուկայի գլոբալացումը, մրցակցության ինտենսիվ բնույթը, տեղեկատվական հոսքերի դինամիկ աճը, սոցիալական լարվածության աճն ու երկրների միջև եկամուտների բաշխման անհավասարությունը և այլն: Դրանք հանգեցնում են ոչ միայն ոիսկայնության աճի, այլև շինարարական կազմակերպությունների առջև բացում են ներդրումային ռիսկերի կառավարման նոր հնարավորություններ:

Անցումային տնտեսության պայմաններում ներդրումային նախագծի վրա մեծ ազդեցություն ունեցող ռիսկային իրավիճակների շրջանակը բավականին լայնէ: Մեծ է նաև դրանց հանդես գալու հավանականությունը: Գործնականում անհնար է հստակ կանխատեսել, թե ներդրումային նախագծի իրականացման փուլում հատկապես որ ռիսկերը հանդես կգան և ինչպիսին կլինեն նրանց դրսնորման հավանականությունն ու ազդեցության աստիճանը: Ներդրումային գործընթացի սուբյեկտներից որևէ մեկը չունի հստակ տեղեկատվություն ՀՀ շուկայի առկա վիճակի և հնարավոր զարգացումների վերաբերյալ: Արդյունքում՝ շատ ներդրումային նախագծեր, նույնիսկ այնպիսինները, որոնք տնտեսապես շահավետ և հիմնավորված են, անկանխատեսելի գործոնների ազդեցությամբ անհաջողության են մատնվում: Այս երևույթին նպաստում է նաև այն հանգամանքը, որ շինարարական կազմակերպություններն իրենց ռազմավարությունները մշակում և իրականացնում են ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող հակասական սոցիալ-տնտեսական վերափոխումների համատեքստում:

Այս պայմաններում չնախատեսված փոփոխությունների հետևանքով կարող են նկատվել ինչպես աշխատանքային պլաններից ժամանակային շեղումներ, այնպես էլ նշանակալի բացասական ազդեցությունների ենթարկվեն պլանավորված քանակական ու որակական ցուցանիշները: Սա չի բխում շինարարական կազմակերպության շահերից, քանի որ ցանկացած կազմակերպության ռազմավարական նպատակը տնտեսական անվտանգության ապահովումն ու անհրաժեշտ որակի և ժամանակին աշխատանքների ավարտն են:

Պայմանավորված ՀՀ տնտեսական գարգացման առանձնահատկություններով՝ շինարարության ոլորտի կազմակերպությունները պետք է որդեգրեն սոցիալ-տնտեսական պոտենցիալի դինամիկ աճի ռազմավարություն՝ միաժամանակ մեծ ուշադրություն դարձնելով անցանկալի փոփոխությունների հետևանքով ոչ ստանդարտ կառավարման մոտեցումներ կիրառելու հնարավորություններին: Այս համատեքստում պետք է մեծ ուշադրություն դարձվի նաև շինարարական կազմակերպությունների կառավարման կառուցվածքների կատարելագործմանը:

ՀՀ-ում գործող շինարարական կազմակերպությունների մեծ մասին բնորոշ է կառավարման հիերարխիկ կառուցվածքը: Այս կառուցվածքների հիմնական թերությունը տեղեկատվության դանդաղ շարժն է, ինչը երկարացնում է կառավարչական որոշումների ընդունման ժամանակն ու նվազեցնում փոփոխվող միջավայրին արձագանքելու կազմակերպության հնարավորությունները:

Նոր, արդյունավետ կազմակերպական կառուցվածքի ձևավորումը տևական է, պահանջում է մեծ ծախսեր և ռեսուրսներ: Սակայն դրա կիրառման շնորհիվ կազմակերպության ձեռք բերած առավելություններն արդարացնում են և հնարավորություն տալիս փոխհատուցել մշակման ու ներդրման փուլերում կատարած ծախսերը: Արդյունավետ է համարվում այնպիսի կազմակերպական կառուցվածքը, որի կիրառումը նվազագույն ծախսերի պայմաններում նպաստում է կազմակերպության նպատակների ամբողջական իրագործմանը:

Ներկայումս լայն տարածում են ստացել մատրիցային կազմակերպական կառուցվածքները, որոնք արդյունավետ են բարդ, արագ փոփոխվող պայմաններում: Այդ կառուցվածքը ճկուն է և թույլ է տալիս արագ արձագանքել շուկայի իրավիճակի, պատվիրատունների ցանկությունների փոփոխություններին:

Մատրիցային կառուցվածքի գլխավոր առավելությունն այն է, որ պայմաններ է ստեղծում սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ մարդկային կապիտալի օպտիմալ օգտագործման համար: Ժամանակակից խոշոր շինարարական կազմակերպությունը կարող է իրականացնել մի շարք գործառույթներ՝ շինարարական օբյեկտների նախագծում, շինանյութերի արտադրություն և այլն: Խոշոր շինարարական կազմակերպությունները կարող են կիրառել կառավարման ցանկացած կազմակերպական կառուցվածք և ամբողջությամբ իրենց ուժերով իրականացնել ներդրումային շինարարական նախագիծը: Դրանց համար առավել հեռանկարային է

դիվիզիոնալ կազմակերպական կառուցվածքը, որը կառուցված է գործունեության ուղղությունների գծով բիզնես միավորների ստեղծմամբ, ինչը թույլ է տալիս այդ գործունեության արդյունքների նկատմամբ հստակ վերահսկողություն իրականացնել:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ գոյություն ունի հստակ կապշինարարական կազմակերպության չափերի, դրա գործունեության դիվերսիֆիկացիայի մակարդակի, կառավարման կազմակերպական ձևի և կառուցվածքի ընտրության միջև: Օպտիմալ կազմակերպական կառուցվածքի ընտրությունը հնրավարություն է տալիս նվազեցնել ռիսկերն ու դրանց հնարավոր բացասական ազդեցությունները, սակայն գործնականում հնարավոր չէ ամբողջությամբ խուսափել ռիսկերից:

Ինչպես նշվել է, ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն ուղեկցվում է ռիսկերով: Ձեռներեցը չի կարող անընդհատ խուսափել ռիսկերից: Եթե գոյություն ունի ռիսկը, ապա գոյություն ունեն նաև ռիսկերի կառավարման տարրեր մոդելներ և մեխանիզմներ, որոնց շնորհիվ հնարավոր է նվազեցնել կորստի մեծությունն ու անցանկալի իրավիճակների հանդես գալու հավանականությունը⁶⁵:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ նախագծերի կառավարման հատկապես ռիսկերի կառավարմանն առնչվող գործընթացներում հետ խորհրդային երկրների շինարարական կազմակերպություններում առավել մեծ տարածում ունի ԱՄՆ-ի նախագծերի կառավարման ինստիտուտի մոտեցումը (“A guide to the project management body of knowledge”)⁶⁶:


Ներկայումս գոյություն ունի անորոշության և ռիսկի պայմաններում շինարարական ներդրումային նախագծերի արդյունավետության և կայունության հաշվառմամբ ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատման երկու հիմնական մոտեցում⁶⁷: Այս մոտեցումների հիմնական թերությունն այն է, որ կոչված են հիմնավորելու շինարարական և մոնտաժային աշխատանքների ապահովագրության անհրաժեշտությունը: Սակայն դրանք մեծ կարևորություն են տալիս ժամանակի

⁶⁵ Whitty, S.J. and Schulz, M.F. THE_PM_BOK_CODE. — 20th IPMA World Congress on Project Management, 1, 466-472, 2006.

⁶⁶ Абрамов Е.А., Инвестиционные фонды: Доходность и риски, стратегии управления портфелем, объекты инвестирования в России. –М.: Альпина Бизнес Букс, 2005. – 416 с

⁶⁷ Абрамов С.И., Проблемы и перспективы привлечения иностранных инвестиций в экономику России., - М.: Центр экономики и маркетинга, 2008. - 440 с.

ցանցկացած պահի կտրվածքով ոիսկի աստիճանի կանխատեսմանը, ինչպես նաև առավել նշանակայի գործոնների վերահսկողության շնորհիվ ներդրումային գործունեության վրա ոիսկի ազդեցության նվազեցման տնտեսական մեթոդների մշակմանը: Այս մեթոդների հիմքում շինարարական կազմակերպության գործունեության սխեման է՝ տնտեսավարող սուբյեկտների հիմնական խմբերի և միջավայրաստեղծ գործոնների հետ փոխհարաբերությունների համատեքստում (Գծապատկեր 2.2.1):



Գծապատկեր 2.2.1. Շինարարական կազմակերպության՝ տնտեսավարող սուբյեկտների հիմնական խմբերի և միջավայրաստեղծ գործոնների հետ փոխհարաբերությունների սխեմա

Գծապատկեր 2.2.1-ում արտացոլված են շինարարական կազմակերպության հիմնական ֆինանսական, նյութատեխնիկական, կադրային և տեղեկատվական կապերն ու փոխհարաբերությունները: Դրանք բնութագրում են շինարարական արտադրանքի թողարկման գործընթացը՝ արտացոլելով ներդրումային միջոցների փոխակերպումը հումքի, նյութերի, տեխնոլոգիաների և աշխատուժի: Գծապատկերում հստակ արտացոլված են նաև արտաքին միջավայրի առավել առանցքային փոփոխականների հետ շինարարական կազմակերպությունների հիմնական կապերն ու փոխհարաբերությունները: Այս համատեքստում պետք է կարևորել մատակարարների, մրցակիցների, սպառողների և պետության հետ հարաբերությունների համակարգը, որոնք էլ, վերջին հաշվով, ներառում են ռիսկային իրավիճակների առաջացման հիմնական պայմանները:

Վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ ԼՂՀ-ի շինարարության ոլորտում ներդրումային գրավչության մակարդակն աստիճանաբար նվազում է, ինչը ենթադրում է, որ այն բնութագրվում է առավել մեծ ռիսկայնության մակարդակով: ԼՂՀ-ի շինարարության ոլորտում դրսուրվող հիմնական ռիսկերից կարելի է առանձնացնել հետևյալները.

I. Տնտեսական ցնցումներին դիմակայելու ԼՂՀ տնտեսության հնարավորություններից ծագած մակարդակ: Համաշխարհային ճգնաժամի հետևանքով ԼՂՀ ներդրումային քաղաքականության հետ կապված ծանրակշիռ խնդիրներ են առաջացել: Շատ շինարարական օբյեկտներ ավարտին չեն հասցվում անբավարար ֆինանսավորման կամ դրա բացակայության պատճառով: Արդյունքում՝ հիմնական ֆոնդերի նորացման գործընթացը դանդաղում է, ինչի հետևանքով աճում է ֆիզիկապես և բարոյապես մաշված ֆոնդերի տեսակարար կշիռը: 2001թ.-ի սկզբին հիմնական միջոցների մաշվածությունն արդեն իսկ կազմում էր 65%: Չթերագնահատելով այլ բացասական հետևանքների նշանակալիությունը, պետք է նկատել, որ հիմնական ֆոնդերի ֆիզիկական մաշվածության խնդրի լուծումը պահանջում է մեծ ներդրումներ, որոնց համար աղբյուր կարող են հանդիսանալ ամորտիզացիոն հատկացումները⁶⁸:

⁶⁸ Нагорно-Карабахская Республика: Становление государственности на рубеже веков. Институт политических исследований, ГНКО, Ереван, 2009, -37стр

II. Գնաճայախն ճնշումների և դրամավարկային կառույցների ակտիվության ցածր մակարդակի ռիսկ: Պետք է նկատել, որ ՀՀ տնտեսության անկայունության, էներգակիրների և հումք-նյութերի գների շարունակական բարձրացումը պայմանավորում են շինարարական նախագծերի ինքնարժեքի դինամիկ աճը: Ի հավելումն սրա՝ շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեության պահանջների համեմատությամբ բավականին ցածր է վարկային համակարգի ակտիվությունը: Շինարարական նախագծերում կատարվող ներդրումների հետ գնման ժամկետը համեմատաբար երկար է, իսկ բանկերը խուսափում են վարկավորել նման ծրագրերը: Թեև վարկային համակարգն ունի բավարար միջոցներ, սակայն հաշվի առնելով անցյալի փորձը, շինարարական նախագծերի վարկավորման ժամանակ առաջնորդվում է խիստ պահանջներով: Այդ երևույթի խորացմանը նպաստում են նաև ներդրումային ռիսկերի ապահովագրման համակարգի թերզարգացվածությունը, սնանկացման գործընթացների կարգավորման հետ կապված դժվարությունները, գրավադրման համակարգի խնդիրները և այլն⁶⁹:

III. Շինարարության ոլորտում իրականացվող ներդրումների պետական հատվածի չափերի նվազման ռիսկ: Պետության դերը, որն ավանդաբար եղել է ՀՀ տնտեսության մեջ ներդրումներ կատարող հիմնական սուբյեկտը, կտրուկ նվազել է: Պետական կառավարման համակարգի գորեթե բոլոր մակարդակների բյուջեներից կատարվող ներդրումների ծավալը կարելի է համարել խորհրդանշական: Այս երևույթի հիմնական բացատրությունն այն է, որ պետությունը շահագրգոված չէ մեծամասշտաբ ներդրումներ իրականացնել շինարարության ոլորտում, որտեղ գործում են հիմնականում մասնավոր բաժնետիրական ընկերություններ, սակայն մյուս կողմից մեծ չէ պետական ներդրումների ծավալը նույնիսկ այն ոլորտներում, որտեղ բաժնետոմսերի զգալի մասը պատկանում են պետությանը: Պետական ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 5-6%:

Սրան զուգահեռ՝ վերջին տարիներին ՀՀ տնտեսության մեջ նկատելի նվազել են նաև օտարերկրյա ներդրումները, որի հիմնական պատճառը թերևս տնտեսական ու քաղաքական կայունության երաշխիքների բացակայությունն է: Իրավիճակն էլ ավելի է սրվում՝ կապված բնակչության ցածր եկամուտների հետ: Բնակչության եկամուտների

⁶⁹ Арсеньев Ю. Н., Сулла М. Б., Минаев В. С., Управление экономическими и финансовыми рисками. М. Высш. шк. 1997. 388 с.

աճը լավագույն դեպքում հնարավորություն է տալիս փոխհատուցել գնաճի հետևանքները: Պետք է հուսալ, որ քաղաքական իրավիճակի կայունացումը նպաստավոր պայմաններ կձևավորի կայուն տնտեսական զարգացման համար, ինչն էլ կբարձրացնի ներդրումային ակտիվությունը:

Այսպիսով, ՀՀ շինարարության ոլորտի հիմնական պոտենցիալ ներդրողների խումբը տնտեսության մյուս ոլորտների կազմակերպություններն են, երկրորդը՝ ներդրումային ֆոնդերը, իսկ երրորդը սփյուռքը: Նկատի ունենալով տնտեսական զարգացման արդի առանձնահատկությունները՝ այս միտումները կպահպանվեն նաև մոտ ապագայում:

Ներդրումային ֆոնդերն, անկասկած, կարող են ունենալ ծանրակշիռ դեր շինարարական նախագծերի ֆինանսավորման հարցում, սակայն այդ դերը դեռևս նշանակալի չէ: Նույնը կարելի է ասել նաև օտարերկրյա ներդրողների մասին: Եթե հնարավոր լինի կասեցնել նաև ազգաբնակչության կողմից բնակարանաշինության ոլորտում կատարվող ներդրումների փոշիացման վատ ավանդույթը, տնային տնտեսությունները նույնպես շահագրգոված կլինեն կատարել մեծ ծավալով ներդրումներ: Ինչպես նշում է Ի. Բուզովան, այս միտումը բնորոշ էր բոլոր հետխորհրդային երկրներին⁷⁰:

Վերը նշվածի հետևանքներն ակնհայտ են. Տարեցտարի աճում է ավարտին չհասցված շինարարական օբյեկտների քանակը, իսկ ներդրումային ծրագերում ներառվողներինը՝ նվազում: Թեև վերջին տարիներին որոշ մասնավոր կազմակերպություններ սեփական միջոցների հաշվին կառուցում են բնակելի տներ և վաճառում ազգաբնակչությանը, սակայն ազգաբնակչության եկամուտների ցածր մակարդակի պատճառով այս երևույթն զարգացման մեծ հեռանկարներ չունի:

IV. Աշխարհաքաղաքական և պատերազմի վերսկսման ռիսկեր: 21-րդ դարի երկրորդ տասնամյակում Կովկասում դեռևս պահպանվում է բարդ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ պայմանավորված մի շարք սառեցված հակամարտությունների առկայությամբ և անցումային տնտեսությանը բնորոշ հիմնախնդիրներով: Այդ հիմնահարցերի շարքում առանձնահատուկ է Արցախյան հակամարտությունը, որը պայմանավորում է բազմաթիվ տնտեսական խնդիրների առկայությունը: Այդ հիմնախնդիրներն առավել ցայտուն դրսևորվում են նաև

⁷⁰ Бузова И. Коммерческая оценка инвестиций. СПб.: Питер. 2003 г. с. 77

շինարարության ոլորտում: Մասնավորապես, ՀՂՀ կարգավիճակի անորոշությունը և պատերազմի վերսկսման մեծ հավանականությունը խոչընդոտում են օտարերկրյա ներդրումների իրականացմանը: Սահմանամերձ շրջաններում առկա է նաև անվտագության ապահովման լուրջ խնդիրներ, ինչն էլ սահմանափակում է մասնավոր ներդրումների միջոցով լայնածավալ շինարարություն իրականացնելու մասշտաբները: Փաստորեն, մի կողմից ՀՂՀ-ին բնորոշ է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգավիճակը, իսկ մյուս կողմից շրջափակումը հնարավորություն չի տալիս թողարկել մրցունակ շինարարական արտադրանք՝ պայմանավորված տեխնիկական և տեխնոլոգիական նոր լուծումներ պահանջող նախագծերի ֆինանսավորման մեծ ծախսերով: Այս համատեքստում պետք է առանձնակի կարևորել ներդրումային գործունեության կարգավորման հարցում պետության ֆունկցիոնալ դերն ու նշանակությունը:


ՀՂՀ-ի՝ որպես համաշխարհային շուկա ուղղակի ելք չունեցող չճանաչված Հանրապետության արդյունաբերաշինարարական պոտենցիալի զարգացման համար շինարարական նախագծերում ներդրումների խթանումն առաջնահերթ է, որի շնորհիվ հնարավոր կլինի նորացնել հիմնական ֆոնդերը, բարձրացնել շինարարական կազմակերպությունների արտադրանքի կազմակերպատեխնիկական մակարդակը, արագացնել տնտեսության զարգացման տեմպերն ու ապահովել կենսամակարդակի աճ:

Ի թիվս այլ գործառույթների՝ բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման համար պետությունը պետք է գործուն քայլեր ձեռնարկի հետևյալ ոլորտներում.

1. Հարկային քաղաքականություն,
2. Ամորտիզացիոն քաղաքականություն,
3. Գնային քաղաքականություն,
4. Դրամավարկային քաղաքականություն:

Օբյեկտիվության համար պետք է նշել, որ այս ոլորտներում ՀՂՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները գոհացուցիչ չեն: Գնահատելով իրավիճակը, կարելի է պնդել, որ հարկային քաղաքականության մեջ որոշակի փոփոխություններ իրականացնելով՝ առանց շինարարության բնաիրային ծավալների էական

փոփոխության նշանակալի բարձրացվել են արժեքային ցուցանիշները, ինչն էլ իր հերթին զայում է ոլորտի աճի տեմպերը:



Գծապատկեր 2.2.2 ԼՂՀ շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը 2010-15թթ.⁷⁰

Ինչպես արտացոլված է 2.2.2 գծապատկերում 2010-2015թթ-ի ընթացքում շինարարական կազմակերպությունների շահութաբերության մակարդակը նվազել է մինչև 13%: Այս միտումը բացատրվում է շինարարության ինքնարժեքի և վերջնարդյունքների գների միջև մեծ ճեղքվածով՝ հօգուտ առաջինի: Անկասկած, սա բացասաբար է ազդում ներդրումային ակտիվության վրա, քանի որ էականորեն աճում են շինարարական նախագծերում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկերը⁷¹: Շինարարական աշխատանքների դիմաց կատարվող վճարումների հետ կապված դժվարությունները, մերենասարքավորումների շահագործման ծախսերի անընդհատ աճն էլ ավելի են սրում իրավիճակը: ԼՂՀ վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալներով 2010թ.-ի սկզբներին շինարարական կազմակերպություններին պատվիրատունների ունեցածպարտքը կազմել է շուրջ 1.36 մլրդ.դրամ: Դեբիտորական պարտքերի այսպիսի ծավալը նույնպես հնարավորություն չի տալիս շինարարական կազմակերպություններին նորացնել արտադրական ֆոնները, ձեռք բերել նորագույն տեխնիկա ու տեխնոլոգիաներ և դրանով իսկ

⁷¹ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Զեկույց, <http://www.stat-nkr.am>

նկատելիորեն նվազեցնել թողարկման ինքնարժեքը: Վերջին հաշվով, սա էլ ևս մեկ խոչնդուտ է ներդրումների ներգրավման տեսանկյունից:

V. Հումք-նյութերի մատակարարման անխափանության ապահովման ռիսկերի: ՀՀ-ում շինարարական աշխատանքներն իրականացվում են ինչպես տեղական արտադրության, այնպես էլ ներմուծվող հումք-նյութերով: Աշխարհաքաղաքական իրավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ շինարարական հումք-նյութերի մատակարարման անխափանության ապահովումն առնչվում է որոշակի ռիսկերի հետ:

VI. Նշանակալի են նաև ֆինասավորման հետ կապված ռիսկերը: Հիմնական պատճառն այն է, որ ՀՀ-ն փաստացի գտնվում է տնտեսական շրջափակման մեջ, և տեղի ունեցող չնշին արտաքին ցնցումներն անգամ նշանակալի ազդեցություն են ունենում ներդրումային միջավայրի վրա. աճում է ռիսկայնության մակարդակը, և մասնավոր ներդրողները պետք է կայացնեն նոր իրավիճակում ներդրումներ իրականացնելու հետ կապված որոշումներ: Որոշակի ռիսկեր են ի հայտ գալիս նաև հատուկ օբյեկտների շինարարության (ճանապարհներ, հիդրոէլեկտրակայաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն) գործընթացում: Պատճառն այն է, որ այսպիսի օբյեկտների միակ պատվիրատուն պետությունն է, իսկ պետության կողմից տրամադրված միջոցներով շատ դեպքերում շինարարական կազմակերպությունը կարողանում է միայն փոխհատուցել կատարած ծախսերը: Ըստ Էռլիյան, մասնավոր ներդրողները նույնպես բախվում են ֆինանսական ռիսկերի, քանի որ նրանց եկամուտն ուղղակիորեն կախված է պահանջարկի մեծությունից:

VII. Պատրաստի արտադրանքի իրացման ռիսկեր՝ պայմանավորված բնակչության ցածր կենսամակարդակով և ներքին պահանջարկի փոքր ծավալով: 2003-08թթ.-ի ընթացքում ՀՀ մայրաքաղաք Ստեփանակերտում անշարժ գույքի 1ք.մ.-ի արժեքը տատանվել է 700-900 ԱՄՆ դոլարի միջակայքում: 2007-09թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո անշարժ գույքի իրացվելիությունը կտրուկ նվազեց, ինչի արդյունքում շինարարության ոլորտի ակտիվներն արժեզրկվեցին 30-40%-ով⁷²:

⁷² Нагорно-Карабахская Республика: Становление государственности на рубеже веков. Институт политических исследований, ГНКО, Ереван, 2009, -37стр.

2010-2016թթ. անշարժ գույքի իրացվելիությունը նվազել է մինչև 635 ԱՄՆ դոլար 1 ք.մ համար⁷³: Համեմատությունը << ցուցանիշների հետ բավականին ցայտուն է, այսպես օրինակ՝ 2005-2010թթ. ժամանակահատվածում «Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում» գործունեության տեսակն ունեցել է շինարարության ծավալների ամենաբարձր ցուցանիշը, համապատասխանաբար՝ 46,6%, 48,1%, 50,2%, 60,8%, 33,6% և 30,9%: Հատկապես 2009թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ գործունեության նշված տեսակի կտրուկ անկումը (շուրջ 2 անգամ, իսկ արժութային արտահայտությամբ 327,1 մլրդ դրամով) բացատրվում է տնտեսական ճգնաժամով և որպես դրա հետևանք բնակչության դրամական եկամուտների զգայի նվազմամբ⁷⁴:

Վերջին տարիներին ՀՀ անշարժ գույքի շուկայում նկատվում է ուղղակի վաճառքի տեմպերի ավելացման միտում: Շինարարական կազմակերպությունը, որը նաև պատվիրատուն է, ծրագրով ֆինանսավորող բանկի հետ համատեղ իրականացնում է նաև պատրաստի օբյեկտների վաճառքը: Այստեղ առաջանում է իրացվելիության ոիսկ՝ կապված այն հանգամանքի հետ, թե կառուցված շինությունը որքանով է համապատասխանում գնորդների պահանջներին:

VIII. Արժութային ռիսկեր: Մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորվող շատ շինարարական նախագծեր բախվում են նաև արժութային ռիսկերի, քանի որ դրանք իրականացվում են բանկերի կողմից տրամադրված դոլարային վարկերով: ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումները նշանակալի ազդեցություն կարող են ունենալ վարկառուի համար:

Այսպիսով, շինարարության ոլորտում ներդրումների ռիսկայնությունը պայմանավորող վերը թվարկված գործուների ազդեցությամբ ռիսկերի կառավարման համակարգված մոտեցման մշակումն ու իրականացումը դարձել են օրվա իրամայականը: ՀՀ շինարարության ոլորտին առավել բնորոշ այս ռիսկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել տարբեր ներքին և արտաքին գործոններ, որոնք ազդում են ներդրումային շինարարական նախագծերի իրականացման հետ կապված որոշում կայացնելու գործընթացի վրա:

⁷³ Ա.Մարկոսյան, Հայաստանի Հանրապետությունում շինարարության զարգացման արդյունքները և հիմնախնդիրները, էջ 13

⁷⁴ ՀՀ Վիճակագրական տարեգիր 2010-2016թթ.

ՀՂՀ-ում վերը թվարկված ոիսկերի հաշվառմամբ ներդրումային շինարարական նախագծեր իրականացնելու որոշումներ կայացնող հիմնական սուբյեկտներն են պետությունը, շինարարական կազմակերպությունների ղեկավարները, և այն անձիք, ովքեր աշխատում են կապիտալ շինարարության ոլորտում:

ՀՂՀ շինարարության ոլորտի ոիսկերի գնահատումը ենթադրում է ոիսկերի վերլուծության, դրանց առաջացման պատճառների բացահայտման, կոնկրետ կազմակերպության համար հետևանքների մասշտաբայնության մշտադիտարկում:


Ոիսկի գնահատման ռազմավարությունը կառուցվում է կոնկրետ կազմակերպության առանցքային կողմերի (գիտական, տեխնիկական, տնտեսավարման, մարքեթինգային, սոցիալական և այլն) և դրա գործունեության միջավայրի համակողմանի ուսումնասիրության հիման վրա:

Ինչ վերաբերում է ոիսկի ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրությանը, ապա առաջնային են դառնում ոիսկի մակարդակի գնահատման ցուցանիշների որոշումը, ինչպես նաև ցուցանիշների և գործոնների միջև փոխհարաբերությունների հաստատման մեխանիզմներն ու մոդելները, որոնք նշանակալի ազդեցություն ունեցող հիմնական գործոնների ամբողջությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (Գծապատկեր 2.2.3).

Պետք է նկատել, որ ներկայացված գործոններից որոշներն ունեն երկակի նշանակություն, դրանք ոչ միայն նպաստում, այլև խոչընդոտում են ոիսկի պայմաններում որոշումների կայացման գործընթացի վրա: Ընդհանուր առմամբ, ոիսկի պայմաններում որոշումների կայացման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցող հիմնական գործոնների ամբողջությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (Գծապատկեր 2.2.3).

ՀՂՀ շինարարական կազմակերպությունների ոիսկերի վերլուծությունը շինարարական կազմակերպություններին հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել իրենց կազմակերպատեխնիկական և տնտեսական ներուժը, կախված ոիսկերի համախմբության առանձնահատկություններից՝ սահմանել գործառնական և ֆինանսական լծակների օպտիմալ սահմաններ, ինչպես նաև ճիշտ գնահատել տնտեսական կայունության մակարդակը: Վերջինիս իրականացմանը

Նպաստում է նաև կազմակերպության տնտեսական կայունության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող ռիսկերի հիմնական տեսակների համակարգումը:




Գծապատկեր 2.2.3 Ռիսկի պայմաններում որոշումների կայացման վրա ազդող գործոնները

Համակարգային մոտեցման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ռիսկերի վերահսկման և կառավարման հետ կապված տարբեր մակարդակներում (պետության, կազմակերպության, անհատի) ծախսերի աճով: Այս ծախսերը կարող են հանգեցնել հասարակական արտադրության արդյունավետության անկման և բացասաբար ազդել երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա⁷⁵:

ԼՂՀ տնտեսության հիմնական խնդիրներից մեկը ներդրումային նախագծերի ֆինանսավորման ժամանակ շինարարական կազմակերպությունների ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացների կատարելագործումն է, ինչը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 2.2.4):

⁷⁵ Венделин А. Г., Подготовка и принятие управленческого решения, пер.с Венг. М.: Экономика. 1997. 150 с.



Գծապատկեր 2.2.4 Ներդրումային նախագծերի ֆինանսավորման ժամանակ շինարարական կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի գնահատման և կառավարման կատարելագործման ալգորիթմ

Այս ալգորիթմը միտված է կատարելագործելու ՀՀ-ում իրականացվող շինարարական ներդրումային նախագծերի ռիսկերի կառավարման համակարգն ու բարձրացնելու կիրառվող միջոցառումների արդյունավետությունը: Պետք է նկատել, որ ՀՀ շինարարության ոլորտում ներդրումային նախագծերի մշակումն ու իրականացումը երկու հիմնական նպատակ են հետապնդում:

1. Կառուցել այնպիսի օբյեկտ, որը բավարարում է պատվիրատունների, ներդրողների և գնորդների պահանջներին ու հաստատված նորմերին:

2. Զևսվորել այնպիսի մեխանիզմ, որը պատվիրատուին հնարավորություն կտա փոխհատուցել կատարված ծախսերն ու եկամուտ ստանալ:

Նախորդ տասնամյակներում ՀՀ-ի շինարարության ոլորտում ռիսկերի կառավարման գերխնդիրներից մեկը անբավարար տեղեկատվությունն էր, ինչը պայմանավորված էր արտաքին աշխարհից մեկուսացվածության բարձր մակարդակով: Վերջին տարիներին, շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների

սրընթաց զարգացման և հատկապես համացանցի տարածման շրջանակների ընդլայնման, այդ խնդիրը կորցրել է իր արդիականությունը: Սակայն, ի հայտ է եկել տեղեկատվության հետ կապված մեկ այլ խնդիր՝ համացանցը, հանդիսանալով տեղեկատվության գործնականում անսպառ աղբյուր, ծևավորել է ավելցուկային տեղեկատվության հսկայական պաշար, որի վերլուծությունն ու մշակումը թե՛ ժամանակային, թե՛ ֆինանսական առումներով բավականին ծախսատար են: Այսպիսով, ներկայումս անհրաժեշտ տեղեկատվության հավաքման և մշակման համար պահանջվող տևական ժամանակի պատճառով հնարավոր է բաց թողնվի ռիսկերի վրա արդյունավետ ազդելու և իրավիճակը վերահսկողության տակ պահելու պատեհ պահը:

Այս խնդրի հաղթահարման համար այժմ շատ կազմակերպություններ ներդնում են այնպիսի տեղեկատվական համակարգեր, որոնց հիմնական խնդիրն անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և ըստ նպատակի օգտագործումն են: Ընդ որում, անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես պաշտոնական (ֆինանսական հաշվետվություններ, բիզնես պլաններ, պաշտոնական տեղեկագրեր և այլն), այնպես էլ ոչ պաշտոնական աղբյուրները:

Այսպիսով, կարելի է պնդել, որ տեղեկատվության անբավարարության հետ կապված ռիսկը հակադարձ համեմատական է այն հանգամանքին, թե որքանով է ձեռներեցը տիրապետում իր կազմակերպության արտաքին միջավայրի վերաբերյալ տեղեկատվությանը: Պետք է ունենալ հստակ տեղեկատվություն մրցակիցների, գործընկերների և հատկապես մատակարարների վերաբերյալ: Առանձնակի կարևորություն պետք է տրվի նաև գնորդների նախասիրությունների բացահայտմանն ու շուկայական գների միտումների: Այսպիսի տեղեկությունների բացակայությունը նշանակալիորեն բարձրացնում է ռիսկային իրավիճակների հանդես գալու հավանականությունը:

2.3 ԼՂՀ շինարարության ոլորտի ֆինանսավորման աղբյուրներն ու արդյունավետության գնահատումն Էկոնոմետրիկ մոդելով

ԼՂՀ կառավարությունը միշտ էլ վարել է ակտիվ ներդրումային քաղաքականություն: Նույնիսկ այն տարիներին ու ժամանակաշրջաններում, երբ <<

կառավարությունը վարել է զսպողական քաղաքականություն, ԼՂՀ կառավարությունը միշտ էլ խրախուսել է առաջարկը: Սույն առանձնահատկության բնորոշ գիծը ներդրումային ու վարկային ծրագրերում ԼՂՀ կառավարության լայնամասշտաբ ընդգրկվածությունն է: Ընդհանուր առմամբ նման մոտեցումն իրեն արդարացրել է՝ ապահովել է տնտեսության համեմատաբար բարձր տեմպերով աճը, փոխհատուցվել են (մասամբ) ԼՂՀ տարածքում տրանսպորտային գործոններով պայմանավորված ավելի բարձր ծախսերը, կանխվել է լայնամասշտաբ արտագաղթը (ինչպիսին որ առկա է Հայաստանում): Պետք է նշել նաև, որ պետության նման ակտիվ ներդրումային քաղաքականությունը չի հանգեցրել Հայաստանի համեմատ ավելի բարձր կոռուպցիոն ռիսկերի: Բնական է, որ բարձր է եղել տնտեսական ռիսկը: Շատ ձեռնարկումներ հետագայում չեն խորացել և այդպես էլ չեն դարձել կայուն ու երկարատև զարգացման գրավական⁷⁶:

ՀՀ շինարարության ոլորտի զարգացումը, և դրանում գործող խոշոր կազմակերպությունների գործունեության արդյունքների բարելավումն ու կառուցվող օբյեկտների որակական բնութագրերի լավացումը մեծապես պայմանավորված են տվյալ ոլորտի իրավական դաշտի՝ օրենսդրության ու նորմատիվային բազայի կատարելագործմամբ:

ՀՀ-ում ձևավորված շինարարական ոլորտի խնդիրները՝ կապված շինարարության որակի բարձրացման, վթարային բազմաբնակարան շենքերի վերակառուցման, շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական բնակարանաշինության, ազգային անվտանգության ապահովմանն առնչվող ճանապարհաշինության և նմանատիպ այլ բարեփոխումների (վարչական արգելքների վերացման, հողատարածքների տրամադրման կարգի բարելավման, շինարարական նորմատիվների արդիականացման և այլն) ճանապարհով:

Ռիսկի պայմաններում առավել արդիական է դառնում կանխատեսման մեթոդների մշակումը, ինչպես նաև տնտեսա-մաթեմատիկական և էկոնոմետրիկ

⁷⁶ ԼՂՀ կառավարության 2014-2018թ. տնտեսական քաղաքականության

(ինչպես վիճակագրական, այնպես էլ փորձագիտական) մոդելների կիրառմամբ կանխատեսման համակցված մեթոդների մշակումը⁷⁷:

Ինչպես ընդունված է դեռևս գիտական մենեջմենթի հիմնադիր Անրի Ֆայոլի ժամանակներից՝ մենեջերի հիմնական աշխատանքները կանխատեսումն ու ծրագրավորումն են:

Եքսպոնենցիալ հարթեցման հիման վրա կառուցված մեթոդների հետ մեկտեղ կանխատեսումների համար արդեն տևական ժամանակ է կիրառվում են ռեգրեսիոն ալգորիթմները (մասնավորապես՝ կորրելացիոն մեթոդը), որոնց էությունը հակիրճ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

Գոյություն ունի կանխատեսվող Y փոփոխականը (կախյալ փոփոխական) և նախապես ընտրված փոփոխականների խումբ՝ X_1, X_2, \dots, X_N (անկախ փոփոխականներ) որոնցից կախված է Y -ը: Անկախ փոփոխականները կարող են լինել բազմաթիվ: Օրինակ՝ ենթադրենք Y -ը $ԱՀ$ -ի տնտեսության տարբեր ոլորտներում կառուցվող շինանարական օբյեկտներ են, ապա որպես անկախ փոփոխականներ կարող են հանդես գալ տվյալ, նախորդ և այլ տարիների ընթացքում տարբեր աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցները:

Կարևոր է, բոլոր արտաքին գործոնները, որոնցից կարող է կախված լինել ֆինանսավորման մակարդակը, բերել թվային տեսքի (1):

Ընդհանուր առմամբ բազմագործոն ռեգրեսիոն մոդելը ներկայացվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$Y = F(X, \beta) + \varepsilon \quad (1)$$

Կախյալ փոփոխականի կախումը անկախ փոփոխականներից գծային է կոնոմետրիկ մոդելի ավելի պարզեցված տարբերակով ունի հետևյալ տեսքը.

$$Y_t = \beta_0 + \beta_1 X_{t2} + \beta_2 X_{t3} + \beta_3 X_{t4} + \dots + \beta_i X_{ti} + \dots + \beta_k X_{tk} + \varepsilon_t, \quad (2)$$

որտեղ՝ $\beta_0, \beta_1, \beta_2, \beta_3, \dots, \beta_k$ –մոդելի անհայտ պարամետրերն են, ε -մոդելի պատահական սխալն է (մնացորդը):

Ենթադրվում է, որ մոդելի բոլոր սխալներն անկախ են և ունեն նորմալ բաշխում:

⁷⁷Гмурман В.Е., Теория вероятности и математическая статистика. М, 1999

ԼՂՀ-ի կոնկրետ ճյուղի շինարարության ծավալների և տվյալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների միջև կապ գտնելու համար կիրառենք հետևյալ էկոնոմետրիկ մոդելը.

$$Y_{ti} = \beta_{0i} + \beta_{1i}X_{t1} + \beta_{2i}X_{t2} + \beta_{3i}X_{t3} + \beta_{4i}X_{t4} + \beta_{5i}X_{t5} + \beta_{7i}X_{t7} + \varepsilon_{ti}, \quad (3)$$

որտեղ Y_{ti} – i -րդ ճյուղում շինարարության ծավալն է t տարում, $X_{t1}, X_{t2}, X_{t3}, X_{t4}, X_{t5}, X_{t6}, X_{t7}$ – t տարում համապատասխան աղբյուրներից ֆինանսավորման ծավալներն են, $\beta_{0i}, \beta_{1i}, \beta_{2i}, \beta_{3i}, \beta_{4i}, \beta_{5i}, \beta_{6i}, \beta_{7i}$ – մոդելի անհայտ պարամետրերն են, որոնք համապատասխանում են i -րդ ճյուղին, ε_{ti} – մոդելի պատահական սխալն է t տարվա i -րդ ճյուղի համար, t -ն ցույց է տալիս տարին (2000-2016թթ.), i -ն ցույց է տալիս հերթական ճյուղը (կա 10 ճյուղ):

Տաս էկոնոմետրիկ մոդելների գնահատման նպատակով կիրառվում է տվյալների հետևյալ էկոնոմետրիկ բազան (տես հավելված 1, աղյուսակ 2.3.1 և աղյուսակ 2.3.2):⁷⁸

Մոդելի անհայտ պարամետրերը գնահատվում են փոքրագույն քառակուսիների մեթոդով:

Ոեզրեսիոն հավասարման հետ աշխատելիս անհրաժեշտ է որոշակի գգոնություն և մշակված մոդելի համապատասխանության պարտադիր ստուգում: Գոյություն ունեն ստուգման տարբեր միջոցներ:

Դիտարկվել են միայն այն մոդելները, որոնցում դետերմինացիայի գործակիցը մեծ կամ հավասար է 60 տոկոսի, իսկ նշանակալիության մակարդակը՝ $p \leq 0.05$:

⁷⁸Журналы “Статистическое управление НКР 2011-2015г.”.

Աղյուսակ 2.3.3. Մոդելների գնահատման արդյունքներ

Անկախ փոփոխականներ: X	Գնահատման արդյունքներ											
	Կախյալ փոփոխական: Y											
	Y9	Prob	Y10	Prob	Y11	Prob	Y13	Prob	Y14	Prob	Y16	Prob
C	-148.4	0.7671	-399.6	0.4641	1127.2	0.5641	3718,3	0.2331	1497.4	0.1234	-1946,2	0.3124
X1	0.42	0.0000	0.26	0.0002	0.19	0.0000	-	-	0.25	0.0000	-	-
X2	-0.84	0.0001	-	-	-	-	-	-	0.7	0.0012	-	-
X3	-0.73	0.0024	-	-	-	-	-	-	1.37	0.0024	0,26	0.0002
X4	-	-	-0.5	-0.0123	-	-	-	-	-0.76	0.0000	-	-
X5	-1.32	0.0003	-	-	-	-	-	-	1.49	0.0000	0.02	0.0002
X6	1.05	0.0179	-	-	-	-	-1,36	0.0211	-0.49	0.0234	0,51	0.0002
X7	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Rsq adj	0,78	-	0.59	-	0.74	-	0,76	-	0.99	-	0,69	-

Մոդելների ստացված համակարգն ունի հետևյալ տեսքը.

$$\text{VAR9} = -148,4134 + 0,4170 * A - 0,8415 * B - 0,7296 * C - 2,3189 * E + 4,0520 * F$$

$$\text{VAR10} = -399,5726 + 0,2597 * A - 0,4997 * D (r=0.59)$$

$$\text{VAR11} = 1127,1612 + 0,1936 * A \quad (0.74)$$

$$\text{VAR14} = 1497,3976 + 0,2452 * A + 0,6959 * B + 1,3729 * C - 0,7623 * D + 4,4926 * E - 8,4856 * F (0.99)$$

$$\text{VAR13} = + 3718,3280 - 14,3605 * F + 0,0215 * F^{**2} (0.76)$$

$$\text{VAR16} = -1946,1859 - 0,2557 * C + 4,5106 * F (0.69)$$

Եզրակացություններ.

1. $Y9$ (արդյունաբերության ճյուղի շինարարության ծավալներ) կախյալ փոփոխականով մոդել. մոդելի ազատ անդամը աննշան մեծություն է, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.78, իսկ կախյալ պարամետրերը նշանակալի են: $Y9$ -ի վրա դրական ազդեցություն ունեն $X1$ -ը (պետքյութեի միջոցները), $X6$ -ը (Համահայկական ֆոնդի միջոցներ), բացասական ազդեցություն ունեն՝ $X2$, $X3$, $X5$:

$$\text{VAR9} = -148,4134 + 0,4170 * A - 0,8415 * B - 0,7296 * C - 2,3189 * E + 4,0520 * F \quad (1)$$

2. $Y10$ (գյուղատնտեսություն) կախյալ փոփոխականով մոդել. մոդելի ազատ անդամը աննշան մեծություն է, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.59, իսկ կախյալ պարամետրերը նշանակալի են: $Y10$ -ի վրա դրական ազդեցություն ունի $X1$ -ը (պետքյութեի միջոցները), բացասական՝ $X4$ (կազմակերպության սեփական միջոցները):

$$\text{VAR10} = -399,5726 + 0,2597 * A - 0,4997 * D (r = 0.59) \quad (2)$$

3. $Y11$ (տրանսպորտ և կապ) կախյալ փոփոխականով մոդել. մոդելի ազատ անդամը աննշան մեծություն է, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.74, իսկ կախյալ պարամետրերը նշանակալի են: $Y11$ -ի վրա դրական ազդեցություն ունի $X1$ -ը:

$$\text{VAR11} = 1127,1612 + 0,1936 * A \quad (0.74) \quad (3)$$

4. Y13 (տնային տնտեսություն) կախյալ փոփոխականով մոդել. մոդելի ազատ անդամը աննշան մեծություն է, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.76, իսկ կախյալ պարամետրերը նշանակալի են: Y13-ի վրա բացասական ազդեցություն ունի X6-ը:

$$VAR13 = + 3718,3280 - 14,3605 \cdot F + 0,0215 \cdot F \cdot 2(0,76) \quad (4)$$

5. Y14 (կոմունալ տնտեսություն) կախյալ փոփոխականով մոդել. մոդելի ազատ անդամը աննշան մեծություն է, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.99, իսկ կախյալ պարամետրերը նշանակալի են: Y14-ի վրա դրական ազդեցություն ունեն X1, X2, X3, X5-ը, իսկ բացասական ազդեցություն՝ X4, X6:

$$VAR14 = 1497,3976 + 0,2452 \cdot A + 0,6959 \cdot B + 1,3729 \cdot C - 0,7623 \cdot D + 4,4926 \cdot E - 8,4856 \cdot F(0.99) \quad (5)$$

6. Y16 (մշակույթ) կախյալ փոփոխականով մոդել. մոդելի ազատ անդամը աննշան մեծություն է, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.69, իսկ կախյալ պարամետրերը նշանակալի են: Y16-ի վրա դրական ազդեցություն ունեն X3, X4, X6-ը:

$$VAR16 = - 1946,1859 - 0,2557 \cdot C + 4,5106 \cdot F \quad (0.69) \quad (6)$$

Y9 փոփոխականով մոդելի օրինակով կարելի է ասել, որ այլ հավասար պայմաններում արդյունաբերության ոլորտի շինարարության ծավալները կավելանան 420 հազար դրամով, եթե դրա ֆինանսավորումն պետքութեից (X1) ավելացնենք 1 մլն դրամով: Y13 փոփոխականով մոդելի պարագայում, եթե X6 ավելացնենք 1 մլն դրամով, ապա այլ հավասար պայմաններում տնային տնտեսություններ ճյուղի շինարարության ծավալները միջինում կնվազեն 1360000 դրամով: Հարկ է նշել, որ X7(այլ աղբյուրներ) փոփոխականի ազդեցությունն այնքան աննշան է կախյալ փոփոխականի՝ Y-ի վրա, որ նույնիսկ չի ներառվում մոդելներում:

ԳԼՈՒԽ 3: ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

3.1 Շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման պետական քաղաքականության կատարելագործման ուղղությունները ԼՂՀ-ում

Շատ երկրներում օրենսդիր մարմիններն ավելի պահանջկուտ են դառնում այն բանի նկատմամբ, որ շինարարական կազմակերպությունների ղեկավարները գնահատեն իրենց ենթակայության տակ գտնվող օբյեկտի ռիսկերը: Գիտության նոր հնարավորությունների ուսումնասիրությունը, կրթօջախների և մասնագիտացված ասոցիացիաների (Ձեռնարկատերերի միություն և այլն) ակտիվությունը հանգեցնում են նրան, որ հասարակությունը ավելի շատ է գիտակցում ներդրումային ռիսկերի ինտեգրված կառավարման առավելությունները: Բանկերի, ապահովագրական կազմակերպությունների և ձեռնարկությունների ֆինանսիստները, ովքեր մասնագիտանում են ներդրումային ռիսկերի կառավարման խորհրդատվական աշխատնանքերում, առաջ են քաշում շինարարական կազմակերպությունների ռիսկերի կառավարման նոր մեթոդներ՝ որպես հնարավորությունների ու վտանգների համախմբություն, որոնք կարող են բախտորոշիչ դեր ունենալ այդ կազմակերպությունների համար: Այս նորարարությունները պայմանավորված են նաև նրանով, որ տեխնոլոգիայի ու տնտեսության բարդացման հետ մեկտեղ յուրաքանչյուր ռիսկից ապահովագրվելու համար անհրաժեշտ ապահովագրավճարներն ավելանում են: Միևնույն ժամանակ համընդհանուր համակարգչայնացումը թույլ է տալիս մշակել ու ենթակայության տակ պահել պաշտպանության ավելի բարդ միջոցներ: Ներդրումային ռիսկերի կառավարման գործիքակազմի տարրերից ապահովագրությունը, թեպետ մնում է չափազանց կարևոր (որոշ ռիսկերի դեպքում նույնիսկ պարտադիր), սակայն աստիճանաբար դադարում է ամենակարևորը լինելուց:

Հիերարխիայի տարբեր մակարդակներում և տնտեսության տարբեր ճյուղերում մեծ պահանջարկ և տեխնիկական լայն հնարավորություններ ունի ներդրումային ռիսկերի ինտեգրված կառավարումը:

Մեր կողմից առանձնացվել են ՀՀ-ում ներդրումային ռիսկերի մինիմալացման համար անհրաժեշտ պետական քաղաքականության առաջնահերթությունները՝ ուղղված շինարարական կազմակերպությունների ներդրումային գործունեության կարգավորմանը (տես գծապատկեր 3.1.1):



Գծապատկեր 3.1.1 Շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության կարգավորման պետական առաջնահերթություններ

20-րդ դարի վերջին տասնամյակներում մի շարք երկրներում կազմակերպությունները ստիպված եղան անցում կատարել ներդրումային ռիսկերի կառավարման ինտեգրված մոտեցմանը՝ ստեղծելով և կիրառելով նոր օրենսդրական և կարգավորող ակտեր: Այդ օրենքներն ու օրենսդրական ակտերը մշակվում են՝ նպատակ ունենալով ապահովել ընդհանուր սոցիալական անվտանգություն, և մեծ ազդեցություն ունեն գործարար միջավայրի վրա: Ներկայում համընդհանուր միտում է բիզնես-պլաններում առանձնացնել մի բաժին՝ նվիրված ռիսկերի կառավարմանը և շինարարական կազմակերպության ստանդարտների մշակմանը, որոնք ձևավորում են անցանկալի ռիսկերից պաշտպանության աշխատանքները, ռիսկային փորձաքննության անցկացումը, ռիսկերի բացահայտումը և այլն: Շինարարական կազմակերպության գործունեության ստանդարտների մշակումը, որոնք պարտադիր են տվյալ շինարարական կազմակերպության անձնակազմի համար, մեր կարծիքով մոտ ապագայում կդառնան ներդրումային ռիսկերի կառավարման զարգացման հիմնական ուղղությունը:

Ժամանակին զարգացած տնտեսությամբ բոլոր երկրներն անցել են զարգացման այն փուլով, որը նման է ՀՀ-ի ժամանակակից փուլին: Այդ գործընթացը տևել է տասնամյակներ, ինչը թույլ է տվել կուտակել փորձ, ստեղծել հատուկ գրականություն, զարգացնել շուկայական ենթակառուցվածքները, ինչպես նաև ձևավորել մշակույթ, ինչը թույլ է տալիս պայքարել ինչպես չարդարացված բարձր, այնպես էլ չարդարացված ցածր ռիսկերի դեմ: Ներկայում զարգացած երկրներում ներդրումային ռիսկերի կառավարումը շուկայական հարաբերությունների գործնական, ֆինանսական, կրթական և կազմակերպչական մասն է:

Գլոբալիզացիան և համացանցն էական փոփոխություններ մտցրեցին շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման տեսության և պրակտիկայի մեջ: Համացանցը ծնեց սկզբունքորեն նոր հնարավորություններ և համապատասխանաբար նոր ռիսկեր: Տեղեկատվական և տրանսպորտային տեխնոլոգիաների զարգացումն ընդլայնեց ոչ միայն համագործակցության շրջանակները, այլ նաև դրա հետ կապված վտանգները՝ ուժեղացնելով «դոմինոյի էֆֆեկտի» և շղթայական ռեակցիաներից բխող վտանգները: Երկրորդական երկրների

տնտեսական ցնցումները կարող են առաջացնել իրաբխի նման ընդլայնվող դժվարություններ և համաշխարհային մասշտաբների ճգնաժամ:

Վերջին տարիներին շատ շուկաներում աճել է գների տատանման թե՝ ամպիտուլը, թե՝ հաճախականությունը, ինչը նշանակալի ազդեցություն է ունեցել ոիսկային իրավիճակների բնույթի փոփոխման վրա: Խնդիրն այն է, որ փոփոխականությունը բացատրելն այնքան էլ ոյուրին գործ չէ, քանի որ շատ դեպքերում դրա պատճառն այնպիսի գործոններ են, որոնք լայն տարածում են ստացել 20-րդ դարի 2-րդ կեսից սկսած: Պետք է նկատել, որ շուկայական տնտեսության պայմաններում շինարարական կազմակերպության կառավարումն անհամեմատ ավելի բարդ է, քան վարչական համակարգում: Դա կապված է առաջին հերթին այն հանգամանքի հետ, որ այժմ շինարարական կազմակերպություններն ինքնուրույն են ձևավորում իրենց կառավարման համակարգը՝ հետապնդելով ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման գիսավոր նպատակն ու լիակատար պատասխանատվություն կրելով կայացված որոշումների համար: Հետխորհրդային Հայաստանում և ՀՀ-ում ոիսկերն առանձնահատուկ են և համեմատաբար բարձր այն մակարդակից, ինչը կարելի էր սպասել այլ հավասար պայմաններում: Դա պայմանավորված է ինչպես տնտեսական զարգացման առանձնահատկություններով, այնպես էլ բարդ աշխարհաքաղաքական պայմաններով: Միաժամանակ ՀՀ-ն և ՀՀ-ն որոշակի առումով հետ են մնում ոիսկերի կառավարման միջազգային փորձի կիրառումից և ակտիվորեն չեն ներգրավված համաշխարհային տնտեսության մեջ մեծ տարածում գտած ոիսկերի կառավարման ասցիացիաների և ինստիտուտների աշխատանքներին:

Ավելին, Արցախի Հանրապետությունում նույնիսկ բացակայում է «ոիսկ-մենեցեր» մասնագիտությունը, իսկ ՀՀ-ի ուսումնական հաստատություններում բացակայում է ոիսկ-մենեցմենթ դասընթացի առարկայական ծրագիրն անգամ: Այսպիսի մոտեցումն իր անմիջական մոտեցումն է ունենում գործնականում: Դա արտահայտվում է առաջին հերթին նրանով, որ ՀՀ-ում բացակայում են ոիսկ-մենեցմենթի ներ մասնագետները, իսկ ոիսկերի կառավարումն իրականացվում է կազմակերպության ղեկավարության կողմից: Սակայն իրավիճակն այլ է զարգացած երկրներում: Մասնավորապես՝ ԱՄ-ում ոիսկ-մենեցմենթի ներ մասնագետների պատրաստման գործընթացն ունի ավելի քան 20 տարվա պատմություն: Այստեղ բավականին մեծ ճանաչում ունի Associate in Risk

Management (ARM) աստիճանը, որը շնորհվում է որպես միջանկյալ հավաստագիր «անդեռույթեր⁷⁹» դառնալու ճանապարհին: Այս կոչումը գործարար աշխարհում բավականին մեծ ճանաչում ունի:

Վերջին տասնամյակներում ՀՂՀ-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները իրենց անմիջական ազդեցությունն են ունեցել նաև շինարարության ոլորտի վրա: Օրեցօր փոփոխվող պայմանները նոր պահանջներ են առաջադրում շինարարական կազմակերպություններին: Կապված դրա հետ շինարարական կազմակերպությունների առջև դրված է անկայուն տնտեսական իրավիճակում մրցակցային պայքարի պայմաններին արագ արձագանքելու գերխնդիրը: Կարծում ենք, որ ոլորտի զարգացման տեսանկյունից առաջիկա տարիներին կառավարության հիմնական խնդիրներից պետք է լինի շինարարական երաշխիքների տրամադրման ու ներդրումային ռիսկերի նվազեման ինստիտուտների ձևավորումը: Ընդ որում շինարարական երաշխիքները ենթադրում են գործարքի մասնակիցներից մեկի կողմից իր պարտավորությունները չկատարելու հետևանքով մյուսի կրած վնասների փոխհատուցման ֆինանսական գործիք: Ի տարբերություն ապահովագրական պայմանագրի, որտեղ կողմերը երկուսն են՝ ապահովադիրն ու ապահովագրողը, երաշխիքային պայմանագրերում կողմերը երեքն են՝ պատվիրատուն, կատարողն ու երաշխավորը: Երաշխավորի ներգրավումը նշանակալի դրական ազդեցություն է ունենում, քանի որ նախագծին միանում է որակավորված ֆինանսիստ՝ երաշխավորը, ով ունակ է պատվիրատուից և կապալառուից ավելի լավ գնահատել և վերլուծել շինարարական նախագծի ֆինանսական մասը: Երաշխիքների կիրառումը բավականին լայն տարածում ունի զարգացած երկրներում: ԱՄՆ-ում կիրառվում է դրա մի քանի տարատեսակներ: Սակայն առավել ընդհանրական է պայմանագրային երաշխիքների կիրառումը, որն ունի երկու հիմնական ձևեր՝ պայմանագիր կնքելու երաշխիք և աշխատանքների կատարման երաշխիք: Առաջինի իմաստն այն է, որ մրցույթ հայտարարած պատվիրատուն կարող է կապալառուից պահանջել երաշխիք, որ վերջինս կարող է նման ծավալների և որակի աշխատանքներ կատարել:

⁷⁹ Ուկանակարման ներ մասնագետ Chartered Property and Casualty Underwriter (CPCU),


Աշխատանքների կատարման երաշխիքի իմաստն այն է, որ երաշխավորը փոխհատուցում է իր երաշխավորած կողմի պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով մյուս կողմի կրած կորուստները:

Տեսականորեն երաշխիքների տրամադրման ինստիտուտը շինարարության ոլորտում 3-րդ կողմի ներգրավմամբ ներդրումային ռիսկերի նվազեցման տարբերակներից մեկն է: Թեև երաշխիքների տրամադրման ինստիտուտների նկատմամբ պահանջարկն անհամեմատ ավելի փոքր է, քան ապահովագրության նկատմամբ պահանջարկը, որոշ դեպքերում երաշխիքները կարող են հանդիսանալ շատ ավելի արդյունավետ գործիք: Կարծում ենք, որ շինարարության ոլորտի զարգացման արդի միտումների պայմաններում երաշխիքների դերն ու նշանակությունը նկատելիորեն բարձրանալու է մոտ ապագայում:

Ներկայումս ԼՂՀ-ի հիմնական ֆոնդերում կատարվող ներդրումների ծավալի կրճատումը հանգեցնում է մյուս ոլորտներում արտադրական հնարավորությունների նվազմանը: Նոր շինարարական տեխնիկա ձեռք բերելու տնտեսական և քաղաքական դժվարությունների պատճառով ԼՂՀ-ում տեղի է ունենում բարոյապես մաշված տեխնիկայի կիրառում, որը բնականաբար աչքի է ընկնում արտադրողականության ցածր մակարդակով, հարկադիր պարապուրդների մեջ տևողությամբ, ինչն էլ հանգեցնում է վերջնական արդյունքի թողարկման ծավալների նվազեցմանը: Այսպիսով վստահաբար կարելի է պնդել, որ հիմնական ֆոնդերի համալրման ոչ բավարար մակարդակը անդառնալի հետևանքներ կարող է ունենալ ողջ տնտեսական համակարգի համար: Ելնելով վերոնշյալից պետք է նկատել, որ պետության տնտեսական քաղաքականությունն անհրաժեշտ է ուղղորդել հիմնական ֆոնդերի շուկայի զարգացմանը և դրա հիմքի վրա կայուն տնտեսական աճի ապահովմանը: Փաստացի մոտակա տարիներին հիմնական ֆոնդերում կատարվող ներդրումների ապահովումը պետք է հանդիսանա շինարարական կազմակերպությունների զարգացման ևս մեկ գերակայություն:

Այժմ նկատվող հիմնական միտումները՝ շինարարական մեքենաների, սարքավորումների, այսինքն հիմնական ֆոնդերի ակտիվ մասի ձեռքբերման դժվարությունները, կիրառվող ֆոնդերի ֆիզիկական ու բարոյական մաշվածության բարձր մակարդակը, տնտեսական շրջափակումը և դրա հետևանքով հին տեխնոլոգիաների պարտադրված կիրառումը չեն կարող դրական ազդեցություն

ունենալ շինարարական կազմակերպությունների վրա: Դա է պատճառը, որ կառավարությունը պետք է կիրառի բոլոր գործիքները՝ խթանելու հիմնական ֆոնդերում ներդրումները: Մասնավորապես՝ պետք է գործուն քայլեր ձեռնարկվեն գնաճի տեմպերի կարգավորման, գործարար, իրացվելիության, վճարունակության, տնտեսական իրավիճակի փոփոխության, տոկոսային և այլ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Կարծում ենք, որ շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերի շուկայի զարգացման կարգավորիչները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 3.1.2 Շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերի շուկայի զարգացման կարգավորիչները

Անդրադառնալով շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության և ռիսկերի կառավարման վերլուծությանը՝ պետք է հատուկ ուշադրություն դարձնել հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ապարատի կիրառման կարևորությանը: ԼՂՀ-ի տնտեսությունում վերջին տարիներին նկատվող դրական տեղաշարժերը իրենց ազդեցությունն են ունեցել շինարարական կազմակերպությունների ներդրումային ակտիվությանը:

Սկսած 1994թ.-ից մինչ 2017թ. հիմնական կապիտալում կատարվող ներդրումների ծավալը միջին հաշվով աճել է 18.3 տոկոսով, իսկ շինարարության ոլորտում ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 7 տոկոսի սահմաններում: Պայմանավորված ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկություններով և ժամանակի պահանջներով՝ հայրենական շինարարական կազմակերպությունների ներդրումային պոտենցիալը պետք է զարգանա հետևյալ երկու հիմնական ուղղություններով՝ համազգային և ոլորտային (այսուակ 3.1.1):

**Շինարարական կազմակերպության ներդրումային պոտենցիալի
զարգացման հիմնական ուղղությունները**

Այսուակ 3.1.1

Ներդրումային պոտենցիալի զարգացման ուղղություն	
Համազգային	Ոլորտային
Սոցիալական ոլորտ՝ քաղաքաշինության ոլորտում սոցիալական ծրագրերի իրականացում, շինարարական արդյունքի նկատմամբ պահանջարկի բավարարում ըստ հարմարավետության և պահանջի	Շինարարական կազմակերպության վերածում դինամիկ զարգացող բարձր տեխնոլոգիաներով հագեցած, մրցունակ, ճկուն, միջազգային պահանջներին համապատասխան արտադրանք թողարկող կազմակերպության
Տնտեսական ոլորտ՝ հարկային քաղաքականության վերանայում, մաքսատուրքերի վերանայում՝ նկատի ունենալով կոնկրետ տնտեսական տարածքի բնակչիմայական և աշխարհագրական պայմանները	Շինարարական կազմակերպության ռեսուրսների օգտագործման կատարելագործում՝ ուղղված պոտենցիալի դինամիկ աճին և հասարակության կենսամակարդակի բարձրացմանը
Տեխնիկական քաղաքականության ոլորտ՝ շինարարական կազմակերպությունների նորմատիվա-տեխնիկական բազայի կատարելագործում	Արտադրական կարողությունների արդյունավետ վերարտադրություն և արդիականացում Շինարարական կազմակերպության որակական և կառուցվածքային բնութագրիների որակական աճ

ՀՀ շինարարության ոլորտի զարգացման մեկ այլ ուղենից պետք է լինի էներգոարդյունավետ տների կառուցումն ու կիրառվող շինանյութերի էկոլոգիականության բարձրացումը: Միաժամանակ պետք է ակտիվանա սահմանամերձ բնակավայրերում ենթակառուցվածքների շինարարությունը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել այդ տարածքներում բնակչության միգրացիան, ինչն էլ կիանգեցնի անհատական տների նկատմամբ պահանջարկի աճին: Այդ

նպատակներին հասնելու համար պետք է արագ ավարտին հասցնել շինարարական կազմակերպությունների ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային վերափոխումները: Այդ գործընթացում պետք է նկատի ունենալ, որ ժամանակակից պայմաններում շինարարական կազմակերպության ներդրումային պոտենցիալի զարգացման ռազմավարության հիմքում ընկած են այնպիսի գործոններ, ինչպիսիք են շինարարական կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավումը, ցածր տոկոսադրույթով վարկային ռեսուրսների ներգրավումն ու օգտագործումը, հիփոթեքային վարկավորման համակարգի զարգացումը, բյուջետային միջոցների տեսակարար կշռի աճը, հարկային բեռը, ներդրումային ռիսկերը և մի շարք այլ հանգամանքներ, որոնց կարևորության աստիճանը բխում է կոնկրետ իրավիճակից: Այս պայմաններում օրախնդիր է դառնում բնակչության խնայողությունների վերածումը ներդրումային միջոցների և ներդրողների շահերի իրավական պաշտպանության բարձր մակարդակի երաշխիքների տրամադրումը:

Ներկայումս ԼՂՀ-ում ներդրումային գործընթացների կատարելագործման մասշտաբները համամասնական են շինարարական կազմակերպությունների ներդրումային պոտենցիալի զարգացման մասշտաբներին: Այս գործընթացների վրա առավել մեծ ազդեցություն ունեն հետևյալ գործոնները.

1. **Ներդրումներ հիմնական կապիտալում՝ խոսքը վերաբերում է տնտեսության բոլոր ոլորտներում և ճյուղերում հիմնական կապիտալում կատարվող ներդրումներին, քանի որ դրանք անմիջականորեն կապված են շինարարության ոլորտի հետ:**

2. **Բանկային և վարկային համակարգերի զարգացման մակարդակը՝ առանձնակի կարևորելով հիփոթեքային վարկավորման մեխանիզմները:**


3. **Տնտեսության բոլոր հատվածներում և հատկապես շինարարության ոլորտում արտադրական ֆոնդերի բարոյական և ֆիզիակական մաշվածության բարձր մակարդակը:**

4. **Ներքին շուկայի ծավալները:**

Վերջին տարիներին շինանյութերի արտադրությամբ զբաղվող մի շարք ընկերությունների արտադրական բազայի նորացումը հանգեցրել է նրան, որ նկատելիորեն աճել է ոլորտի ներդրումային պոտենցիալը՝ պայմանավորելով ներմուծվող շինանյութերի նկատմամբ բավականին մրցունակ ապրանքների

թողարկման ծավալների աճը: Հայրենական արտադրության շինանյութերի արտահանման ծավալները կազմում են թողարկված արդյունքի ընդամենը 5-7 տոկոսը: Սակայն հարկ է նկատել, որ առաջին անհրաժեշտության ապրանքների (հատկապես գազ, էլեկտրաէներգիա, ջուր) և ծառայությունների գների շարունակական աճը բացասական ազդեցություն է ունենում շինարարական արտադրանքի ինքնարժեքի վրա:


Միաժամանակ ԼՂՀ-ի ցանկացած շինարարական կազմակերպության առջև ներդրումային պոտենցիալի զարգացման ռազմավարության մշակման ժամանակ դրվում է տեղական շուկայում դիրքերն ամրապնդելու և միջազգային շուկա դուրս գալու խնդիրը: Այս խնդրի համատեքստում, նախ և առաջ, անհրաժեշտ է թողարկել մրցունակ արտադրանք, որը ներքին շուկայում հաջողության կիասնի, այնուհետև դիրքավորել այն միջազգային շուկայում: Այս նպատակի իրագործման համար ԼՂՀ շինարարական կազմակերպությունները պետք է լրիծեն մի շարք խնդիրներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.



Գծապատկեր 3.1.3 ԼՂՀ շինարարության ոլորտում մրցունակ արտադրանքի թողարկման հիմնական խնդիրները

ԼՂՀ-ում շինանյութերի, շինվածքների և կոնստրուկցիաների արտադրությունը պետք է տնտեսապես հիմնավորված լինի, ինչը ենթադրում է, որ թողարկման ծավալները պետք է որոշվեն ենելով ներքին շուկայի պահանջներից և արտահանման հնարավորություններից: Սա հնարավորություն կտա արդյունավետ և խնայողաբար օգտագործել երկրի ընդերքը: Միաժամանակ պետք է լուծվեն նորմատիվա-տեխնիկական բազայի կատարելագործման հիմնախնդիրները: Այսպիսով ժամանակակից շինարարական կազմակերպության ներդրումային պոտենցիալի զարգացման ռազմավարության իրականացման հիմքում պետք է լինեն ներդրումների խթանման համալիր միջոցառումները, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով:

Շինարարության ոլորտում ներդրումների ակտիվացման միջոցառումների համալիր



Գծապատկեր 3.1.4 Շինարարության ոլորտում ներդրումների ակտիվացման միջոցառումների համալիր

Այսպիսով ամփոփելով վերը նշվածը կարող ենք նկատել, որ հիմնական կապիտալում կատարվող ներդրումները հնարավոր է խթանել հետևյալ գործողությունների շնորհիվ.

1. Անավարտ շինարարական օբյեկտներն ավարտին հասցնելու տնտեսական մեխանիզմների բացահայտում և իրագործում,

2. Բնակչության խնայողություններն իրական ներդրումների վերածելու մեխանիզմների բացահայտում և կիրառում,

3. Շինարարության ոլորտում աճի ապահովում՝ շնորհիվ արտադրական պոտենցիալի լիարժեք օգտագործման,

4. Ներդրող-արտադրող-գնորդ շղթայում միջնորդների թվաքանակի և դերի սահմանափակում,

5. Ներդրումային գործունեության նորարարական ուղղվածության ապահովում:

6. Բաժնետիրական ընկերությունների վերահսկիչ փաթեթների կառավարման մեխանիզմների կատարելագործում,

7. Շինարարական ընկերությունների ներդրումային գրավչության ապահովում՝ շնորհիվ շինությունների տակ գտնվող հողերի և սարքավորումների նկատմամբ սեփականության իրավունքի հատուկ որոշմամբ,

8. Ամորտիզացիոն քաղաքականության կատարելագործում,

9. Անարդյունավետ հիմնական ֆոնդերի դուրս բերումը շրջանառությունից,

10. Նոր տեխնոլոգիաների, մեքենաների, սարքավորումների ներմուծման ճկուն քաղաքականության մշակում և իրականացում,

11. Հիփոթեքային համակարգի կատարելագործում:

Միաժամանակ շինարարական կազմակերպության ներդրումային պոտենցիալի զարգացման ռազմավարության մշակման ու իրագործման որակի բարելավման տեսանկյունից անհրաժեշտ է իրականացնել կազմակերպական ու ֆինանսական միջոցառումների համալիր, որոնցից առանցքայիններն են.

1. Հիփոթեքային ռիսկերի ապահովագրության մեխանիզմների մշակում և ներդրում,

2. Բնակարանաշինության ծավալների աճի ապահովում՝ շնորհիվ հիփոթեքային վարկավորման զարգացման և ներդրումային շինարարական գործունեության ակտիվացման,

3. Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող բնակարանաշինական ծրագրերի արդյունավետության բարձրացում՝ շնորհիվ դրանց իրացման միասնական պայմանների և թափանցիկության ապահովման,

4. ԼՂՀ-ի կենսաթոշակային ֆոնդի միջոցների, ինչպես նաև արտաքին փոխառությունների ներգրավման մեխանիզմների կատարելագործում,

5. Բնակչության գիտակցական մակարդակի բարձրացում՝ ուղղված բնակարանաշինական ծրագրի էության հասարակական ընկալման մակարդակի բարձրացմանը:

Շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման մոդելի փոփոխության արդյունավետությունը կարելի է գնահատել հետևյալ բանաձևի միջոցով.

$$\text{ԹօԾ} = \text{ԹԾ} + \text{ԹԾ} + \text{ԹԾ} + \text{ԹԾ}, \quad (1)$$

որտեղ ԹԾ-ն գործող կառուցվածքի պահպանման դեպքում ապահովվող տնտեսական արդյունքն է, ԹԾ-ն արտադրության արդիականացման շնորհիվ ապահովվող արդյունքն է, ԹԾ-ն և ԹԾ-ն համապատասխանաբար ներդրումային նախագծերի իրականացման և շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի նվազեցմանն ուղղվող միջոցառումների շնորհիվ ապահովվող արդյունքներն են:

3.2 Ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգերի կատարելագործման ուղիները ԼՂՀ շինարարական կազմակերպություններում

ԼՂՀ շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման հիմքում պետք է դնել այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ունենալ

Ներդրումային նախագծերի մշակման և արդյունավետ որոշումների ընդունման մեկ միասնական մոտեցում:

ԼՂՀ շինարարական կազմակերպությունների գործունեությանը բնորոշ ներդրումային ռիսկերի լայն շրջանակի գոյությամբ է կարևորվում նրանց կառավարումը, այսինքն՝ անորոշության մակարդակի հստակեցմանն ու կազմակերպության գործունեության վրա բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված գործունեությունը: ԼՂՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի կառավարումը ենթադրում է մի գործընթաց, որը ներառում է կառավարման նպատակի ընտրությունը՝ հաշվի առնելով տվյալ պայմաններում առկա ռեսուրսները և շուկայի սահմանափակ հնարավորությունները, ռիսկերի կառավարման հետ կապված ծախսերն ու դրանց շնորհվ ապահովված օգուտները:

Հետազոտության այս բաժնի նպատակը ԼՂՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի համայիր կառավարման այնպիսի համակարգի մշակումն է, որն ուղղված է ենթակառուցվածքների զարգացման պայմանների ու հնարավորությունների ամրագրմանը և գործունեության կայունության ապահովմանը:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է, որպեսզի ԼՂՀ -ում տնտեսական գործունեություն ծավալող յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն.

1. հստակեցնի ներդրումային ռիսկերի կառավարման բաժնի կազմն ու կառուցվածքը,

2. հաշվի առնի ռիսկի բոլոր էական տեսանկյունները և տվյալ շինարարական կազմակերպության կառուցվածքը,

3. հաշվի առնի և կառուցողական նպատակներով կիրառի ներդրումային ռիսկերի բազմաթիվ դասակարգումների հնարավորությունները,

4. ռիսկերի կառավարման բազմամակարդակ համակարգում (ՌԿՀ) պետք է ներառել շինարարական կազմակերպության հիմնական գործընկերների՝ մակարդակից մակարդակ փոխվող շահերը,

5. ստեղծված համակարգը պետք է լինի հնարավորինս ճկուն, քանի որ ռիսկերի կառավարման խնդիրներն անընդհատ փոփոխվում են՝ շինարարական կազմակերպության զարգացման և գործունեության փուլերից կախված,

6. անհրաժեշտ է սահմանագծել ռիսկերի կառավարման բաժնի աշխատանքները և գտնել դրանց ռացիոնալ կազմակերպման ուղիները,

7. հարկ է կառուցել կառավարման համակարգ բոլոր այն արժեքների համար, որոնք կազմակերպությունը կարող է կորցնել իր գործունեության ընթացքում:

ԼՂՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի կառավարման ինտեգրացիոն մոտեցման դեպքում ակնհայտ է դառնում, որ շինարարական կազմակերպությունը տնտեսական վնաս կարող է կրել ոչ միայն այն գույքի մասով, որն ապահովագրվում է, այլև շինարարական կազմակերպության կազմակերպական արժեքների մասով:

Մեր կողմից օգտագործվել է շինարարական կազմակերպության այն արժեքների ցանկը, որոնք ներկայացված են Օ. Պրոցենկոյի և Ա. Ցակաևի հետազոտություններում⁸⁰:

Գործնականում կոնկրետ շինարարական կազմակերպության համար այս ցանկը պետք է ճշգրտվի նյութական արժեքների դեպքում գույքագրման մեթոդով, ոչ նյութական արժեքների դեպքում ուղեղների գրոհի մեթոդով⁸¹:

Քանի որ այս ենթահարցում նպատակ ունենք բացահայտել ԼՂՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները և կառավարման ենթակառուցվածքի զարգացման հնարավորությունները, մեր կողմից կատարված վերլուծությունը թույլ տվեց մշակել մոդել (տես՝ գծապատկեր 3.2.1), որտեղ ներկայացված է ռիսկերի քարտեզագրման տարրերակ, որի նպատակն է արտացոլել շինարարական կազմակերպության ռիսկերի կառավարման ինտեգրացիոն համակարգը⁸²:

⁸⁰ Проценко О.Д., Цакаев А.Х. Организация риск-менеджмента на современном предприятии // Российское предпринимательство. — 2001. — № 7 (19). — с. 32-38. — URL: <http://bgscience.ru/lib/440/>,

⁸¹ Арсеньев Ю. Н., Сулла М. Б., Минаев В. С., Управление экономическими и финансовыми рисками. М. Высш. шк. 1997. 388 с.

⁸² W.Palmer, J.Malone, J.Heffron, Строительство,страхование, склеивание и управление рисками.

8. Շինարարական արտադրության
տեխնոլոգիական գործընթաց

7. Աշխատավայր

6. Շինհրապարակ, դրան հարակից
տարածք

5. Շինարարական օբյեկտի
նախագծում

4. Ներդրումային
կազմակերպություններ

3. Շինարարական
ձեռնարկություն

2. Շինարարության
վարչական շրջան

1. Շինարարության
ոլորտ

Գծապատկեր 3.2.1 Կառավարման ճյուղային մակարդակ

Գծապատկերից երևում է, որ ՀՀ շինարարական կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգն իր մեջ պետք է ներառի հետևյալ ենթահամակարգերը.

- մշակման և ինքնազարգացման,
- գործունեության անընդհատության ապահովման,
- կործանարար ռիսկերից պաշտպանության,
- ներդրումային ռիսկերի համասեռ կառավարման,
- իրավիճակային կառավարման,
- նախագծերի կառավարման,
- ֆինանսական ներդրումների,
- անկանխատեսելի իրավիճակում գործողությունների:

Ընդ որում, ժամանակի ընթացքում շինարարական կազմակերպության տեղն այս «յոթ չափանի տիրություն» անընդհատ փոփոխվում է՝ ռիսկերի կառավարման

ծառայությունից պահանջելով մշտական հսկողություն և փոփոխություններին հարմարվելու կարողություն՝ ինչպես վտանգավոր ռիսկերի, այնպես էլ ներդրումային ռիսկերի դեպքում: Այստեղից հետևում է, որ ռիսկերի կառավարման ծառայության աշխատանքը պետք է բավականին ճկուն լինի: Ցավոք, ռիսկերի կառավարման բազմաչափ մոդելների պարզեցված տեսակներն, ինչպիսին է օրինակ Ռ.Փ. Նայտի և Դ.Ջ. Պրիտտի կողմից առաջարկվածը, չեն բավարարում այդ պայմանին⁸³:


Մեր կողմից ուսումնասիրվող աշխատանքների համալիրը պետք է ձևակերպված լինի կազմակերպչական նախագծի ռիսկերի կառավարման համակարգի (ՌԿՀ) փաստաթղթային համալիրի տեսքով՝ որպես շինարարական կազմակերպության ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման և ենթակառուցվածքի զարգացման ուղղություն:

ԼՂՀ շինարարական կազմակերպությունների պարագայում ռիսկերի կառավարման ծառայության ձևավորման ուազմավարության հիմքում պետք է ընկած լինեն հնարավոր ռիսկերը և հաշվի առնվեն շինարարության անվտանգությանը վերաբերող օրենսդրահրավական ակտերի պահանաջները:

Մեր կարծիքով ռիսկային իրավիճակների մոդելավորման համար առավել արդյունավետ է փորձագիտական գնահատականների պրակտիկ կիրառությունը՝ հիմնված շինարարական կազմակերպության գործունեության արդյունավետությունը բնութագրող փոփոխականների գնահատման համակարգային մոտեցման վրա:

Այս մոտեցումը փորձարկվել է «Պանտ» ՍՊԸ-ի շինարարական գործունեության ռիսկերի գնահատման ժամանակ: Մեր կողմից մշակվել է այս կազմակերպության ներդրումային գործունեության ռիսկերի արդյունավետ կառավարման ալգորիթմ, որի ձևավորման գլխավոր նպատակը դինամիկ և անկայուն միջավայրում շինարարական կազմակերպության (ԾԿ) ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացումն է: Ալգորիթմը կարող է ըստ քայլերի հերթականության ներկայացվել գծապատկերի տեսքով (տես՝ գծապատկեր 3.2.2):

⁸³Найт Р.Ф, Притти Д.Дж, Философии риска, стоимость компании и ее руководитель. В сборнике Дж.Пикфорд, Управление рисками, Финанс, М., 2004, с.345-350.



Գծապատկեր 3.2.2 ՇԿ ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման ալգորիթմ


1-ին փուլում ներդրումային ռիսկերի կառավարման գլխավոր նպատակը դրանց սահմանափակումն ու նվազագույնի հասցնելն է, ինչպես նաև ՇԿ-ի տնտեսական վերջնական արդյունքի վրա ռիսկերի բացասական ազդեցության նվազեցումը:

2-րդ փուլում անհրաժեշտ է պարզել, թե ՇԿ-ն կարող է ենթարկվել ռիսկերի, և որոնք են դրանց առաջացման պատճառները:

3-րդ փուլում ընտրված ռազմավարության և մշակված ծրագրի հիման վրա մշակվում է ռիսկերի կառավարման մարտավարությունը՝ որպես ռիսկերի չեզոքացման կամ մինիմալացման հստակ միջոցների համախումբ:

Առաջարկվող ալգորիթմը Ենթադրում է ներգործության լծակների համակարգ, որը թույլ է տալիս մինիմալացնել կամ կանխել ՇԿ-ի ներդրումային գործունեության հետևանքով հնարավոր տնտեսական վնասի առաջացումը: Ալգորիթմի կառուցվածքում ներառված են տրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ մեթոդներն ու գործիքները, որոնք ուղղված են արտադրատնտեսական որոշումների ընդունման և իրագործման բացասական ազդեցությունների մինիմալացմանը կամ կանխատեսմանն ու չեզոքացմանը:

Շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման և Ենթակառուցվածքի զարգացման հնարավորության ուսումնասիրման նպատակով ներկայացվում է ներդրումային ռիսկերի կառավարման աշխատանքների գործընթացային մատրիցը (տես գծապատկեր 3.2.3):



Գծապատեր 3.2.3 Ներդրումային ռիսկերի կառավարման ծառայության ընդհանուր կառուցվածքը

Այսպիսով, ԼՂՀ ՇԿ-ի ռիսկերի կառավարումը կանխորոշում է ոչ բարենպաստ իրավիճակներին կազմակերպության դիմակայելու հնարավորություններն ու ուղիները: Այս պայմաններում կազմակերպությունները պարտավոր են ինքնուրույն հոգ տանել

անհրաժեշտ պահուատների ստեղծման կամ վնասների վերացման նպատակով այլ աղբյուրներից ֆինանսավորման ներգրավման մասին:

Փորձը ցույց է տալիս, որ քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք գործոնների ազդեցության արդյունքում առաջանում են խնդրահարույց իրավիճակներ, որոնց դեպքում կազմակերպության ստացած արդյունքներն էականորեն տարբերվում են սպասված կամ պլանավորված արդյունքներից:

Ներդրումային ռիսկերի առաջացման պատճառները հասկանալու և դրանց կառավարման խնդրի լուծման համար ուսումնասիրվել է ժամանակային շարքերի կառուցվածքը, որը բնութագրում է ներդրումային գործընթացների P_{14} գործակցի փոփոխության դինամիկան: Ընդհանուր առմամբ տվյալ կառուցվածքը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$$P_{14} = TP(t) + e_1(t) + e_2(t),$$

որտեղ $TP(t)$ - ժամանակի ընթացքում կայուն կրկնվող իրադարձությունների ազդեցության ներքո պարամետրի փոփոխության միտումն է, որը բնութագրում է ներդրումային պարամետրի դիտարկվող փոփոխությունները,

$e_1(t)$ -պատահական մեծություն է, որի ի հայտ գալու բնույթը հայտնի է, իսկ այն առաջացնող իրադարձություններն անկայուն են ու տեղի են ունենում տրված հավանականությամբ,

$e_2(t)$ -պատահական մեծություն է, որն առաջանում է չկանխատեսված իրադարձությունների արդյունքում, որոնց դրսևորվելն ու ազդեցությունը ներդրումային գործընթացների ուսումնասիրվող պարամետրի վրա նախորդը կանխատեսել հնարավոր չէ:

Կիրառելով այս մեխանիզմը շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի կառավարման համակարգի պայմաններում՝ շինարարական ընկերությունների ղեկավարներն ու մասնագետները կստանան կառավարման այն յուրահատուկ ճնշում մեթոդը, որի ներդրման անհրաժեշտության մասին և խոսվում էր:

Ներդրումների կառավարման արդյունավետության ապահովման գլխավոր գործոններից մեկը զարգացած տեղեկատվական ենթահամակարգի վրա հիմնված շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման համակարգի ձևավորումն է, առավել ևս բարձր կապիտալատարությամբ

Երկարաժամկետ ներդրումային ծրագրերի պարագայում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ ժամանակի ընթացքում ավելի է դժվարանում հստակ և ամբողջովին որոշել խնդրահարուց միջավայրի բոլոր այն գործոնների ազդեցության ուժն ու ուղղությունը, որոնք ազդում են ներդրումների օգտագործման արդյունավետության վրա:

Ընդ որում կարևոր դեր ունեն.

1. Ներդրումային ծրագրերի և նրանց ռիսկերի գնահատման հետ կապված տվյալների բազայի ստեղծումը: Այս տեսակ տվյալների բազաները հետագայում կարող են կիրառվել ինչպես նախապատրաստական, այնպես էլ ներդրումային ծրագրերի արդյունավետ իրագործման ժամանակ:

2. Ներդրումային ծրագրերի հնարավոր տարբերակների արդյունավետության գնահատման մեթոդի ընտրություն, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի գնահատման բանաձևի որոշում:

3. Մոնիթորինգ, փորձագիտական գնահատում, ներդրման բարդ և տարաբնույթ պայմանաների վերահսկում, ինչպես նաև անորոշության և ռիսկի անընդհատ ստուգում:

ՀՀՀ-ի շինարարության ոլորտում պետության, ձեռնարկությունների և մասնավոր անձանց կողմից կատարվող ներդրումային ծրագրերի տիպային օրինակ է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն, որը, բավարարելով Հանրապետության Էլեկտրաէներգիայի պահանջարկի 40-60 տոկոսը, հանդիսանում է Էլեկտրոարդյունաբերության ոլորտում ՀՀՀ-ի առաջատար կազմակերպություններից մեկը: Ընկերությունը Էլեկտրաէներգիա է արտադրում Սարսանգի ջրամբարի վրա կառուցված Սարսանգի հիդրոէլեկտրոկայանի միջոցով: ՀԷԿ-ն ունի 50 մՎՏ մեկնարկային հզորություն և մեկ տարում 60-140 կվտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու կարողություն: Ընկերությունն ամեն տարի «NASDAQ OMX Armenia» արժեթղթերի շուկա է բաց թողնում «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ անվանական բաժնետոմսեր և արժույթախն պարտատոմսեր⁸⁴:

«Արցախ ՀԷԿ» -ին բաժանորդագրվել են փոքր և միջին ձեռնարկությունները ներկայացնող 200 մարդ: Հետագայում պլանավորվում է փոքրացնել պետության պարտքը կազմակերպությունում, քանի որ բաժնետոմսերի իրացման ժամանակ կարևոր նշանակություն ունի բաժնետերերի քանակը: Ինչպես նշել է «Արմենբրոկ»

⁸⁴ Пресс-служба АрмИнфо фондовой биржи «Насдак Оэмэкс Армения».

ԲԲԸ-ի գլխավոր տնօրենը դարաբաղյան ընկերության վարկանիշը թույլ կտա ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին իրենց ազատ դրամական միջոցներն արդյունավետորեն ներդնել և ստանալ դրանցից դիվիդենտներ: Ընդհանուր առմամբ կտեղաբաշխվեն 1050 դրամ արժողությամբ 3285715 բաժնետոմսեր: Այդ բաժնետոմսերի տեղաբաշխումից ստացվող միջոցները կուղղվեն երեք հիդրոէլեկտրոկայանների կառուցմանը (Տրղե-1, Տրղե-2 և Մատաղիսի ՀԷԿ), որոնցից մեկը շահագործման է հանձնվել 2010թ., մյուսի շինարարությունը ավարտվել է 2011թ. ու շահագործման հանձնվել 2013թ-ին, իսկ երրորդի շինարարությունը ավարտել է 2017թ.-ին⁸⁵:

Ակնհայտ է, որ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի ներդրումների ծավալներն ու տարբերակները ավելի քան տպավորիչ են ու բազմազան: Ակնհայտ է, որ ներդրումային ռիսկերն այստեղ աճում են տարեց տարի: Ուստի չկանխատեսված և չարդարացված ֆինանսական կորուստներից խուսափելու համար կազմակերպությանն անհրաժեշտ է ներդրումային ռիսկերի մանրակրկիտ վերլուծություն, գնահատում և ճիշտ կառավարում:

3.3 Ներդրումային ռիսկերի կատարելագործված կառուցակարգերի կիրառումը ԼՂՀ շինարարության ոլորտում («Պանտ» ՍՊԸ-ի օրինակով)

«Պանտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դինամիկ զարգացող կազմակերպություն է, որը ԼՂՀ-ի տարածքում ավելի քան տասնյոթ տարի ծավալում է շինարարական գործունեություն: Կազմակերպությունը զբաղվում է ինչպես բնակելի, այնպես էլ հասարակական նշանակության շենքերի ու շինությունների կառուցմամբ՝ բազմաբնակարան շենքեր, հանրակրթական և պետական կարիքների համար անհրաժեշտ այլ շենք-շինություններ: Վերջին տարիներին ընկերության կողմից շահագործման են հանձնվել ԼՂՀ-ի պաշտպանության բանակի համար նախատեսված երեք բազմաբնակարան շենքեր, ԼՂՀ-ի Մարտունու շրջանում կառուցված երկու

⁸⁵ՕԱՕ «ԱրցախՀԷԿ», arka.am/ru/news/economy/19707/

հարյուր քառասուն աշակերտի համար նախատեսված դպրոցը, Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի նոր մասնաշենքը, Ստեփանակերտի «Բիզնես կենտրոնը», Մարտունու շրջանի Հեր-Հեր գյուղի մարզարարակը, Ստեփանակերտի թիվ 1 մանկապարտեզը, իրականացվել են Մարտունու և Հադրութի շրջանների գազաֆիկացման աշխատանքները և այլն:

Վերջին ժամանակներում իրականցվել են նաև Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի ամբողջական վերականգնման աշխատանքները: Ներկայում Ստեփանակերտում ընթանում են «Ազատամարտիկների» անվան գրոսայգու կառուցապատման աշխատանքները և ավարտին է հասցում Հանրապետական հիվանդանոցի օնկոլոգիական կենտրոնի շինարարությունը:

«Պանտ» ՍՊԸ-ի անձնակազմը կազմված է բարձր որակավորում ունեցող, բանիմաց մասնագետներից, ինչը թույլ է տալիս ընկերությանը հստակ և սեղմ ժամկետներում կատարել աշխատանքը՝ անկախ դրա ընթացքում առաջացող խոչընդոտների⁸⁶:

«Պանտ» ՍՊԸ-ն ամբողջապես վերահսկում է կառուցման, գործարկման և շինությունը շահագործման հանձնելու գործընթացները: Այն կարողանում է օպտիմալացնել աշխատակազմի աշխատանքը, ինչի շնորհիվ էլ բարեխղճորեն կատարում է իր բոլոր պարտականությունները՝ խստորեն հետևելով և պահպանելով օգտագործվող նյութերի և կատարվող աշխատանքների որակը:

Ընկերության կողմից կառուցվել են նաև այնպիսի շինություններ, ինչպիսիք են ԼՂՀ-ի քաղաքաշինության նախարարության պատվերով և ՌԴ բարերար Նիկոլայ Էդուարդովիչ Սարկիսովի աջակցությամբ կառուցված Ստեփանակերտի թիվ 3 դպրոցը և ծննդատունը, Ֆրանսիայի հայկական ֆոնդի հովանավորությամբ և Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ Շուշի քաղաքում կառուցված Եզնիկ Մողյանի անվան արհեստագործական ուսումնարանը: Այս ուսումնարանը իր տեսակի մեջ միակն է հանրապետությունում, որտեղ դասավանդում են շինարարական մասնագիտություններ: Եռահարկ ուսումնական հաստատության շենքը գբաղեցնում է 4050 քմ. տարածք և համապատասխանում է Ֆրանսիայի արհեստագործական

⁸⁶ООО ПАНТ, Сайт работает на WordPress

ուսումնարանների կառուցման ստանդարտներին: 2014թ.-ի վերջին շահագործման է հանձնվել «Եվրոպա» բիզնես կենտրոնը և հյուրանոցային համալիրի շենքը, որի շինարարության ֆինանսավորումը կատարվել է մասնավոր ներդրողի կողմից:

Ընկերությունը մատուցում է ոչ միայն շինարարական ծառայություններ, այլ նաև վարձակալությամբ տրամադրում է շինարարական մեքենաներ, մեխանիզմներ և սարքերավորումներ (վերամբարձ կոունկներ, էքսկավատորներ, բուլդոզերներ և այլն): Ընկերությունը զբաղվում է շինարարական կոնստրուկցիաների արտադրությամբ, այնպիսի ինչպսին է այրումինե և մետաղապլաստե դրոների ու պատուհանների, այրումինե ճաղավանդակների արտադրությամբ:

Տեղեկատվական ծառայությունների շուկան դեռևս թույլ է զարգացած ԼՂՀ-ում, և ըստ էության շատ բարդ է իրականացնել անհրաժեշտ տվյալների հավաքագրումն ու մշակումը: Ոչ ամբողջական տեղեկատվության, ժամանակի սղության, երբեմն էլ անհրաժեշտ տվյալների բացակայության, հաշվարկների անհնարինության պատճառով մեծ նշանակություն է ստանում կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության հիման վրա կատարված ռիսկերի գնահատումը:

Կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման ժամանակ պետք է որպես հիմք ընդունել այնպիսի ֆինանսական փաստաթուղթ, ինչպիսին է հաշվապահական հաշվեկշիռը: Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության հիման վրա ռիսկի գնահատումը «Պանտ» ՍՊԸ-ի օրինակով կանցկացնենք երկու փուլով՝ կազմակերպության գործունեության արդյունքային ցուցանիշների հետազոտություն և բնութագրիչ գործակիցների վերլուծություն: Վերլուծությունն ընդգրկում է 2005-2016թթ. Կազմակերպության գործունեությունը բնութագրող տվյալները:

Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծությունը կարելի է կատարել կազմակերպության գործունեության արդյունքային ցուցանիշների հետազոտության շնորհիվ: Այդպիսի արդյունքային ցուցանիշներ են կազմակերպության շրջանառությունը կամ կատարված աշխատանքների ծավալը, ակտիվների արժեքն ու լիկվիդայնությունը: Ձեռնարկության ակտիվների վերլուծությունը նպատակահարմար է կատարել հաշվապահական հաշվեկշիռի հիման վրա: Անհրաժեշտ է վերլուծել կազմակերպության

ակտիվների առկայությունը, կառուցվածքն ու տեղաբաշխումը (տես հավելված 2, աղյուսակ 3.3.1):

Ուսումնասիրված տարիների ընթացքում ակտիվների ընդհանուր արժեքն աճել է 7 տոկոսով, որն առավելապես պայմանավորված է շրջանառու կապիտալի 5 տոկոս աճով: Սակայն, եթե դիտարկենք ակտիվների կառուցվածքը, ապա կտեսնենք, որ ոչ ընթացիկ ակտիվների մասնաբաժինն ավելացել է 1.95 տոկոսային կետով և կազմել է ընդհանուր ակտիվների 15.05 տոկոսը: Աճը հիմնականում տեղի է ունեցել անավարտ շինությունների ծավալների և հիմնական միջոցների արժեքի 2.5 անգամ ավելացման հաշվին: Ոչ նյութական ակտիվների առկայությունն անուղղակիորեն բնութագրում է կազմակերպության կողմից որդեգրած ռազմավարության ինովացիոն բնույթը, քանի որ ոչ նյութական ակտիվներն ընդգրկում են պատեստները, լիցենզիաները և մտավոր սեփականության այլ օբյեկտները: Սակայն, 2005թ. տարեվերջին նրանց ծավալը նվազել է 76 տոկոսով: Ընդհանուր առմամբ, ոչ ընթացիկ ակտիվների մասնաբաժնի ավելացումը կարելի է ընկալել որպես դրական երևոյթ, քանի որ նրանք ավելի քիչ են ենթարկվում գնաճի ազդեցությանը, տնտեսական գործունեության ընթացքում ունեն ֆինանսական կորստի ցածր ռիսկայնություն և գրեթե ապահովագրված են գործընկերների անբարեխիղճ գործողություններից:

Մյուս կողմից՝ անհրաժեշտ է նկատել, որ ոչ ընթացիկ ակտիվները դասվում են ցածր իրացվելիություն ունեցող ակտիվների շարքին և հետևաբար չեն կարող ծառայել որպես վճարման միջոց կազմակերպության վճարունակության նվազման և սնանկության դեպքերում:

Ընթացիկ ակտիվների մասնաբաժնը տարեսկզբին կազմել է ընդհանուր ակտիվների 86.9 տոկոսը, իսկ ժամանակաժրանի ավարտին՝ 84.95 տոկոսը, այսինքն միջոցները շրջանառության փուլից անցում են կատարում արտադրության փուլ:

Շրջանառու միջոցների բացարձակ հավելաճի ապահովման հիմնական գործոնը պաշարների աճն է: Ընդհանուր ակտիվների կազմում պաշարների տեսակարար կշիռն աճել է՝ 45.7 տոկոսից հասնելով 61.27 տոկոսի: Կայունության տեսանկյունից տվյալ միտումը բացասական է, քանի որ այն վկայում է շրջանառու կապիտալի իրացվելիության նվազման մասին: Դեբիտորական պարտքի մեծությունը 2004թ-ին նվազել է և կազմել գույքի արժեքի 18.89 տոկոսը: Դա խոսում է այն մասին, որ այժմ ակտիվների այդ մասը չի տրամադրվում պոտենցիալ մատակարարներին կամ այլ

ծառայություններ մատուցող դեբիտորներին, այլ օգտագործվում է արտադրության գործընթացում:

Դրամական միջոցները բացարձակ արտահայտությամբ աճել են: Սակայն նրանց տեսակարար կշիռն ակտիվներում նվազել է 0.01 տոկոսով և հաշվետու ժամանակաշրջանի վերջին կազմել է 0.12 տոկոս, ինչն էլ վկայում է կազմակերպության ընթացիկ ակտիվների իրացվելիության նվազման մասին: Այսպիսով, ընթացիկ ակտիվների կառուցվածքի փոփոխությունը թույլ է տալիս արձանագրել իրացվելիության նվազման միտումը: Ըստ ռիսկի խմբերի ընթացիկ ակտիվների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ որ նվազագույն և բարձր խմբերում մեծացել է ռիսկային ակտիվների տեսակարար կշիռը: Նվազել է քիչ ռիսկային ակտիվների տեսակարար կշիռը, ինչը պայմանավորված է դեբիտորական պարտքերի ծավալների կրճատմամբ, որոնց վճարումներն ակնկալվում են 12 ամիսների ընթացքում: Նվազագույն ռիսկայնությամբ ակտիվների մասնաբաժնի ավելացումը պայմանավորված է ընթացիկ ակտիվներում դրամական միջոցների տեսակարար կշռի աճով: Աճել է նաև միջին ռիսկանությամբ ակտիվների տեսակարար կշիռը:

Ընդհանուր առմամբ, ակտիվների ավելացումը չէր կարող չհանգեցնել ռիսկային ներդրումների տեսակարար կշռի աճին: Թեպետ միջին ռիսկայնությամբ ակտիվների աճը 0.96 տոկոս է, այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ այս ակտիվների մասնաբաժնն ընթացիկ ակտիվներում աննշան է: Դրական է այն, որ ցածր ռիսկայնությամբ ակտիվները կազմում են ավելի քան 80 տոկոս, բացի այդ, չկան բարձր ռիսկայնությամբ ակտիվներ (տես հավելված 2, այլուսակ 3.3.2)*:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Ընկերության պասիվների կազմում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները, ընդհանուր պասիվների ծավալն ավելացել է 7 տոկոսով: 2014թ. տարեվերջին սեփական կապիտալի մասնաբաժնն աճել է՝ 41.53 տոկոսից հասնելով 50.9 տոկոսի: Այդ աճի տենդենցը շարունակվում է՝ տարին 1.01 տոկոսի չափով, որը ֆիկսվել է 2016թ. արդյունքներում: Հարաբերական արտահայտությամբ սեփական կապիտալն աճել է 31.1 տոկոսով: Ֆինանսական անկախության տեսանկյունից այս միտումը համարվում է դրական:

Ընդ որում, հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կազմակերպությունն ունի բավականին մեծ ծավալով չբաշխված շահույթ: Սակայն

* Պանտ ՍՊԸ տեղեկագիր, <http://www.pantltd.com/>

2004թ.-ի տարեվերջին այն նվազել է 59.5 տոկոս, այսինքն ավելի քան 2 անգամ, ինչը պայմանավորված է ոչ ընթացիկ ակտիվներում ներդրումներով:

Ինչ վերաբերում է ընթացիկ պասիվներին, ապա մեծ տեսակարար կշիռ ունեն կրեդիտորական պարտքերը՝ 42.7 տոկոս:

Կազմակերպության միջոցների ծագման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 3.3.3-ում (տես հավելված 2):

Ինչպես ժամանակաշրջանի սկզբին, այնպես էլ դրա վերջում փոխառու կապիտալի կազմում բացակայում են երկարաժամկետ պարտավորությունները:

Այսպիսով, բնութագրելով «Պանտ» ՍՊԸ-ի ակտիվները հարկ է առանձնացնել դրանց իրացվելիության նվազումը: Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների և դրամական միջոցների ոչ բավարար քանակը բացասական երևույթ է: Որպես դրական երևույթ կարելի է նշել այն, որ կազմակերպության ակտիվների ավելի քան 80 տոկոսը բաժին է ընկնումցածր ոիսկայնությամբ ակտիվների խմբին: Բացի այդ ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել է սեփական կապիտալի տեսակարար կշիռը, ինչը նպաստում է կազմակերպության կայունության աճին:

Վերոնշյալ ցուցանիշների հետ մեկտեղ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հատուկ գործակիցների ուսումնասիրությունը, որոնք հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշոփ առանձին հոդվածների հարաբերության միջոցով: Այսպիսի գործակիցների վերլուծությունը թույլ է տալիս գնահատել կազմակերպության ֆինանսական կայունությունը, որն իր հերթին ձեռնարկատիրական ոիսկերի բնութագրիչներից է:

Ավելացել է գործող կապիտալի ծավալը: Բացի այդ 7.41 տոկոսով ավելացել է նաև դրա տեսակարար կշիռը՝ տարեվերջին կազմելով 35.85 տոկոս: Այս միտումը դրական է գնահատվում, քանի որ վկայում է միջոցների շարժունակության աճի մասին: Նախորդ ժամանակաշրջանի սկզբում բացարձակ իրացվելիության գործակիցը կազմել է 0.0006, ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբին՝ 0.0201, իսկ ժամանակաշրջանի վերջում՝ 0.0336: Այն փաստը, որ առավել իրացվելի միջոցները նախորդ ժամանակաշրջանում գրանցել էին այդքան ցածր ցուցանիշ, վկայում է սեփական դրամական միջոցների սղության մասին: Այս նպատակով ցուցանիշների բազմազանությունից առավել մեծ կարևորություն է ստանում ընթացիկ

իրացվելիության գործակիցը (Ըի), որը նախատեսված է կազմակերպության վճարունակության բնութագրման համար: Ըի-ն իրացվելի ակտիվների հարաբերությունն է նրա պարտավորություններին: «Պանտ» ՍՊԸ-ի համար Ըի-ի միջին ցուցանիշը 1.55 է (աղյուսակ 3.3.4):

Այսպիսով, իրավիճակի կայունացման և ճգնաժամային դրսեւումների կանխման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ռիսկերի կառավարում: Կազմակերպությունում ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար անհրաժեշտ են կազմակերպչական մեծ ջանքեր, ժամանակի և այլ ռեսուրսների ծախսումներ: Այդ գործառույթն ավելի նպատակահարմար է իրականացնել կազմակերպության կառավարման համակարգում ներառվող հատուկ ենթահամակագի միջոցով: Այդ մասնագիտացված ենթահամակարգը պետք է լինի ռիսկերի կառավարման բաժինը, որը կազմակերպության ինքնուրույն գործող այլ ենթահամակարգերի տրամաբանական լրացումն է:

Ընթացիկ իրացվելիության գործակցի մեծությունը (Ըի)

Աղյուսակ 3.3.4

Ամսաթիվ	01.01.11	01.04.12	01.07.13	01.10.14	01.01.15	01.01.16	Նորմա
Ընթացիկ իրացվելիության գործակից	1,43	1,52	1,50	1,61	1,67	1.70	< 2

Շինարարական կազմակերպությունների գործունեության պլանային և շուկայական տնտեսավարման ժամանակաշրջանների փորձը ԼՂՀ-ում վկայում է, որ շինարարության ոլորտը բավականին ռիսկային է, որոնց աղբյուրներն ինչպես արտաքին, այնպես էլ կազմակերպության ներքին միջավայրերի փոփոխականներն են: Շուկայական հարաբերությունների պայմաններում ռիսկերի կառավարման համակարգը արմատապես տարբերվում է պլանային տնտեսավարման պայմաններում կիրառվողից, որտեղ ռիսկերի կառավարման բոլոր միջոցառումները տեղափոխվում էին մակրոմակարդակ: Հաջող առնելով, որ շուկայական հարաբերությունների պայմաններում տեղական շինարարական կազմակերպությունների փորձը լայն

առումով բացասական է, բնութագրվում է չկրկնվող իրավիճակներում մշտական ֆինանսական անկայունությամբ, անհրաժեշտ է շուկայական պայմաններում շինարարական կազմակերպությունների գործունեության խնդիրների համակարգված ուսումնասիրության հիման վրա ձևավորել ձեռնարկության ռիսկերի կառավարման գործիքակազմ: Շինարարական կազմակերպության հակաճնաժամային կառավարման խնդիրները բավականին հրատապ են ու բարդ և նրանց աղբյուրներն են ոչ միայն արտաքին միջավայրի անկայունությունները, այլ նաև ներքին գործոնները:

Զարգացման նախնական փուլում ԼՂՀ-ի շինարարության ոլորտի կազմակերպությունների կառավարման համակարգը ներառում էր տարբեր միավորումներ, ինքնուրույն կամ կազմակերպության կառուցվածքում ընդգրկված շինարարա-մոնտաժային ստորաբաժանումներ, տրեստներ և անմիջականորեն շինարարություն իրականացնող ինքնուրույն արտադրատնտեսական միավորներ: Անկախացումից և սոցիալիստական համակարգի փլուզումից հետո նոր վերածնավորված շինարարական ընկերությունները (սուբյեկտները) ներդրեցին նոր կազմակերպական կառուցվածքներ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԼՂՀ-ի տնտեսությունում տեղի ունեցող արմատական փոփոխությունների, ինչպես նաև պատերազմական և ճգնաժամային երևույթների հետևանքով կտրուկ կրճատվեցին կապիտալ շինարարության ծավալները՝ հանգեցնելով գրեթե բոլոր նախկին խոշոր կառուցվածքային միավորումների փլուզմանը: Հետագայում շինարարական կազմակերպությունների կառավարման կազմակերպական կառուցվածքների կատարելագործումը թույլ տվեց հստակեցնել կառավարող օղակների իրավունքներն ու պարտականությունները, բարձրացնել կառավարման ապարատի աշխատանքի օպերատիվությունն ու ճկունությունը:

Ներկա պայմաններում շինարարական կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման էական գործոն է կազմակերպության շարժունակությունը: Այսօր շինարարական կազմակերպությունների մշտական տեղակայման վայրերում չկան բավարար ծավալով կայուն և վստահելի պատվերներ: Դրա համար շինարարական կազմակերպությունը պետք է հնարավորություն ունենա շինարարության պահանջվող տարածք տեղափոխելու անհրաժեշտ տեխնիկան և մասնագետներին, ինչն էլ հանգեցնում է լրացուցիչ ռիսկերի:

Շարժունակության ապահովման նպատակով «Պանտ» շինարարական կազմակերպությունը պետք է ունենա հետևյալ ստորաբաժանումները.

1. Շարժունակ շինմոնտաժային կառավարում (ՇՄԿ) և ավտոմատացված տեղափոխելի շարժակազմեր (ԱՏՀ):

2. Կազմակերպության արտադրական գործունեությունը սպասարկող օժանդակ ստորաբաժանումներ, աշխատանքների կառավարմանավորմատացում (ԱԿԱ), ավտոտրանսպորտային տնտեսություն (ԱՏ), արտադրատեխնիկական համակցության կառավարում (ԱՏՀԿ), շարժունակ արտադրական բազաներ (Ձեռնարկության, արտադրամասերի, կաթսայատների, Էլեկտրոկայանների տեղափոխություն):

3. Շինարարության կենցաղային պայմանների և կենասագործունեությունն ապահովող ստորաբաժանումներ:

ԼՀՀ-ի շինարարության ոլորտում այսահիսի ստորաբաժանումների ձևավորումը կնպաստի որոշակի ռիսկերի նվազմանը: Մեծ դերակատարում ունեն արտադրամոնտաժային համալիրները (ԱՄՀ), որոնց կառուցվածքում ներառվում են կազմակերպաֆինանսական և տեխնիկատնտեսական բաժինները (տես՝ գծապատկեր 3.2.1):

Գծապատկերում ներկայացված է այնպիսի խոշոր շինարարական կազմակերպության տիպային ԱՄՀ-ի կառուցվածքային գծագիրը, ինչպիսին է «Պանտ» ՍՊԸ-ն և որի հիմնական առաքելությունը աշխարհագրորեն հեռու տեղակայված և տեղակայման վայրում գտնվող մեծ շինարարական օբյեկտների կառուցումն է⁸⁷:

Կենտրոնացված կազմակերպական կառուցվածքն առաջարկվել էր «Պանտ» ՍՊԸ-ի դեկավարությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձր օղակի դեկավարներին էին վերապահված շատ լիազորություններ, որոնք անհրաժեշտ են կարևոր որոշումների ընդունման համար: Շինարարության ոլորտում կազմակերպության այսահիսի կառուցվածքը հանգեցնում է տնտեսական ռիսկերի նվազեցմանը: «Պանտ» ՍՊԸ-ի դեկավարությունը կառավարման կառուցվածքի և տեխնոլոգիայի (տես գծապատկեր 3.3.1ընտրության հարցում հաշվի է առել այն, որ կառավարման կենտրոնացված կազմակերպական կառուցվածքներն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ:

⁸⁷ ՕՕԸ «ՊԱՆՏ, «ՄՅ ՍՏՐՈԻՄ ԲՈՒԴՍԸ ԱՐԼԱԽԱ» <http://www.pantltd.com/>

Կառավարման կենտորնացված կազմակերպական կառուցվածքների հիմնական առավելություններն են.

1. կազմակերպության շահերից բխող որոշումների արագ ընդունման հնարավորություն,


2. ընթացիկ որոշումների ընդունում՝ հաշվի առնելով հեռանկարային նպատակները,

3. բարձր որակավորում ունեցող կադրերի ավելի քիչ անհրաժեշտություն:

Կառավարման կենտորնացված կազմակերպական կառուցվածքների թերություններն են.

- ընթացիկ օպերատիվ տեղեկատվության նշանակալի ծավալ, որի վերլուծության հիման վրա կառավարման բարձր օղակները պետք է ընդունեն կառավարչական որոշումներ,
- կառավարման բարձր օղակների մեծ պատասխանատվություն և ֆիզիկական ծանրաբեռնվածություն,
